

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ (ՇՄԱԳ) ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ



Կովկասի բնապահպանական հասարակական կազմակերպությունների ցանց (ԿԲՀԿՑ)

ԳԼԽԱՄԱԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆ ԿԲՀԿՑ

Բնության պահպանության և
հետազոտության կենտրոն, ՀԱՀ
375019, Երևան, Մարշալ
Բաղրամյանի փ.,40

Հեռ.: +3741 51 26 93, 51 26 94
Ֆաքս +3741 51 26 95
Էլ.փոստ: info.armenia@cenn.org

ՎՐԱՍՏԱՆ ԿԲՀԿՑ

0107, Թբիլիսի, Չոնկաձե փ.14^Բ

Հեռ. +99532 92 39 46
Ֆաքս +99532 92 39 47
Էլ.փոստ: info@cenn.org

www.cenn.org

ԱԴՐԲԵՉԱՆ ԿԲՀԿՑ

Բաքու, Ջեյհան Գաջիբեկովի փ.
32ա,բն.30

Հեռ.: +99412 65 33 41
Ֆաքս: +99412 65 33 41
Էլ.փոստ:

info.azerbaijan@cenn.org

Նիդեռլանդների ՇՄԱԳ հանձնաժողով

Արթուր վան Շենդելստրաատ 800
ա/ա 2345
3500 Ուտրեխտ
Նիդեռլանդներ
Հեռ.: +31 (0)30 2347 604
Ֆաքս: +31 (0)30 2304 382
Էլ. Փոստ: akolhoff@eia.nl

ՆԱԽԱԲԱՆ

Այս զեկույցը պատրաստված է Կովկասի բնապահպանական հասարակական կազմակերպությունների /ոչ կառավարական կազմակերպությունների/ ցանցի կողմից /ԿԲՀԿՑ/, որը հանդիսանում է ոչ կառավարական, շահույթ չհետապնդող կազմակերպություն, հիմնված 1998 թ.: Ստեղծման պահից ԿԲՀԿՑ ջանքերը ուղղված են եղել աջակցելու Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի բնապահպանական կազմակերպությունների համագործակցությանը՝ բարելավելով դրանց միջև կապերը:

ԿԲՀԿՑ իր գործունեությամբ փորձում է մեծացնել Կովկասյան տարածաշրջանում գործող բնապահպանական հասարակական կազմակերպությունների, հասարակության հնարավորությունները: ԿԲՀԿՑ նպատակն է ներմուծել և պաշտպանել տարածաշրջանում կայուն զարգացման և կառավարման նոր հայեցակարգը և պրակտիկան:

ԿԲՀԿՑ-ը իր գործունեությամբ փորձում է ուժեղացնել Կովկասյան տարածաշրջանում գործող բնապահպանական ՀԿ-ների հնարավորությունները, աջակցել հասարակության մասնակցությանը և քաղաքացիական հասարակության կայացմանը: ԿԲՀԿՑ նպատակն է ներմուծել և պաշտպանել կայուն զարգացման և արդյունավետ կառավարման սկզբունքները և պրակտիկան տարածաշրջանում: ԿԲՀԿՑ գիտակցում է, որ Հարավային Կովկասի պետությունները ընդհանրություններ չատ ունեն և պետք է միասին գործեն: Սա առանձնապես վերաբերվում է տարածաշրջանի շրջակա միջավայրին: Մենք անկախ ենք մեր ընդհանուր նպատակին հասնելու գործում, այն է՝ աջակցել շրջակա միջավայրի պահպանությանը, կայուն զարգացմանը, տեղեկատվության փոխանակմանը, օրենսդրության ներդաշնակեցմանը միջազգային և մասնավորապես Եվրոպական ստանդարդներին: Սա պետք է լինի մեր ջանքերի հաջողության անկյունաքարերից մեկը:

ԿԲՀԿՑ լիահույս է, որ տվյալ հրապարակումը կներդնի իր նշանակալից լուծման այս նպատակի նվաճման գործում: ԿԲՀԿՑ գործունեության հիմնական ուղղություններից է Հարավային Կովկասի երկրներում ՇՄԱԳ համակարգի կատարելագործումը: ՇՄԱԳ համակարգի արդյունավետության բարձրացմանը, Կովկասում անդրսահմանային համագործակցությանը և կայուն զարգացմանը աջակցելու համար ԿԲՀԿՑ-ը Նիդեռլանդների ՇՄԱԳ Հանձնաժողովի անմիջական մասնակցությամբ և խորհրդակցությամբ իրականացրել է «ՇՄԱԳ համակարգի արդյունավետության գնահատումը Հարավային Կովկասում» նախագիծը: Նիդեռլանդների ՇՄԱԳ Հանձնաժողովը անկախ կառույց է, որն իրականացնում է խորհրդատվություն ՇՄԱԳ համակարգի վերաբերյալ և նպատակաուղղված է աջակցելու տարբեր երկրներում ՇՄԱԳ արդյունավետ համակարգի կայացմանը որպես կայուն զարգացման և աղքատության նվազեցման միջոց:

Նախագիծն ուղղված էր պարզելու և գնահատելու ՇՄԱԳ համակարգի կարիքները և բացթողումները Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում, ինչպես նաև ՇՄԱԳ համակարգի բարելավման նպատակով մշակելու համապատասխան միջոցառումներ: Այն իրականացվել է 2003 թ. սեպտեմբերից մինչև 2004 թ. մայիսը Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի միջազգային խմբի ընդհանուր ջանքերով:

Ներկայացվող հաշվետվությունը Հարավային Կովկասի երեք երկրների՝ Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի ՇՄԱԳ համակարգերը ներդաշնակեցնելու երեկից իրականացված առաջին փորձն է: ԿԲՀԿՑ-ը հավատում է, որ այս հրապարակումը օգտակար կլինի Հարավային Կովկասի երկրների կառավարությունների, բնապահպանական գործունեությամբ զբաղվողների, իրավաբանների, հասարակության համար, որոնք շահագրգիռ են այս երկրներում բնապահպանական խնդիրների լուծման և կառավարման համակարգի բարելավման հարցերում:

ԿԲՀԿՑ-ը իր խորին երախտագիտությունն է հայտնում Նիդեռլանդների քաղաքաշինության, տարածքային պլանավորման և շրջակա միջավայրի հարցերով Պետական Քարտուղարին՝ Հարավային Կովկասի երկրների ՇՄԱԳ համակարգերի կատարելագործման գործընթացին իր

մասնակցության պատրաստակամության և նախագծի ֆինանսավորման պայմաններ ստեղծելու համար: Մենք բարձր ենք գնահատում Նիդեռլանդների ՇՄԱԳ Հանձնաժողովի բարյացակամ օգնությունը և արժեքավոր խորհրդատվությունը նախագծի իրականացման ընթացքում:

ԿԲՀԿՑ-ը երախտապարտ է նաև Հարավային Կովկասի երկրների՝ Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի բնապահպանության նախարարություններին, խորհրդատվական ընկերություններին, միջազգային կազմակերպություններին, ինչպես նաև ՇՄԱԳ գործընթացին մասնակից բոլոր շահառուներին՝ օգնության և տեղեկատվության տրամադրման համար:

ԿԲՀԿՑ-ը անկեղծորեն շնորհակալություն է հայտնում հարցումների և խորհրդակցությունների մասնակիցներին, բոլոր նրանց, ովքեր մասնակցել են նախագծի նախապատրաստման աշխատանքներին: ԿԲՀԿՑ-ը հատկապես երախտապարտ է ազգային փորձագետներին՝

Լեյլի Բեկթաշի-Բրաուն /Բնապահպանական գիտություններ և քաղաքականություն, գիտ,թեկնածու/
- Ադրբեջան

Վռան Թևոսյան /Բնապահպանական կառավարում և քաղաքականություն/ - Հայաստան
Քեթի Գուջարաիժե /Բնապահպանական կառավարում և քաղաքականություն, գիտ,թեկնածու / -
Վրաստան

Նանա Ջանաշիա

Գործադիր տնօրեն

ԿԲՀԿՑ - Կովկասի բնապահպանական հասարակական կազմակերպությունների ցանց:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1	Ներածություն.....	12
1.1	<i>Հետազոտության նպատակը</i>	12
1.2	<i>Մեթոդաբանությունը</i>	12
2	Երկրի բնութագիրը.....	13
3	ՇՄԱԳ Օրենսդրական շրջանակները.....	15
3.1	<i>ՇՄԱԳ Հայկական համակարգի զարգացման պատմությունը</i>	15
3.2	<i>ՇՄԱԳ վերաբերյալ պետական հրավական ակտերը</i>	15
3.3	<i>ՇՄԱՓ առնչվող ՀՀ այլ օրենքներ</i>	21
3.4	<i>Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատմանը վերաբերող միջազգային հրավական ակտերը</i>	27
4	Վարչական կառուցվածքը.....	29
4.1	<i>ՇՄԱԳ գործընթացի շահառուները՝ համաձայն ՇՄԱՓ մասին օրենքի</i>	29
4.2	<i>Շահառուների դերերը և պարտականությունները</i>	29
5	ՇՄԱԳ գործընթացը Հայաստանում. օրենսդրություն և պրակտիկա.....	31
5.1	<i>Օրենսդրություն</i>	31
5.1.1	<i>ՇՄԱՓ մասին օրենքի նպատակները և սկզբունքները</i>	31
5.1.2	<i>ՇՄԱՓ նպատակները</i>	31
5.2	<i>ՇՄԱԳ փուլերը</i>	31
5.3	<i>Փորձաքննության համար անհրաժեշտ փաստաթղթերը /Reporting/</i> ..	33
5.4	<i>Ընտրություն /Screening/</i>	34
5.5	<i>Որոշումների ընդունում</i>	34
5.6	<i>Մոնիտորինգ, հսկողություն և վերահսկողություն</i>	35
5.7	<i>ՇՄԱԳ-ից ազատում</i>	36
5.8	<i>Խախտման համար պատասխանատվություն</i>	36
5.9	<i>Անդրսահմանային ենթատեքստ</i>	36
5.10	<i>Հասարակության մասնակցությունը</i>	36
6	Հայաստանի ՇՄԱԳ համակարգի արդյունավետության վերլուծությունը.....	37
6.1	<i>Արտաքին գործոնները</i>	37
6.1.1.	<i>Հասարակության ժողովրդավարացումը</i>	37
6.1.2.	<i>Պետական կառավարման համակարգի արդյունավետությունը</i>	38
6.1.3.	<i>Կոռուպցիան</i>	38
6.1.4.	<i>Տնտեսական իրավիճակը</i>	39
6.1.5.	<i>Հասարակության մասնակցությունը</i>	40
6.2	<i>Արտաքին գործոններ</i>	41
6.2.1.	<i>ՇՄԱՓ ընթացակարգը</i>	41
6.2.2	<i>Ընտրություն /Screening/</i>	42
6.2.3	<i>Գնահատման նախնական փուլ /Scoping/</i>	43
6.2.4	<i>Հաշվետվությունները և քննում</i>	43
6.2.5	<i>Այլընտրանքների քննարկում</i>	46
6.2.6	<i>Մոնիտորինգ և հսկողություն</i>	46
6.2.7	<i>Լիցենզավորում և հարկադրանք</i>	47

6.3	Հիմնական շահառուները.....	49
6.3.1	Որոշում կայացնողներ.....	49
6.3.2	ՇՄԱՓ մասնակիցները.....	51
6.3.3	Քաղաքացիական հասարակությունը՝ բնակչությունը և ՀԿ-ները.....	52
6.4	Վճարման կարգը.....	53
6.5	ՇՄԱՓ ներկայացրած նախագծերի քանակը և վերլուծությունը.....	54
6.6	Վերլուծության ամփոփում.....	54
7	Շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատում /ՇՄԱՌԳ/.....	57
8	Երկրի ՇՄԱԳ համակարգը և Եվրամիության ստանդարտների հետ ներդաշնակելու հնարավորությունները.....	58
9	Եզրակացություններ և առաջարկություններ.....	61
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	63

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՔԱՎ	Քաղաքացիական ավիացիայի վարչություն
ԿԲՀԿՑ	Կովկասյան բնապահպանական հասարակական կազմակերպությունների ցանց
ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՇՄԱՓ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն
ԵԸ	Եվրոպական Ընկերակցություն
ԵՏԸ	Եվրոպական տնտեսական ընկերակցություն
ԵՄ	Եվրոպական Միություն
ՍՄԿ	Ստանդարդների միջազգային կազմակերպություն
ԳՕՍՏ	Նախկին ԽՍՀՄ պետական ստանդարդներ
ԲԸ	Բաժնետիրական ընկերություն
ԲՆ	Բնապահպանության նախարարություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՇՄԱՌԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարության գնահատում
ՊԲՓ	Պետական բնապահպանական փորձաքննություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՄԱԶԾ	Միացյալ ազգերի զարգացման ծրագիր
ԽՍՀՄ	Խորհրդային սոցիալիստական հանրապետությունների միություն
ԱՀԿ	Առևտրի համաշխարհային կազմակերպություն

ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

90-ականներին տեղի ունեցած անկախացումից հետո Հայաստանում սկսվեց պետական կառավարման համակարգի վերափոխման գործընթացը: Արագացված կարգով ընդունվում էին հասարակական հարաբերությունները կարգավորող հաճախ դեկլարատիվ բնույթի օրենքներ, որոնք հիմնված էին մինչև այժմ գործող խորհրդային ժամանակի ստանդարտների և մոտեցումների վրա: Արագորեն փոխվում էր կառավարման համակարգը՝ կենտրոնական և շրջանային իշխանության կառույցները, ընտրական մարմինները և այլն: Ընդունվեց կառավարման նախագահական ձևը:

Եական դեր խաղացին բազմաթիվ դրամաշնորհները և վարկերը, որոնք դոնորների կողմից տրվում էին «կառուցվածքային փոփոխությունների» համար, այդ թվում՝ բնապահպանության ասպարեզում: Իրականացվեց ֆունկցիաների կուտակում, որի արդյունքում բնապահպանության նախարարությունում /ԲՆ/ համատեղվում էին վերահսկող և գործադիր ֆունկցիաները: Մինչև նույն ժամանակ այդ նույն ֆունկցիաների մի մասը կատարում էին նաև այլ նախարարություններ և գերատեսչություններ:

Հետագայում միջազգային և սեփական փորձի ուսումնասիրության արդյունքում ռազմավարությունը փոխվեց: Բուռն ազատականացման փուլից հետո եկավ տնտեսությունում և հասարակական հարաբերություններում պետական կարգավորման անհրաժեշտության և բնապահպանական խնդիրներում կանխարգելման քաղաքականության նախապատվության գիտակցումը: Աստիճանաբար կյանքի էին կոչվում միջազգային կոնվենցիաների և համաձայնագրերի պահանջները: Ավելի մեծ նշանակություն ստացան զարգացման և ՀԿ-ների ֆինանսավորման միջազգային ծրագրերը, հատկապես Օրիուսի կոնվենցիայի պահանջների իրականացման հետ կապված: Թեկուզ առայժմ Հայաստանը չի վավերացրել որոշ միջազգային կոնվենցիաներ, սակայն դրանց ընդհանուր ազդեցությունը զգալի է, և զարգացման ռազմավարությունը փոխվել է:

Բնապահպանական հարցերում համակարգված մոտեցման և պարզունակ վերահսկողությունից կանխարգելման քաղաքականությանը անցման անհրաժեշտության գիտակցումը իր արտահայտումը ստացավ 1995 թ. ընդունված ՇՄԱՓ մասին օրենքում:

Ինչպես ԱՊՀ երկրների մեծամասնությունում, Հայաստանում նույնպես որպես ՇՄԱԳ համակարգի հիմնական տարր ընդունվել է բնապահպանական փորձաքննությունը կամ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությունը:

Գործող օրենքը հարակից օրենքների և ենթաօրենսդրական ակտերի հետ միասին թույլ տվեց հիմնել շրջակա միջավայրի և բնակչության առողջության վրա նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության գնահատման համակարգ: Այս ակտերի հիման վրա գործում են բազմաթիվ պետական և ինքնակառավարման մարմինների կազմի մեջ մտնող կառույցներ և բազմաթիվ ՀԿ-ներ: ՇՄԱԳ համակարգի ներդրումը թույլ տվեց որոշ չափով բարելավել նախագծերի և հատկապես ծրագրերի որակը, մասնավորապես՝ տարածքային ծրագրերի: Այս կապակցությամբ անհրաժեշտ է հիշատակել Սևանի տարածքային, Սևանի ազգային պարկի, հատուկ պահպանվող տարածքների և ջրային տնտեսության զարգացման ծրագրերի բազմաթիվ քննարկումները:

Օրենքը և հարակից ակտերը սահմանում են գործընթացի վարչական մասը՝ լիազորված պետական մարմինը և նրա պարտականությունները, ինչպես նաև ՇՄԱՓ ընթացակարգի ընդհանուր դրույթները: Լիազորված մարմինը /ԲՆ/ ՇՄԱՓ գործընթացի իրականացման նպատակով իր կազմում հիմնել է հատուկ ստորաբաժանում՝ «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ: Սակայն ՇՄԱՓ գործընթացի իրականացման մանրամասն կարգը հաստատված է միայն ԲՆ կողմից, ինչը եականորեն մվազեցնում է ՇՄԱՓ նշանակությունը:

Օրենքը սահմանում է ՇՄԱՓ երկու փուլ: Առաջին փուլում կատարվում է փորձաքննության ենթակա նախատեսվող գործունեությունների նախագծերի կամ հայտերի ընտրություն: Օրենքում բերված է փորձաքննությանը ենթակա գործունեության տեսակների ցանկը, սակայն այդ գործունեությունների սահմանային չափերի որոշումը վերապահված է կառավարությանը: Բացի այդ, օրենքով նախատեսված են այն դեպքերը, երբ տեղական ինքնակառավարման մարմինները, ՀԿ-ները և պետական այլ կառույցներ նույնպես կարող են փորձաքննության իրականացման առաջարկություններ ներկայացնել:

Օրենքով նախատեսված է հասարակության ներգրավումը ՇՄԱԳ իրականացման բոլոր փուլերում. հայտերի նախնական քննարկման /ընտրության/ փուլում, նախատեսվող գործունեության ցուցանիշների և շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության փաստաթղթերի ուսումնասիրության փուլում, ինչպես նաև եզրակացության նախագծի քննարկման փուլում: Սակայն օրենքի շատ դրույթների անհստակությունը, հասարակության կողմից նախագծերի քննարկման և վերջնական որոշման իրական վերահսկողության մեխանիզմի բացակայությունը թույլ չեն տալիս արդյունավետ կերպով կիրառել օրենքի այդ դրույթները:

Բնապահպանական գործունեության տարբեր բնագավառները կարգավորող բազմաթիվ այլ օրենքներ նույնպես ՇՄԱԳ համակարգի մաս են կազմում, այդ թվում՝ ջրային, հողային, անտառային օրենսգրքերը, մթնոլորտային օդի, բուսական և կենդանական աշխարհի պահպանության մասին օրենքները, բնակչության առողջության, քաղաքաշինության և այլ հարցեր կարգավորող օրենքներ: Նշված օրենսդրության պահանջների կատարման ապահովման նպատակով վարչական և քրեական օրենսգրքերում կատարվել են բազմաթիվ լրացումներ:

Սակայն չնայած բազմաթիվ օրենսդրական ակտերի առկայությանը, ընդգրկուն և լիարժեք ՇՄԱՓ համակարգ դեռ չի ստեղծվել: ՇՄԱՓ արդյունավետության վրա բացասաբար են ազդում նաև բնակչության ցածր կենսամակարդակը, շատ պետական պաշտոնյաների անիրազեկությունը, կոռուպցիան, ինչը բնորոշ է անցումային տնտեսության երկրներին:

ՇՄԱԳ համակարգի հետագա զարգացումը մեծապես կապված է երկրի օրենսդրության և եվրոպական ստանդարտների ներդաշնակեցման հետ ինչպես անմիջապես ՇՄԱԳ համակարգում, այնպես էլ երկրի պետական և հասարակական ինստիտուտների ընդհանուր ժողովրդավարացման ենթատեքստում: Կարևոր նշանակություն ունի այնպիսի հիմնարար միջազգային կոնվենցիաների պահանջների ներդրումը, ինչպիսին են. «Կենսաբանական բազմազանության մասին», «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման», «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիաները, «Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիան և դրան կից «Ռազմավարական բնապահպանական գնահատման մասին» արձանագրությունը և այլն, անկախ Հայաստանի կողմից վավերացված են, թե ոչ:

Առանձնակի դեր կարող է խաղալ Օրիոսի Կոնվենցիան, քանի որ հասարակության ակտիվ մասնակցությունը կարող է ՇՄԱՓ կազմակերպման և իրականացման հարցերում պետական կառավարման ամբողջ համակարգի արդյունավետության, թափանցիկության և հսկելիության երաշխիքը լինել: Հենց հասարակության լիարժեք մասնակցությունը կարող է ապահովել բնապահպանական փորձաքննության սկզբունքների՝ հուսալիության, համալիրության, ժողովրդավարության պահպանումը:

ՇՄԱՓ արդյունավետության բարձրացման ուղղության հետագա քայլերը պետք է ներառեն գործընթացի մասնակիցների գործողությունների հստակ տարանջատումը, պետական մարմինների ֆունկցիաների կրկնության բացառումը, որակյալ մասնագետների

պատրաստումը ինչպես պետական մարմինների, այնպես էլ ՇՄԱԳ զեկույցները մշակող կազմակերպությունների համար:

Օրենսդրության կատարելագործման գործընթացը պետք է հաշվի առնի ոչ միայն ընդունված միջազգային ստանդարտները, այլև տարածաշրջանի երկրների յուրահատկությունները, չլուծված խնդիրների և հակամարտությունների առկայությունը, տնտեսության անցումային բնույթը և նման տարբեր գործոններ: Հայաստանի պարագայում կարևոր նշանակություն կարող է ունենալ նոր սահմանադրության ընդունումը:

Անհրաժեշտ է նաև նշել եվրոպական և մյուս միջազգային կառույցների՝ տարածաշրջանային ծրագրերի իրականացմանը ուղղված ջանքերը, որոնք նպատակ ունեն նմանացնել Հարավային Կովկասի երկրների օրենսդրությունը, կոորդինացնել անդրսահմանային ազդեցության կանխարգելման և նվազեցման գործողությունները, ստեղծել միասնական տեղետվական համակարգեր և այլն: Այս նպատակին է ծառայում ԿԲՀԿՑ գործունեությունը և ԿԲՀԿՑ կողմից իրականացվող սույն ծրագիրը:

Պատահական չէ, որ ներկայումս միջազգային կազմակերպությունների ֆինանսական աջակցությամբ հենց ՀԿ-ներն են ակտիվորեն քննարկում ՇՄԱԳ մասի նոր օրենքի սկզբունքները և հիմնական դրույթները:

1 Ներածություն

1.1 Հետազոտության նպատակը

Տնտեսական գործունեության յուրաքանչյուր դրսևորում այս կամ այն կերպ ազդում է շրջակա միջավայրի վրա: Կլիմայի գլոբալ փոփոխությունները, օզոնային շերտի քայքայումը, հողերի դեգրադացիան, կենդանական և բուսական աշխարհի բազմաթիվ տեսակների ոչնչացումը, բնական միջավայրի բոլոր տարրերի աղտոտումը անշուշտ մարդու տնտեսական գործունեության հետևանքն են: Այս հարցերի լուծումը մարդկության առաջնահերթ խնդիրն է: Թերևս բնապահպանական քաղաքականությունը պետք է հիմնված լինի շրջակա միջավայրի վրա տնտեսական գործունեության վնասակար ազդեցության կանխման կամ հնարավոր նվազեցման սկզբունքների վրա: Հենց այս խնդրի լուծմանն է նպատակաուղղված ՇՄԱԳ համակարգը:

ՇՄԱԳ համակարգի առանձին հատվածները ներդրվել են դեռ նախկին ԽՍՀՄ-ում նախորդ դարի 60-ական և 70-ական թվականներին: ԽՍՀՄ փլուզումից հետո Հարավային Կովկասի երկրները սկսեցին բարեփոխել գոյություն ունեցող տնտեսական համակարգը և տարբեր հետևողականությամբ ընդունել ՇՄԱԳ համակարգի իրավական դաշտը կարգավորող օրենքներ: Սակայն որպես անցման շրջանի օրենքներ դրանք ներառել են նաև այդ շրջանի բոլոր հակասությունները, և կիրառման ընթացքում երևան եկան այդ օրենքների դրույթների անկատարությունը և ներգործության մեխանիզմի բացակայությունը:

Հարավային Կովկասի երկրների տնտեսության զարգացման դինամիկայի կայունացման և եվրոպական ընկերակցությանը աստիճանաբար անդամակցելու հետ հրատապ խնդիր է դառնում եվրոպական ստանդարտների հետ ներդաշնակեցումը:

Տվյալ հետազոտության նպատակն է Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի գործող օրենսդրական և նորմատիվային ակտերի, դրանց կիրառման պրակտիկայի ուսումնասիրությունը, դրական և բացասական կողմերի պարզաբանումը, արդյունքների մանրակրկիտ վերլուծությունը և այնպիսի առաջարկությունների մշակումը, որոնք թույլ կտան ընտրել եվրոպական ստանդարտներին համահունչ, բայց և սեփական ազգային, աշխարհագրական ու կլիմայական առանձնահատկությունները հաշվի առնող ՇՄԱԳ զարգացման առավել օպտիմալ ուղին:

1.2 Մեթոդաբանությունը

Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանը գտնվում են նույն տարածաշրջանում և ունեն բազմաթիվ ընդհանուր խնդիրներ, կազմում են մեկ միասնական բնապահպանական տարածք, սակայն այդուհանդերձ ունեն նաև իրենց տնտեսական, աշխարհագրական և այլ առանձնահատկությունները:

Այս նկատառումով երեք երկրներում աշխատել են մասնագետների առանձին խմբեր, որոնց գործողությունները կոորդինացվում էին ԿԲՀԿՑ կողմից՝ հաշվի առնելով տեղային յուրահատկությունները: Զուգահեռաբար ուսումնասիրվել են այն բոլոր փաստաթղթերը և գրականությունը, որը վերաբերվում էր ՇՄԱԳ համակարգին, այդ թվում՝ օրենքներ, խորհրդարանի և կառավարության որոշումներ, գերատեսչական ակտեր, ստանդարտներ, նորմատիվներ, միջազգային համաձայնագրեր և կոնվենցիաներ:

Կուտակված փաստաթղթերը և տեղեկությունները աշխատանքային խմբի մասնագետները դասակարգել և վերլուծել են, ընդ որում՝ արդյունքները քննարկվել են բազմաթիվ ներգրավված անձանց հետ:

Կատարված վերլուծության հիման վրա հստակեցվել է իրավական դաշտի լիարժեքության և արդյունավետության պատկերը, օրենսդրական ակտերի կիրառման պրակտիկան և ներգործության մեխանիզմները, այդ ակտերի թերությունները և բացթողունները, ինչպես նաև կիրառման կարգի խախտումները:

Ուսումնասիրության արդյունքներով մշակվել են առաջարկություններ ՇՄԱԳ համակարգի զարգացման համար և ամփոփիչ հաշվետվություն, որը կլոր սեղանի շուրջ քննարկվել է տարբեր շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Հաշվետվության վերջնական տարբերակը կազմվել է՝ հաշվի առնելով ԿԲՀԿՑ կողողինացիոն խմբի դիտողությունները և առաջարկությունները:

2 Երկրի բնութագիրը

Հայաստանը ազգաբնակչության խտությամբ նախկին խորհրդային հանրապետությունների մեջ երկրորդն էր: Չունենալով ելք դեպի ծով՝ Հայաստանը հյուսիսից սահմանակցում է Վրաստանին, արևելքից՝ Ադրբեջանին, հարավից՝ Իրանին և արևմուտքից՝ Թուրքիային: Բնակչության /3.213.011/ մեծամասնությունը քաղաքաբնակ է, համարյա կեսը բնակվում է մայրաքաղաք Երևանում: Հայաստանի բնակիչների 97% հայեր են, 1,6%՝ քրդեր, 0,8%՝ ռուսներ, 0,6%՝ այլ ազգեր:¹

Պետական լեզուն հայերենն է: Բնակչության շուրջ 40%-ի համար ռուսերենը երկրորդ լեզուն է: Ազգաբնակչության 91% պատկանում են Հայկական Առաքելական Եկեղեցուն: Հայաստանի բնակչության կրթամակարդակը ամենաբարձրերից է տարածաշրջանում /91%/:

Հայաստանը հպարտ է, որ 4-րդ դարի սկզբում /301 թ./ առաջինը պաշտոնապես ընդունեց Քրիստոնեությունը որպես պետական կրոն: Հայաստանի պատմությունը ընդունված է հաշվարկել մեր թվարկությունից առաջ I հազարամյակի կեսերից: Բացառությամբ ինքնավարության մի քանի ժամանակաշրանների, հայ ժողովուրդը, լինելով տարբեր կայսրությունների լծի տակ, կարողացել է պահպանել իր ինքնատիպ ազգային և մշակութային յուրահատկությունները: 1828 թ. Հայաստանը ներառվել է Ռուսաստանի, իսկ 1920թ.՝ ԽՍՀՄ կազմի մեջ / ՄԱԶԾ, 1995թ./:

1991 թ. սեպտեմբերին, մինչև ԽՍՀՄ վերջնական փլուզումը, Հայաստանում անցկացվեց հանրաքվե, որի արդյունքներով հրապարակվեց անկախության հռչակագիրը: 1991 թ. Լեվոն Տեր-Պետրոսյանն ընտրվեց որպես անկախ պետության առաջին նախագահ և 1996 թ. նա վերընտրվեց: Լեռնային Ղարաբաղի հարցում իրականացրած քաղաքականության դեմ տեղի ունեցած բողոքների և ցույցերի արդյունքում՝ 1998թ. հունվարին Լևոն Տեր-Պետրոսյանը հրապարակեց իր հրաժարականը: Նրան փոխարինեց վարչապետ Ռոբերտ Քոչարյանը: 1999թ. հոկտեմբերի 27-ին Ազգային ժողովում տեղի ունեցած սպանություններից հետո երկրում տիրեց անկայունության շրջան, սակայն նախագահ Քոչարյանին հաջողվեց հաղթահարել հուզումները և 2003 թ. նա վերընտրվեց որպես նախագահ /ԱՄՆ պետդեսպարտամենտ, 2004/:

Երկիրը մարդու հիմնարար իրավունքները և ազատություններն ընդգրեց իր ազգային քաղաքականության մեջ: Ստորագրելով մի շարք միջազգային կոնվենցիաներ և համաձայնագրեր՝ Հայաստանն անշեղորեն շարժվում է դեպի ազատ շուկայական տնտեսություն, ընդ որում արդեն սեփականաշնորհվել է հողը, և ավարտին է մոտենում պետական պատկանելիության անշարժ գույքի սեփականաշնորհումը: Սակայն երկիրը ժառանգել է քայքայված, անարդյունավետ և հնացած ազգային տնտեսություն, որը եականորեն տուժել է կենտրոնացված պլանային համակարգի փլուզումից: 1988 թ.

¹ Տվյալները վերցված են 2001 թ. հոկտեմբերին իրականացված մարդահամարի ամփոփիչ հաշվետվությունից /տես՝ ԱՄՆ պետդեսպարտամենտի ինտերնետային կայքը/

երկրաշարժը և 1920 թ. Մոսկվայի կողմից Ադրբեջանին միացված հայաբնակ Լեռնային Ղարաբաղի շուրջ Ադրբեջանի հետ հակամարտությունը խորացրեցին տնտեսական և սոցիալական պրոբլեմները:

Լինելով գերտերության մաս՝ Հայաստանն օգտվում էր բազմաթիվ «հնարավորություններից»: Հայաստանն անկախացավ սահմանափակ և փոքր տարածքով՝ չունենալով իր սեփական վառելիքային և էներգետիկ պաշարները: Երկիրը պետք է գտներ քաղաքական, տնտեսական և սոցիալական խնդիրների իր ուրույն լուծումները:

Մինչև անկախացումը Հայաստանի տնտեսությունը հիմնված էր արդյունաբերական այնպիսի ճյուղերի վրա, ինչպիսին են քիմիական, էլեկտրոնային, մեքենաշինական, սննդարդյունաբերական, սինթետիկ կաուչուկների, թեթև արդյունաբերությունները, որոնք մեծապես կախված էին ներմուծվող հումքից: Գյուղատնտեսությունը մինչև 1991թ. ապահովում էր համախառն արտադրանքի միայն 20%-ը և զբաղվածության 10%-ը: Հայաստանի հանքարդյունաբերությունը արտադրում է պղինձ, ցինկ, ոսկի և կապար: Էներգիայի ճնշող մասն արտադրվում է Ռուսաստանից ներմուծվող վառելիքից, այդ թվում՝ բնական գազից և միջուկային վառելիքից /հայկական ատոմակայանում/: Էներգիայի հիմնական տեղական աղբյուր է հանդիսանում հիդրոէներգետիկան: Ածխի, գազի և նավթի փոքր պաշարները չեն արդյունահանվում /ՄԱԶԾ, 2001թ.:

Մինչև 1994թ. Հայաստանում ծանր սոցիալական և տնտեսական իրավիճակը պայմանավորված էր Սպիտակի երկրաշարժի հետևանքներով, ԽՍՀՄ փլուզմամբ և շրջափակումով, աշխարհաքաղաքական դիրքով, ինչպես նաև բնական պաշարների սակավությամբ: 1994 թ. սկսել է սոցիալական և տնտեսական իրավիճակի կայունացման շրջանը: Ներկայումս նկատելի է դանդաղ և կայուն զարգացման միտումը: Ստորև բերված է տնտեսության բազային ճյուղերի զարգացման նկարագրությունը:

Էներգետիկա - ամբողջ էներգիայի 50%-ն արտադրված է ջերմաէլեկտրակայաններում, 1/3 մասը՝ հայկական ատոմակայանում, մնացածը՝ ջրէլեկտրակայաններում: Արտադրված էներգիան լիովին բավարարում է երկրի պահանջները:

Արդյունաբերություն - միջազգային ներդրումներից և արտաքին շուկայից կախվածության շնորհիվ մինչև 2000 թ. արդյունաբերությունը կայուն չէր զարգանում: Սկսած 2000թ. արդյունաբերության զարգացման ցուցանիշը կազմում է 4%:

Գյուղատնտեսություն - անկախության նվաճումից հետո գյուղատնտեսական հողերի 2/3-ը սեփականաշնորհվեց, և շուկայական տնտեսությանը անցման և գյուղատնտեսության բարեփոխման համատեքստում ստեղծվեցին մոտ 350 հազար ֆերմերային տնտեսություններ: Սակայն մինչև 2000թ. գյուղատնտեսական արտադրանքի մրցունակությունը ցածր էր: Ներկայումս նկատվում է մրցունակության աճ:

Տրանսպորտ և կապ - բեռնափոխադրումների ծավալների, տրանսպորտային միջոցների փոփոխականության պատճառով տրանսպորտային համակարգի զարգացումը նույնպես կայուն չէ: Վերջին տարիներին կապի և հաղորդակցության ծառայությունների ասպարեզում տեղի է ունենում նկատելի աշխուժացում՝ շնորհիվ համակարգչային ինժեներական համակարգերի ներմուծման:

Շինարարություն - նախորդ ժամանակաշրջանում բնակարանային շինարարության ծավալները նվազել էին: Սակայն սկսած 2000թ. շնորհիվ քաղաքացիների միջոցների ներդրման շինարարության ասպարեզում նույնպես նկատվում է աշխուժացում:

Սպառողական և զբաղվածության շուկաներ - Սպառողական և զբաղվածության շուկաների վիճակը սերտորեն կապված է աշխատատեղերի և բնակչության գնողունակության հետ՝

նույապես ելնելով վերոհիշյալ բնագավառների զարգացման անկայուն իրավիճակից և սկսած 2000թ. աճի տեմպերից:

Առողջապահություն - տնտեսության անկումը, շրջակա միջավայրի վիճակը և անցումը դեպի ազատ շուկա պատճառ հանդիսացան բժշկական ծառայությունների նվազման և որպես հետևանք՝ բնակչության առողջության վատթարացման:

3 ՇՄԱԳ Օրենսդրական շրջանակները

3.1 ՇՄԱԳ Հայկական համակարգի զարգացման պատմությունը

Մինչև ԽՍՀՄ փլուզումը Հայաստանի շրջակա միջավայրի և բնապահպանության բնագավառները կարգավորվում էին այնպիսի խորհրդային օրենքներով, ինչպիսիք էին հողի մասին օրենքը, Անտառի մասին օրենքը, Ջրի մասին օրենքը, Կենդանական աշխարհի պահպանման մասին օրենքը և այլն:

Չկար ոչ մի վարչական մարմին, որ պատասխանատու էր բնության պահպանության համար, և ոչ մի օրենք չէր կարգավորում այս բնագավառի հարցերը: Ազգային օրենքները պարզապես արտագրվում էին կենտրոնական օրենսդրությունից: 1988 թ. հիմնադրվեց Բնության Պահպանության Պետական Կոմիտեն, որը պատասխանատու էր բնության պահպանության և ղեկավարման համար: 1992 թ. հիմնադրվեց ՀՀ Բնապահպանության և Շրջակա Միջավայրի պահպանության Նախարարությունը, և այլ օրենքների և իրավական ակտերի հետ՝ ՀՀ ընդունեց «Բնության պահպանության մասին ՀՀ օրենսդրության հիմունքները», որը դրեց այս բնագավառի ապագա օրենքների և քաղաքականության հիմքերը: Օրենքում էր, որ առաջին անգամ նշվեց պետական բնապահպանական փորձաքննության անհրաժեշտությունը:

3.2 ՇՄԱԳ վերաբերյալ պետական իրավական ակտերը

ՇՄԱՓ և ՇՄԱԳ գործընթացը, բացի «ՇՄԱՓ մասին» ՀՀ օրենքից, կանոնակարգվում է նաև ՀՀ այլ օրենքներով, մասնավորապես՝ բնապահպանության ոլորտը կանոնակարգող օրենքներով: Այսպես՝

Դեռևս 1991 թ. հուլիսի 9-ին ՀՀ Գերագույն Խորհրդի կողմից ընդունված «Բնության պահպանության մասին օրենսդրության հիմունքները» (այսուհետև՝ ՀԻՄՈՒՆԷՔՆԵՐ) որպես պարտադիր պահանջ ամրագրել է շրջակա միջավայրի վրա ազդեցության պարտադիր պետական փորձաքննության ինստիտուտը՝ այն անվանելով «պետական էկոլոգիական փորձաքննություն»:

Հիմունքների 16-րդ հոդվածը սահմանում է, որ պետական էկոլոգիական փորձաքննությունը բնապահպանական պարտադիր միջոցառում է, որի նպատակն է ստուգել քաղաքաշինական, տնտեսական և այլ գործունեության համապատասխանությունը բնակչության էկոլոգիական պահանջներին, որոշել նախատեսված և իրականացվող գործունեության էկոլոգիական վտանգավորության մակարդակը, ինչը պետք է կատարվի մասնագետների և հասարակության ներկայացուցիչների լայն ընդգրկմամբ: Հոդվածի դրական կողմերից մեկն այն է, որ այն ամրագրում է պետական փորձաքննությանը մասնակցելու համար օտարերկրյա փորձագետներ իրավիճակում դրույթը:

Հիմունքները նույնպես, ինչպես և Օրենքը, նախատեսում է, որ «արգելվում է նախագծի իրականացումն առանց փորձաքննության դրական եզրակացության»: Սակայն Հիմունքները, լինելով այս ոլորտի համար սոսկ ընդհանուր հիմունքային դրույթներ սահմանող իրավական փաստաթուղթ, չի կանոնակարգում և չի մանրամասնում պետական էկոլոգիական փորձաքննության գործընթացը սկզբից մինչև վերջ և այդ առումով ընդամենը հղում է

կատարում «ՀՀ էկոլոգիական փորձաքննության մասին» օրենքին, որը ներկայումս գործող «ՇՄԱՓ մասին» ՀՀ օրենքն է:

1995 թ. ՀՀ Ազգային ժողովն ընդունեց ՇՄԱՓ մասին օրենքը: Հիմունքների դրույթները նոր ընդունված օրենքի դրույթներին համապատասխանեցնելու համար 1996 թ. ապրիլի 2-ի օրենքով Հիմունքների 16-րդ հոդվածը վերանայվեց: 16-րդ հոդվածի լրացված տարբերակը առաջին անգամ օգտագործում է «ՇՄԱՓ» տերմինը, որը սահմանվում է որպես պետության կողմից կատարված պարտադիր գործողություն: Գործողության նպատակն է՝ սահմանել, կանխարգելել և նվազագույնի հասցնել նախատեսված տնտեսական, սոցիալական և այլ գործունեությունների ազդեցությունը (կառուցում, վերակառուցում, ընդարձակում, նորացում, լուծարում և այլն):

Բնապահպանական փորձաքննությունը, ինչպես նաև ՇՄԱԳ Հայաստանում կարգավորվում են ՇՄԱՓ մասին օրենքով, այլ իրավական ակտերով, ինչպես նաև միջազգային համաձայնագրերով, որոնք ներկայացված են 6.3 և 8.1 աղյուսակներում:

Ինչպես բնապահպանական փորձաքննության այնպես էլ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը ՀՀ-ում կարգավորվում է «ՇՄԱՓ մասին» ՀՀ օրենքով (այսուհետև՝ Օրենք), իրավական այլ ակտերով, ինչպես նաև միջազգային համաձայնագրերով:

ՇՄԱՓ մասին օրենքը

Հիմնվելով սահմանադրական պահանջի վրա՝ 1995 թ. ընդունվեց ՇՄԱՓ մասին օրենքը, որն առաջին առանձին օրենք էր ՇՄԱՓ մասին: Նշված օրենքը կարգավորում է նախատեսված գործունեությունների ՇՄԱՓ իրավական, տնտեսական և կազմակերպչական հիմքերը: Օրենքի հիմնական նպատակն է՝ կարգավորել այն նախատեսված գործունեությունները, որոնք հակված են ազդելու շրջակա միջավայրի վրա: Հայաստանի իրավական համակարգում առաջին անգամ այս փաստաթուղթն պարունակում է «ազդակիր համայնքների» հասկացությունը, ինչպես նաև հասարակական լուսմների հասկացությունը, որը հիմնավորում է բնապահպանական հարցերի մասին իրազեկությունը բարձրացնելու միջոցով բնապահպանական հարցերում որոշումներ կայացնելու մեջ հասարակության մասնակցությունը: Օրենքը ներկայացնում է այն գործունեությունների ցուցակը, որոնք ՇՄԱՓ առարկա են:

ա) էներգետիկայի ոլորտում

- ատոմակայանների և ատոմային ռեակտորով այլ կառույցներ.
- ջերմային էլեկտրակայաններ, գոլորշու և տաք ջրի արտադրության կայանքներ.
- հիդրոէլեկտրակայաններ, այլընտրանքային էներգետիկայի կայաններ.
- երկրաջերմային կայաններ.
- միջուկային վառելիքի արտադրության և հարստացման վերափոխիչ կայանքներ.
- միջուկային վառելիքի միջանկյալ պահպանման կառույցներ.
- բարձր ռադիոակտիվության թափոնների վերամշակման ու վերջնական տեղադրման կառույցներ.
- գործող և փակված ատոմակայանների և ռադիոնուկլիդներ օգտագործող կայանքների ռադիոակտիվ թափոնների վերամշակում և թաղում:

բ) Լեռնահանքային արդյունաբերության ոլորտում

- հանքանյութերի արդյունահանում և մշակում.
- ածխի, նավթի և բնական գազի հանույթ և վերամշակում.
- ուրանի հանքաքարի հանույթ և վերամշակում, կոշտ և հեղուկ թափոնների վնասազերծում և հանքավայրի վերականգնում:

գ) Քիմիական արդյունաբերության ոլորտում

- կաուչուկների, ռետինատեխնիկական իրերի և այլ օրգանական նյութերի արտադրություն և վերամշակում.
- նավթավերամշակման արտադրություն.
- ածխածնային թթուների, ալկալիների և այլ նյութերի արտադրություն.
- սահմանային չափը գերազանցող լվացող, մաքրող և կենցաղային քիմիայի այլ նյութերի արտադրություն.
- թունավոր և դեղագործական նյութերի արտադրություն.
- թունաքիմիկատների և քիմիական պարատանյութերի արտադրություն:

դ) Շինանյութերի արդյունաբերության ոլորտում

- ցեմենտի, կրաքարի, գաջի արտադրություն.
- սալիկների, շինարարական քարերի, երկաթբետոնե կառուցվածքների և շինարարական այլ ապրանքների արտադրություն:

ե) Մետալուրգիայի ոլորտում

- երկաթի, պողպատի և գունավոր մետաղների արտադրություն և մշակում.
- սահմանային չափը գերազանցող մետաղների մակերեսային մշակում:

զ) Էլեկտրատեխնիկական, ռադիոէլեկտրոնային արտադրության ոլորտում

- սահմանային չափը գերազանցող նախատեսվող գործունեություններ:

է) Փայտի և թղթի արդյունաբերության ոլորտում

- սահմանային չափը գերազանցող նախատեսվող գործունեություններ:

ը) Թեթև արդյունաբերության ոլորտում

- սահմանային չափը գերազանցող մանածագործական, գործվածքային, կոշիկի և այլ արտադրություն:

թ) Սննդի արդյունաբերության, ձկնային տնտեսության ոլորտում

- սահմանային չափը գերազանցող նախատեսվող գործունեություններ:

ժ) Քաղաքաշինության ոլորտում

- սահմանային չափը գերազանցող շենքեր, կառույցներ, համալիրներ և այլ նախատեսվող գործունեություններ:

ժա) Քաղաքային տնտեսության ոլորտում

- Կեղտաջրերի մաքրման կայաններ:

ժբ) Թափոնների օգտագործման ոլորտում

- վտանգավոր և այլ թափոնների հեռացում կամ այդ նպատակով մշակում.

- թափոնների հեռացման օբյեկտներ:

ժգ) Բնության պահպանության ոլորտում

- մարդու ազդեցությամբ խախտված բնական էկոհամակարգերի բարելավում և վերականգնում.
- կենդանիների և բույսերի նոր տեսակների ներմուծում:

ժդ) գյուղատնտեսության ոլորտում

- սահմանային չափը գերազանցող տարածքի բարելավում (այդ թվում՝ աղակալած հողերի բարելավում, ոռոգման և չորացման ցանցերի կառուցում, ճահիճների չորացում, բերրի հողի պահպանում էրոզիայից, աղակալումից և որակի փոփոխությունից):

ժե) Անտառային տնտեսության ոլորտում

- անտառվերականգնում.
- անտառի որակական կազմի բարելավում:

ժզ) Ջրային տնտեսության ոլորտում

- ջրամբարներ ու պատվարներ, ամբարտակներ, խոշոր ջրանցքներ, մղիչ կայաններ և այլ ջրատնտեսական կառույցներ.
- ստորերկրյա ջրերի արդյունահանում:

ժտ) Ենթակառույցների ոլորտում

- մայրուղիների, թունելների, կամուրջների, մետրոպոլիտենի, երկաթուղիների, օդանավակայանների և սահմանային չափը գերազանցող ճանապարհների կառուցում.
- սահմանային չափը գերազանցող գազի, նավթի, գոլորշու և ջրատար խողովակաշարեր, ներառյալ դրանց զուգակցող սարքավորումները (մղիչներ, փոխարկման և ճնշումային կայաններ).
- սահմանային չափը գերազանցող էլեկտրահաղորդման գծեր.
- սահմանային չափը գերազանցող վառելանյութերի (այդ թվում՝ բնական և այլ գազերի) և քիմիկատների վերգետնյա և ստորգետնյա պահեստարաններ.
- ինժեներական պաշտպանիչ կառույցներ.
- գերիզոր կապի միջոցներ:

ժր) Սպասարկման ոլորտում

- սահմանային չափը գերազանցող առևտրի կենտրոններ և տոնավաճառներ.
- սահմանային չափը գերազանցող հյուրանոցային և զբոսաշրջիկային համալիրներ.
- բենզակայաններ.
- սահմանային չափը գերազանցող հասարակական սննդի օբյեկտներ (ռեստորաններ, սրճարաններ և այլն).
- ավտոկայաններ, երկաթուղու կայաններ.
- դիակիզարաններ և գերեզմանոցներ:

ՇՄԱՓ մասին օրենքը կարգավորում է նաև ապագայում նախատեսված բոլոր գործունեությունների ՇՄԱԳ հայեցակարգեր, ծրագրեր, համալիր սխեմաներ, հիմնական գործողությունների պլաններ, ռեզիոնալ պլանավորման փաստաթղթեր և բնական ռեսուրսների շահագործման սխեմաներ:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի՝ ՀՀ կողմից հաստատված միջազգային համաձայնագրերը ազգային օրենսդրական համակարգի բաղկացուցիչ մասն են կազմում և ազգային օրենքների նկատմամբ գերակայություն ունեն: Այսպիսով, ՀՀ ՇՄԱՓ մասին օրենքը և անդրսահմանային համատեքստում ՇՄԱԳ մասին միջազգային կոնվենցիան, ինչպես նաև ՇՄԱԳ քաղաքականության մասին նրա արձանագրությունը այս բնագավառը կարգավորող հիմնական իրավական փաստաթղթերն են:

Նախագծերը տնտեսության բոլոր ճյուղերի համար (ներառյալ բնապահպանական ճյուղը) քաղաքականության զարգացման փաստաթղթեր են, որոնք, անդրսահմանային համատեքստում ՇՄԱԳ միջազգային կոնվենցիայի արձանագրության և ՇՄԱՌԳ մասին դրա արձանագրության համաձայն, բնապահպանական գնահատման և փարձաքննության առարկա են: Ցավոք սրտի, ՇՄԱՓ մասին օրենքը չի նախատեսում Արձանագրության կողմից քաղաքականության և օրենսդրության ռազմավարական տնտեսական գնահատման փորձաքննություն:

«ՇՄԱՓ իրականացնող լիազորված պետական մարմնի մասին» ՀՀ կառավարության 1996 թ. հոկտեմբերի 30-ի N345 որոշում, համաձայն որի ՀՀ բնապահպանության և ընդերքի նախարարությանը վերապահվել են ՇՄԱՓ իրականացնող լիազորված պետական մարմնի իրավասությունները:

«ՇՄԱՓ մասնագիտական իրավասության հավաստագիր տալու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 1996 թ. դեկտեմբերի 20-ի N386 որոշում, համաձայն որի սահմանվում է ՇՄԱՓ մասնագիտական իրավասության հավաստագրի (այսուհետև՝ Հավաստագիր) տրման կարգը:

Ըստ այդ կարգի (այսուհետև՝ Կարգ)՝ մասնագիտական հավաստագիրը տրվում է այդ նպատակով լիազորված մարմնի՝ բնապահպանության նախարարության կողմից ստեղծված համապատասխան հանձնաժողովի կողմից և վերջինիս կողմից հաստատված կարգով: Կարգի համաձայն՝ մասնագիտական հավաստագիրը տրվում է Կարգով սահմանված հայտ և դրան կից համապատասխան փաստաթղթեր ներկայացնող խմբերին, գիտնականներին, բարձր որակավորում ունեցող առանձին մասնագետներին: Համապատասխան հանձնաժողովի կողմից մասնագիտական հավաստագրի տրման վերաբերյալ որոշում կայացնելու համար սահմանված է մինչև եռամսյա ժամկետ՝ հայտը ներկայացնելուց հետո: Հանձնաժողովի համապատասխան որոշումները հաստատում է նախարարը: Կարգով հավաստագրի գործողության ժամկետը սահմանված է երեք տարի: Կարգով սահմանված է նաև հավաստագրի գործողության կասեցման ու դրա վերականգնման, ինչպես նաև հավաստագիրն անվավեր ճանաչելու դեպքերն ու պայմանները:

«Մի շարք բնապահպանական կոնվենցիաներից բխող ՀՀ պարտականությունների կատարման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 1998 թ. փետրվարի 25-ի N115 որոշումը, որով հաստատված է «Անդրսահմանային կոնտեքստում ՇՄԱԳ մասին» կոնվենցիայից բխող ՀՀ ստանձնած պարտավորությունների՝ հինգ տարվա ընթացքում կատարման միջոցառումների ծրագիրը:

«ՇՄԱՓ ենթակա նախատեսվող գործունեությունների սահմանային չափերի մասին» ՀՀ կառավարության 199 մարտի 30-ի N193 որոշումը, որով սահմանված են Օրենքի անունից ՇՄԱՓ ենթակա նախատեսվող գործունեությունների սահմանային չափերը ըստ ոլորտների՝ համաձայն Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետի: 4-րդ հոդվածն ամրագրում է նախատեսված գործունեությունների ցուցակը, որոնք ենթակա են պարտադիր բնապահպանական

փորձաքննության, իսկ նրանց սահմանային չափերը որոշվում են Կառավարության այս որոշմամբ: Այլ կերպ ասած՝ ՇՄԱԳ մասին այս Օրենքով որոշվում են միայն բնապահպանական փորձաքննության ենթակա գործունեությունների տեսակները, մինչդեռ վերոհիշյալ հրամանը որոշում է այդ չափանիշների նվազագույն արտադրողականությունը կամ չափը, /օրինակ՝ նախատեսված տարածքի/, որից դուրս նախատեսված գործունեությունը ենթակա է պարտադիր բնապահպանական փորձաքննության:

«ՇՄԱԳ եզրակացությունը վերանայելու կամ չեղյալ հայտարարելու պայմանները, ժամկետները և արարողակարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2003 թ. մայիսի 8-ի N701-Ն որոշումը, որն ընդունվել է ի կատարումն Օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջի: 11-րդ հոդվածն ամրագրում է, որ պատասխանատու մարմինը /Բնապահպանության Նախարարություն/ կարող է վերանայել կամ չեղյալ հայտարարել փորձաքննության եզրակացությունը 2 դեպքերում. 1-ինը՝ եթե ընդունվել է նոր բնապահպանական օրենսդրություն, և 2-րդը՝ փորձաքննության եզրակացությունը հայտարարելուց հետո ի հայտ են եկել նոր բնապահպանական գործոններ, ինչպիսիք են՝ տարածքի կարգավիճակի փոփոխություն /դեպի հատուկ պաշտպանված տարածք/, շրջակա միջավայրի տարրերի կարգավիճակի փոփոխություն /բնակեցված վայրերի մթնոլորտի, ջրամբարների նպատակի, հողերի/, սանիտարական բնորոշման փոփոխություն և այլն: Երկու դեպքերում էլ նախագծի ձեռնարկողը կամ ներկայացուցիչը պետք է լրամշակեն ՇՄԱԳ զեկույցը կամ մշակեն նոր ՇՄԱԳ զեկույց և հանձնեն Բնապահպանության Նախարարություն՝ ՇՄԱԳ իրականացնելու համար /պայմանները, հրահանգները, ֆինանսավորման աղբյուրները այս դեպքերում քննված չեն ո՛չ օրենքով, ո՛չ էլ նշված հրամանով/:

«Կառուցապատման, նախագծի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2003 թ. մայիսի 2-ի N608-Ն որոշմամբ հաստատված **«Կառուցապատման նախագծի կազմին և բովանդակությանը ներկայացված հիմնական պահանջները» հավելվածով** սահմանված է, որ կառուցապատման նախագծերի տեքստային մասում պետք է հիմնավորվի նաև ՇՄԱ գնահատականը: Այս որոշումը կարգավորում է նախագծերի կառուցվածքը և բովանդակությունը, նախագծերի, հիմնական նորմատիվային ակտերի և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների և այլնի զարգացման, կոորդինացման, փոփոխման և հաստատման իրավունք ունեցող անձանց և կազմակերպությունների շրջանակը: Նշված որոշման հավելվածը ավելացնում է նախագծերի բովանդակությանը ներկայացվող պահանջները: Ավելի կոնկրետ՝ այս պահանջները կապված են նախատեսվող գործունեության բնապահպանական գնահատականի հետ:

«ՇՄԱԳ մասնագիտական իրավասության հավաստագրի տրման հանձնաժողովի կազմի և դրա գործունեության կարգի հաստատման մասին» ՀՀ բնապահպանության նախարարի 1997 թ. մարտի 6-ի N28 հրաման: Համաձայն ՇՄԱԳ մասին օրենքի՝ պետական լիազորված մարմինը /Բնապահպանության Նախարարությունը/ նախատեսված գործունեության՝ ՇՄԱԳ մասնագիտական եզրակացության համար ներգրավում է միայն լիցենզավորված մասնագետների: Նշված հրամանը որոշում է հավաստագրի /լիցենզիայի/ տրման կանոնները և հանձնաժողովի կառուցվածքը, որը որոշում է թեկնածուների համապատասխանությունը և տալիս հատուկ լիցենզիաներ:

«ՇՄԱ մասնագիտական իրավասության հավաստագրի տրման հանձնաժողովի վրա, նաև ՇՄԱԳ եզրակացության հաստատման գործառույթի տրման մասին» ՀՀ բնապահպանության նախարարի 1997 թ. հուլիսի 22-ի N79 հրաման: Նշված հրամանը ուղղումներ է կատարում նախորդ հրամանի պահանջներում և միևնույն ժամանակ որոշում է ՇՄԱԳ լիազորված մարմնի ընդունած որոշումների վերանայումը և հաստատումը, որը ևս կառավարվում է լիցենզիա տվող հանձնաժողովի կողմից:

«ՇՄԱԳ եզրակացության տրման հանձնաժողովի գործունեության ժամանակավոր կարգը հաստատելու մասին» ՀՀ բնապահպանության նախարարի 1997 թ. հոկտեմբերի 28-ի հրամանը հաստատում է վերոհիշյալ հանձնաժողովի կազմման և գործունեության կանոնները:

«Անդրսահմանային կոնտեքստում ՇՄԱԳ մասին» կոնվենցիայից բխող ՀՀ պարտականությունների կատարման նպատակով կոորդինացիոն հանձնաժողով ստեղծելու մասին» ՀՀ բնապահպանության նախարարի 199 թ. հոկտեմբերի 12-ի N131 հրաման: Այս հրամանում հիմնում է կոորդինացիոն Հանձնաժողով, որը պետք է այս կոնվենցիայից բխող համապատասխան գործունեությունն զարգացնի, ուսումնասիրի օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտությունը և կոորդինացիոն տարբեր պետական մարմինների՝ կոնվենցիային պահանջների կատարման նպատակով:

«ՇՄԱՓ իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ բնապահպանության նախարարի 2002 թ. նոյեմբերի 13-ի N151 հրաման, որը որոշում է Բնապահպանության Նախարարության տարբեր ստորաբաժանումների միջև հարաբերության կանոնները, ինչպես նաև փորձաքննության գործընթացը:

«Բնապահպանական փորձաքննություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը և սեփականության իրավունքով հանձնվող գույքի կազմը հաստատելու մասին» ՀՀ բնապահպանության նախարարի 2002 թ. դեկտեմբերի 30-ի N196 հրաման՝ ի կատարումն «Բնապահպանական փորձաքննություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն (այսուհետև՝ ՊՈԱԿ) ստեղծելու մասին ՀՀ կառավարության 2002 թ. նոյեմբերի 21-ի N1846-Ն որոշման: Տվյալ հրամանը հաստատում է ՇՄԱՓ կատարող լիազոր մարմնի կառուցվածքը և կարգավիճակը: Ըստ այս հրամանի՝ «Բնապահպանական Փորձաքննություն»-ը ոչ առևտրային կազմակերպություն է և մտնում է Բնապահպանության Նախարարության կառուցվածքի մեջ:

Նախատեսվող գործունեության և հայեցակարգերի փորձաքննության համար վարձավճարները, ինչպես նաև փաստացի ծախսերի նորմատիվները հաստատվել են ՀՀ բնապահպանության նախարարի կողմից 1997 թ. հոկտեմբերի 7-ին և վերահաստատվել 2000 թ. հուլիսի 26-ին (հրաման N24) և 2003 թ. մարտի 13-ին (հրաման N73-Ն): Փաստաթուղթը հաստատում է չափանիշներ, համաձայն որոնց որոշվում է ՇՄԱՓ կատարելու վարձավճարը՝ հաշվի առնելով գործունեության տեսակը, ինչպես նաև ծավալը և աշխարհագրական տեղը: Քանի որ լիազորված մարմինը բյուջետային կազմակերպություն չէ, ՇՄԱՓ կատարելու համար դիմած անձինք կան կազմակերպությունները պայմանագիր են կնքում լիազորված մարմնի հետ և համապատասխան վճարում են կատարում, որը որոշվում է այս հրամանի հիման վրա:

«Վարչական խախտումների մասին Օրենքը և ՀՀ Քրեական Օրենսգիրքը» /1999/. ՇՄԱՓ պահանջների խախտման համար վարչական տուգանքները անհատ անձանց համար կազմում են 50.000 դրամ /մոտ \$90/, իսկ պաշտոնատար անձանց համար՝ 100.000 դրամ /մոտ \$180/, իսկ կրկնակի խախտման համար՝ համապատասխանաբար 80 և 150 հազար դրամ: ՀՀ իրավական ակտերով նախատեսված չէ որևէ քրեական պատիժ ՇՄԱԳ հետ կապված օրենսդրության պահանջները չկատարելու համար:

Հարկ է նշել, որ մշակվել և ՀՀ կառավարության քննարկման են ներկայացվել հետևյալ երկու իրավական ակտերի նախագծերը.

- «ՇՄԱՓ համար անհրաժեշտ փաստաթղթերի և դրանցում պարունակվող տվյալների ցանկն ու ծավալը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը և
- «ՇՄԱՓ իրականացման հետ կապված հասարակական լսումների արարողակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

3.3 ՇՄԱՓ առնչվող ՀՀ այլ օրենքներ

Կան մի քանի ճյուղային նորմատիվ ակտեր, որոնք կապեր են հաստատում հիմնական օրենքի հետ: Որոշ ճյուղային նորմատիվ ակտեր, որոնք հիմնականում վերջերս են ընդունվել, ինչպիսիք են Ջրային օրենսգիրքը, մասամբ՝ Հողային օրենսգիրքը, նախատեսում են

պետական էկոլոգիական գնահատում /կամ փորձաքննություն/: Մյուսները պարտավորեցնում են նախագծի հեղինակներին /ներդրողին/ դիմել այլ տեսակի լիցենզիաներ, թույլտվություններ, և այլն ստանալու համար /օրինակ՝ անտառահատումների թույլտվություն, ջրօգտագործման թույլտվություն, թափոնների արտանետում, հանքային ռեսուրսների օգտագործման թույլտվություն և այլն/:

Պետակա էկոլոգիական փորձաքննության պահանջ է ամրագրում նաև ՀՀ **անտառային օրենսգրքը**, որը նույնպես ընդունվել է ՀՀ Գերագույն Խորհրդի կողմից (1994 թ. նոյեմբերի 1-ին): Օրենսգրքի 14-րդ հոդվածը սահմանում է, որ անտառների վիճակի և վերարտադրության վրա ազդող նոր և վերակառուցվող ձեռնարկությունների, կառուցվածքների և այլ օբյեկտների տեղաբաշխման, նախագծման. շինարարության և գործարկման ժամանակ, ինչպես նաև նոր տեխնոլոգիական պրոցեսներ արմատավորելիս պետք է նախատեսվեն և իրագործվեն այնպիսի միջոցառումներ, որոնք ապահովեն անտառների պահպանումը բացասական ներգործությունից: Եվ դա պետք է արվի պետական էկոլոգիական փորձաքննության հիման վրա:

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2002 թ. հունիսի 4-ին ընդունված ՀՀ **ջրային օրենսգրքի** 10-րդ հոդվածի 3-րդ կետը որպես Բնապահպանության նախարարության իրավասություն և գործառույթ նախատեսում է «ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման էկոլոգիատնտեսական հիմնավորման սկզբունքների և նորմերի» մշակումը, և որպես այս դրույքի իրագործման մեխանիզմ Օրենսգրքի 121-րդ հոդվածի 6-րդ մասի 4-րդ մասով ամրագրված է, որ Օրենսգրքի պաշտոնական հրապարակումից հետո 1 (մեկ) տարվա ընթացքում ՀՀ կառավարությունը կամ նրա լիազորած պետական կառավարման մարմինը պետք է հաստատի «Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը»:

Ի կատարումն Օրենսգրքի վերը նշված հոդվածների պահանջի՝ ՀՀ կառավարությունը 2003 թ. օգոստոսի 14-ին ընդունել է համապատասխան որոշում՝ «Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» N1110-Ն որոշումը: Որոշմամբ հաստատված կարգով կանոնակարգվում է ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման բնութագիրն ու ընթացակարգը՝ ազդեցության գնահատման ելակետ ընդունելով աղտոտող նյութերի քանակությունը, վնասակար նյութերի սահմանային թույլատրելի մակարդակը և դրանց ազդեցության ժամանակահատվածը:

Օրենսգրքի 12-րդ հոդվածի 6-րդ կետը որպես ջրային համակարգերի առնչությամբ ներդրումային ծրագրերի փորձաքննության կազմակերպող. իսկ նույն հոդվածի 8-րդ կետը՝ որպես ջրային համակարգերի վրա ազդող օբյեկտների շինարարական և վերակառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի նախնական փորձաքննությունն ապահովող է ճանաչում Ջրային համակարգերի կառավարման մարմին, այն է՝ ՀՀ ջրտնտեսությունին:

Անհրաժեշտության դեպքում ՇՄԱԳ-ի (ներառյալ հասարակության ծանուցումը) պահանջ է դնում Օրենսգրքի 30-րդ հոդվածը, որը վերաբերում է ջրօգտագործման թույլտվություն ստանալու գործընթացին: Նշված հոդվածն ամրագրում է, որ ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի կողմից ջրօգտագործման թույլտվություն ստանալու «հայտի գնահատումը ներառում է Օրենսգրքով նախատեսված ջրօգտագործմանը ներկայացվող հատուկ պայմանների սահմանումը, պահանջվող լրացուցիչ տեղեկությունների և ՇՄԱԳ անհրաժեշտության նշում: Օրենքով նախատեսված դեպքում ջրօգտագործման թույլտվության հայտ ներկայացրած անձը պետք է ներկայացնի ՇՄԱԳ: Անհրաժեշտության դեպքում հայտի քննարկման ժամկետը համապատասխանեցվում է ՇՄԱԳ ժամկետին»:

Միևնույն պահանջն է դնում նաև Օրենսգրքի 43-րդ հոդվածը՝ ջրային համակարգի օգտագործման թույլտվություն տալու գործընթացն իրականացնելու առնչությամբ:

Համապատասխան մարմինների կողմից ջրօգտագործման թույլտվություն տալու որոշում կայացնելու համար օրենսգրքի 31-րդ հոդվածն այլ չափանիշների հետ մեկտեղ կարևորում է նաև շրջակա միջավայրի վրա ազդեցության չափանիշը:

Օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետն ամրագրում է այն դրույթը, որ Ջրի ազգային ծրագիրը կազմելիս նրանում պետք է ներառվի ջրավազանային կառավարման տարածքների ոլորտների ջրօգտագործման և ջրային ռեսուրսների բաշխման վրա դրանց համալիր ազդեցության գնահատականի նկարագրությունը:

Ըստ Օրենսգրքի 103-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «ջրային համակարգերի կամ ջրային ռեսուրսների վրա ազդող օբյեկտների շինարարական և վերակառուցողական աշխատանքների նախագծային փաստաթղթերի փորձաքննությունն իրականացնում են համապատասխան լիցենզիա ունեցող անձինք»:

Հարկ է նշել, որ Ջրային օրենսգրքով սահմանված՝ փորձաքննությանն առնչվող որոշ դրույթներ հակասության մեջ են շրջակա միջավայրի վրա ազդեցության օրենսդրության սկզբունքների հետ:

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2002 թ. նոյեմբերի 6-ին ընդունված ՀՀ **ընդերքի մասին օրենսգրքի** միայն 28-րդ հոդվածն է անդրադառնում ընդերքի ոլորտում պետական բնապահպանական փորձաքննության խնդրին, այն էլ՝ վերապահումով: Նշված հոդվածի 4-րդ կետը սահմանում է, որ «պետական փորձաքննությունը կարող է կատարվել հանքավայրի երկրաբանական ուսումնասիրության ցանկացած փուլում՝ սահմանված կարգով, եթե փորձաքննության ներկայացրած նյութը թույլ է տալիս կատարել օգտակար հանածոների քանակի և որակի, դրանց արդյունաբերական նշանակության, լեռնատեխնիկական, հիդրոերկրաբանական, բնապահպանական և այլ պայմանների օբյեկտիվ գնահատում»:

2002 թ. նոյեմբերի 5-ին ընդունված **«Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքի** 60-րդ հոդվածը սահմանում է, որ «որևէ հանքային իրավունքի տրամադրման հարց քննարկելիս լիազոր մարմինը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացված՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության արդյունքների հիման վրա հաշվի է առնում դրա ազդեցությունը օդային և ջրային ավազանի, հողի, կենդանական և բուսական աշխարհի վրա, ինչպես նաև մշակութային, ճարտարապետական, հնէաբանական, պատմական և աշխարհագրական առանձնահատկությունները»:

ՀՀ Հողային օրենսգրքի, որն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2001 թ. մայիսի 2-ին, մի շարք հոդվածներ անդրադառնում են շրջակա միջավայրի պահպանության կամ սահմանային թույլատրելի նորմերին /օրինակ՝ 8-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին և 5-ին ենթակետերը, 36-րդ հոդվածի 7-րդ կետը/, սակայն ուղղակիորեն բնապահպանական փորձաքննության պահանջ՝ հողի վիճակի վրա բացասական ներգործության գնահատման նպատակով, նախատեսում է միայն այդ օրենսգրքի 37-րդ հոդվածի 2-րդ կետը:

Նոր հողօգտագործողների առնչությամբ պարտադիր բնապահպանական փորձաքննության պահանջ է ամրագրված ՀՀ կառավարության 1998 թ. հուլիսի 30-ի N479 որոշմամբ /իր հետագա փոփոխություններով հանդերձ/ հաստատված «Հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի բացակայության դեպքում քաղաքաշինական գործողության իրականացման» Կարգում, ըստ որի՝ նոր հողօգտագործումների վերաբերյալ բոլոր առաջարկությունները՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում ենթակա են բնապահպանական փորձաքննության, իսկ ՀՀ կառավարության 2003 թ. մայիսի 8-ի «ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքներում և անտառային ֆոնդի հողերում հողահատկացման ու քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը հաստատելու մասին» N613-Ն որոշմամբ հաստատված Կարգի 12-րդ կետն ամրագրում է, որ «բնության հատուկ պահպանվող տարածքներում քաղաքաշինական

գործունեությունը թուլատրվում է իրականացնել միայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բնապահպանական և քաղաքաշինական փորձաքննության դրական եզրակացության դեպքում»:

ՀՀ կառավարության 2003 թ. մայիսի 2-ի N608-Ն որոշմամբ հաստատված «Կառուցապատման նախագծի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման» Կարգի 9-րդ կետը սահմանում է, որ Պատվիրատուն նախագծային աշխատանքների ավարտից հետո դրանք ներկայացնում է փորձաքննության սույն Հաշվետվության II բաժնի 1.6 կետում հիշատակված ՀՀ կառավարության 2002 թ. փետրվարի 2-ի N96 որոշմամբ հաստատված կարգով, այսինքն՝ ներկայացնում է համալիր, այդ թվում՝ «Կառուցապատման նախագծի կազմին և բովանդակությանը ներկայացվող հիմնական պահանջները» հավելվածով սահմանված է, որ կառուցապատման նախագծերի տեքստային մասում պետք է հիմնավորվի նաև շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականը:

Պատվիրատուի համար ՀՀ կառավարության 2002 թ. փետրվարի 2-ի N96 որոշմամբ հաստատված կարգով պարտադիր համալիր փորձաքննության պահանջ է պարունակում նաև ՀՀ կառավարության 2003 թ. մայիսի 2-ի «ՀՀ քաղաքային և գյուղական համայնքների գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու մասին» N609-Ն որոշմամբ հաստատված Կարգի 21-րդ կետը: Այն սահմանում է, որ «Պատվիրատուն նախագծային աշխատանքների ավարտից հետո գլխավոր հատակագիծը ներկայացնում է համապատասխան լիցենզիա ունեցող անձին՝ համալիր փորձաքննության»: Իսկ Կատարողի համար նույն կետը սահմանում է, որ «Կատարողը կարող է նախագծային փաստաթղթերը ներկայացնել փորձաքննության եթե այդպիսի պայման նախատեսված է նախագծային աշխատանքների կապալի պայմանագրով»:

Հարկ է նշել, որ այն հակասության մեջ է նաև «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և ինքն իր հետ: Քանի որ. 1) գրեթե անհավանական է, որ որևէ մեկը (լինի դա ֆիզիկական կամ իրավաբանական անձ) ի վիճակի լինի միայնակ իրականացնել համալիր, այդ թվում՝ բնապահպանական փորձաքննություն և դրա համար ունենա համապատասխան լիցենզիա, և 2) եթե նախագծային աշխատանքների կապալի պայմանագրով նախատեսված է, որ փաստաթղթերը պետք է ներկայացվեն փորձաքննության, ապա Կատարողը պարտավոր է դա կատարել՝ որպես պայմանագրային պարտավորություն և նա չի կարող կամայականորեն որոշել. կատարել, թե չկատարել, ինչի հնարավորությունը նրան տալիս է նշված կետի ձևակերպումը՝ «կարող է ներկայացնել»:

ՀՀ կառավարության 2003 թ. օգոստոսի 8-ի N997-Ն որոշմամբ հաստատված «Տարածքային հատակագծման ուրվագծի և նախագծի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման» Կարգի 13-րդ կետը նույնպես ամրագրում է պայմանագրային հիմունքներով ՀՀ կառավարության 2002 թ. փետրվարի 2-ի N96 որոշմամբ հաստատված կարգով անցկացվող համալիր փորձաքննության անցկացման պահանջ: Իսկ նույն՝ N997-Ն որոշմամբ հաստատված «Տարածքային հատակագծման նախագծի կազմին և բովանդակությանը ներկայացվող հիմնական պահանջները» N2 հավելվածի 3թ կետի պահանջն է, որ տարածքային հատակագծման նախագծի կազմում, ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծով սահմանված դրույթներին համապատասխան արտացոլվեն նաև «շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականը և դրա պահպանության համալիր ծրագիրը»:

Համապատասխան փորձաքննության և հասարակության իրազեկման վերաբերյալ դրույթ է ամրագրված նաև ՀՀ կառավարության 2001թ. մայիսի 14-ի N408 որոշմամբ հաստատված «Բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխության» Կարգում: Սակայն այդ Կարգը, մասնավորապես՝ Կարգի 13-րդ կետը նախատեսում է, որ «Փորձաքննությունն իրականացվում է պատվիրատուի և փորձաքննություն կատարողի միջև կնքվող պայմանագրի համաձայն»: Նման ձևակերպումից կարելի է եզրակացնել, որ եթե պատվիրատուի և փորձաքննություն կատարողի միջև պայմանագիր չկնքվի, ապա փորձաքննություն չի կատարվի:

Կարգի 14-րդ կետը վերաբերում է նաև գոտևորման նախագծերի մշակման մասին հասարակայնության իրազեկմանը: Ըստ այդ կետի՝ «պատվիրատուն փորձաքննության դրական եզրակացություն ստացած գոտևորման նախագծի մասին հասարակության իրազեկում է ՀՀ կառավարության 1988 թ. հոկտեմբերի 28-ի «Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցության կարգը սահմանելու մասին» N660 (իր հետագա՝ 08.08.03 թ. N1001-Ն փոփոխություններով հանդերձ) որոշմամբ հաստատված կարգի համաձայն:

Հարկ է նշել, որ վերը նշված 7.1 և 7.3-ից մինչև 7.6 (ներառյալ) կետերում նշված ՀՀ կառավարության որոշումներն ընդունվել են 1988 թ. մայիսի 5-ին ընդունված «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթների համաձայն (հոդվածներ 10, 13, 14, 17, 30 և այլն):

Քաղաքաշինության փաստաթղթերի քննման կարգավորումներն է իրականացնում «Քաղաքաշինության փաստաթղթերի փորձաքննության կարգավորման հաստատման մասին» Կառավարության N96 Հրամանը /ընդունվել է 2002 թ. փետրվարի 2-ին/: Այստեղ նշվում է նաև քաղաքաշինության փաստաթղթերի համալիր քննման հասկացությունը:

Քաղաքաշինության նախագծերը, որոնք պահանջում են բնության պահպանության իրագործումը, արտակարգ իրավիճակների կանխարգելում, արդյունաբերական ապահովություն, ստորգետնյա ռեսուրսների խելամիտ օգտագործում և այլ անհրաժեշտ միջոցներ, ենթակա են համալիր փորձաքննության: Միևնույն ժամանակ, Կանոնակարգն ամրագրում է /կետ 5/, որ համալիր փորձաքննությունը /ներառյալ քաղաքաշինությունը, բնապահպանական, սեյսմիկ նորմերը, անվտանգությունը և այլն/ օրենսդրության կողմից որոշված դեպքերում ղեկավարվում է պետական մարմինների մասնակցությամբ, որոնք լիազորված են հրապարակելու համապատասխան բնապահպանական փորձաքննական եզրակացությունները: Մինչդեռ ըստ նույն կանոնակարգի 7-րդ կետի՝ համալիր փորձաքննություն ղեկավարող կազմակերպությունները փորձաքննական եզրակացությունները ձևակերպելիս հաշվի են առնում նաև բնապահպանական փորձաքննության եզրակացությունը: Կանոնակարգը համալիր փորձաքննության համար սահմանել է 45-օրյա ժամկետ:

Համաձայն վերը նշվածի՝ փորձաքննության կատարման և եզրակացության ձևակերպման ժամանակ բնապահպանական փորձաքննական եզրակացությունը պետք է հաշվի առնվի, ինչպես պահանջում է օրենքը: Սակայն շատ հաճախ քաղաքաշինության պաշտոնատարները և մասնագետները այս պահանջին բավարարում չեն տալիս՝ ենթադրելով, որ բնապահպանական փորձաքննական եզրակացությունը պետք է հրապարակվի սպառիչ փորձաքննության ժամանակ, որը սկզբունքորեն հակադրվում է օրենքին և տեղիք է տալիս ոչ անհրաժեշտ քննարկումների և գործընթացների ղեկավարման ձևերի միջև տարբերության պատճառ դառնում:

Միաժամանակ հարկ է նշել, որ Կանոնակարգի 7-րդ կետի համաձայն՝ սպառիչ փորձաքննական եզրակացության ձևավորման ժամանակ պետք է հաշվի առնել բնապահպանական փորձաքննական եզրակացությունը և 16-րդ կետում սպառիչ փորձաքննության ժամկետի որոշումը՝ 45 օր, հակասում են իրար, քանի որ Օրենքը բնապահպանական փորձաքննական կատարման համար սահմանում է 180 օր:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության խնդրի անդրադառնում է «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 2001 թ. մարտի 7-ին) 6-րդ հոդվածը, որի 2-րդ կետում ամրագրված է, որ «Միջուկային էներգետիկայի, շրջակա միջավայրի վրա նրա ազդեցության և անվտանգության հարցերը կարգավորվում են միջուկային պայմանագրերին ՀՀ օրենսդրությանը համապատասխան»:

Շրջակա միջավայրի պահպանությանը նպատակաուղղված դրույթներ են պարունակում «**Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին**» **ՀՀ օրենքի** (ընդունվել է 1999 թ. փետրվարի 1-ին) նախաբանը, 3, 7, 17, 23, 33 հոդվածները: Իսկ, մասնավորապես, փորձաքննությանը վերաբերող դրույթներ ամրագրված են օրենքի 10-րդ և 18-րդ հոդվածներում, ըստ որում.

- ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում են պետության պատվիրակած լիազորությունները, այդ թվում, և առաջին հերթին՝ «ապահովում են համայնքի բնակչության մասնակցությունը համայնքի տարածքում կառուցվելիք ատոմային էներգետիկայի օգտագործման օբյեկտների նախագծերի հասարակական քննարկումներին և փորձաքննություններին» (N10.ա), և
- ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում լիցենզավորման ենթակա են նաև «ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների նախագծերի հասարակական քննարկումներին և փորձաքննության անցկացմանը» (N18.2.ե):

«**Ավիացիայի մասին**» **ՀՀ օրենքի** (ընդունվել է 2002 թ. մայիսի 20-ին) 22-րդ և 45-րդ հոդվածներն առնչվում են շրջակա միջավայրի պահպանության հարցին:

22-րդ հոդվածը սահմանում է, որ «ՀՀ շահագործվող օդանավը պետք է լինի թռիչքների համար պիտանի ու շրջակա միջավայրի պահպանության կանոններին համապատասխան»: Նույն օրենքի իմաստով՝ օդանավը շրջակա միջավայրի պահպանության համար համարվում է պիտանի, եթե այն «նախագծվել, արտադրվել, սարքավորվել և սպասարկվել է այնպես, որ համապատասխանում է աղմուկի և արտանետումների գործող սահմանափակումներին և շրջակա միջավայրի պահպանության այլ պահանջներին»:

Իսկ 45-րդ հոդվածը սահմանում է, որ «օդային ցուցադրական ելույթների, օդային մրցումների և այլ հատուկ գործունեության իրականացման համար տրվող հատուկ թույլտվությունների կարգը սահմանում է ՔԱԱ-ն: Թույլտվությունները տրվում են, եթե օդային ցուցադրական ելույթները, օդային մրցումները և այլ հատուկ գործունեությունը չի վնասում շրջակա միջավայրին և վտանգ չի ներկայացնում մարդկանց կյանքին ու առողջությանը գետնի վրա»:

«**Սևանա լճի մասին**» **ՀՀ օրենքի** (ընդունվել է 2001 թ. մայիսի 15-ին) 10, 11, 19, 20, 21, 22, 23, 24, 25 և 28 հոդվածներն առնչվում են Սևանա լճի էկոհամակարգի վրա վնասակար ազդեցության նվազեցման, կանխարգելման, արգելման, ինչպես նաև այդ նպատակով անցկացվելիք համապատասխան փորձաքննությունների հարցերին:

Օրենքի 11-րդ հոդվածի ե) կետն ամրագրում է Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման նպատակով՝ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի մշակումը և դրանց բնապահպանական պետական, ինչպես նաև օրենքով սահմանված այլ փորձաքննության պարտադիր ապահովման պետական քաղաքականության սկզբունքը:

Օրենքի 22-րդ հոդվածի գ) կետը լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման հիմնական պահանջների թվում նախատեսում է նաև շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը:

«Տնտեսավարող սուբյեկտները գործունեություն ծավալելուց կամ տեխնոլոգիական փոփոխություններ կատարելուց առաջ պարտավոր են լիցենզավորված մարմնին ներկայացնել համապատասխան հայտարարագիր: Այն ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում, լիազորված մարմինը, օրենսդրությամբ սահմանված փորձաքննությունների հիման վրա, ընդունում որոշում՝ տվյալ գործունեությունը թույլատրելու կամ արգելելու մասին» - սահմանում է օրենքի 25-րդ հոդվածը:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքը (ընդունվել է 1994 թ. նոյեմբերի 1-ին) նույնպես պարունակում է դրույթներ՝ կապված վնասակար ազդեցության փորձաքննության հետ: Օրենքի 5-րդ հոդվածը ՀՀ կառավարության իրավասության ենթական հարցերի մեջ ներառում է նաև «մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործության պետական փորձաքննության կազմակերպումը և իրագործումը»:

«Մթնոլորտային օդի վիճակի վրա ներգործող բոլոր ձեռնարկությունների, կառույցների և այլ օբյեկտների տեղի ընտրությունը և դրանց կառուցման և վերակառուցման նախագծերն էկոլոգիական փորձաքննության են ենթարկվում բնության պահպանության բնագավառում հատկապես լիազորված մարմինների կողմից՝ հասարակական կազմակերպությունների և անկախ փորձագետների մասնակցությամբ»՝ սահմանում է օրենքի 21-րդ հոդվածը:

Սանիտարահիգիենիկ փորձաքննության պահանջ է դնում **«ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը**, որն ընդունվել է դեռևս 1992 թ. նոյեմբերի 16-ին: Օրենքի 23-րդ հոդվածն ամրագրում է, որ «պարտադիր սանիտարահիգիենիկ փորձաքննություն է իրականացվում ատոմային էներգետիկայի, շրջակա միջավայրում քիմիական և կենսաբանական արտանետումներ և հոսքեր ունեցող օբյեկտների, ինչպես նաև էկոլոգիական աղետի կարգավիճակ ունեցող գոտիներում օբյեկտների տեղաբաշխման, վերակառուցման և ընդունման, նախադեպ չունեցող նոր տեխնոլոգիաների ներդրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում»:

Շրջական միջավայրի վրա վնասակար ազդեցության նվազեցման, կանխարգելման, արգելման ուղղությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների ու նորմերի չկատարման կամ անտեսման համար պատասխանատվություն սահմանող նորմեր են պարունակում ՀՀ **«Վարչական իրավախախտումների վերաբերյալ»** և **«Քրեական»** օրենսգրքերը:

Օրինակ՝ «օգտակար հանածոների տեղադրման մակերեսների ինքնազուլիս կառուցապատումը, ընդերքի պահպանության կանոնները և ընդերքից օգտվելու հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից շրջակա միջավայրի» պահպանման պահանջները չկատարելն առաջացնում է վարչական պատասխանատվություն (N59), իսկ «արդյունաբերական, գյուղատնտեսական, գիտական և այլ օբյեկտների նախագծելու, տեղաբաշխելու, կառուցելու, վերակառուցելու, վերանորոգելու, շահագործման հանձնելու կամ շահագործելու, շահագործումից հանելու ընթացքում շրջակա միջավայրի պահպանության կանոնները խախտելը», եթե դրանք առաջ են բերել ծանր հետևանքներ, առաջացնում է քրեական պատասխանատվություն (N281)

3.4 Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատմանը վերաբերող միջազգային իրավական ակտերը

Հանրապետությունում շրջական միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացը կարգավորվում է նաև միջազգային բնապահպանական կոնվենցիաներով և արձանագրություններով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատմանը վերաբերող ազգային օրենսդրության դրույթների համապատասխանությունը միջազգային կոնվենցիաներին պարզելու նպատակով կատարվել է 28 կոնվենցիայի վերլուծություն, որոնց ցանկը տրված է ստորև:

N	Անունը, տեղը, ամսաթիվը,	ուժի մեջ է	հաստատված է
1.	ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա /Ռիո-դե-ժանեյրո, 1992/	21.03.1994	14.05.1993

2.	ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիային կից Կիոտոյի արձանագրություն /Կիոտո, 1997/	1992	14.05.1993
3.	ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման մասին» կոնվենցիա /ժնև, 1979/	1983	21.02.1997
4.	ՄԱԿ-ի ԵՏՀ «Միջսահմանային կոնտեքստում ՇՄԱԳ մասին» կոնվենցիա /Եսպու, 1991/	10.09.1997	21.02.1997
5.	ՄԱԿ-ի ԵՏՀ «Արտադրական վթարների միջսահմանային ազդեցության մասին» կոնվենցիա /Յելսինկի, 1992/	1992	21.02.1997
6.	ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի մասին» կոնվենցիա /Փարիզ, 1994/	27.09.1996	02.07.1997
7.	«Վտանգավոր և այլ թափոնների միջսահմանային տեղափոխման և հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» կոնվենցիա /Բազել, 1989/	05.05.1992	09.1999
8.	«Օզոնային շերտի պահպանության մասին» կոնվենցիա /Վիեննա, 1985/ «Օզոնային շերտի պահպանության մասին» կոնվենցիային կից «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» արձանագրություն /Մոնրեալ, 1987/	1985 1987	1999 1999
9.	ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա /Օրիուս, 1998/	25.06.1998	14.05.2001

Միջազգային կոնվենցիաների և ՀՀ օրենսդրության պահանջների վերլուծության և համեմատության ժամանակ չեն հայտնաբերվել նշանակալից հակասություններ, սակայն միջազգային կոնվենցիաների շատ պահանջներ առկա չեն պետական օրենսդրությունում: հետևաբար անհրաժեշտ է նշել, որ այժմ ընթացքի մեջ են ուղղումներ մի շարք օրենքների համար /Ձրի մասին օրենք, Հողի մասին օրենք, Երկրի Ընդերքի մասին օրենք/, ինչպես նաև ՇՄԱՓ մասին օրենքի նոր նախագիծը, որտեղ հաշվի են առնվել միջազգային կոնվենցիաների շատ պահանջներ: Ավելին, Բնապահպանության Նախարարության ստորադրյալ մարմիններից շատերի աշխատանքային պլանների մեջ մի շարք փոփոխություններ են մտցվել՝ համապատասխան միջազգային կոնվենցիաների, մասնավորապես՝ Եսպուի, Յելսինկիի, Բազելի, Օրիուսի կոնվենցիաների:

4 Վարչական կառուցվածքը

ՇՄԱԳ համակարգը կարող է կարևոր դեր խաղալ հասարակության հաստատուն և ներդաշնակ զարգացման գործում: Այս տեսակետից կառավարության հիմնական գործառնություններից մեկն է՝ համակարգի բոլոր շահագրգիռ կողմերի միջև ապահովել արդյունավետ համագործակցություն: Շահառուների միջև պարզ և վերահսկելի հարաբերությունները կարող են համարվել ամբողջ համակարգի արդյունավետության պարտադիր պայման:

Զնայած ՇՄԱԳ համակարգի մշտական զարգացման և բարելավման գործընթացը տեղի է ունենում Հայաստանում ՇՄԱԳ մասին օրենքի ընդունումից ի վեր, դեռևս զգալի հաջողություններ չեն նկատվում: Հարկ է նշել նաև, որ այս գործընթացի տնտեսական /ոչ պետական/ բաղկացուցիչ մասի ենթակառուցվածքը գործնականում դեռևս չի ձևավորվել: Այլ կերպ ասած՝ Հայաստանում կան ՇՄԱԳ իրականացնող և ՇՄԱԳ զեկույցներ մշակող խիստ սահմանափակ քանակությամբ մասնագիտացված կազմակերպություններ, և նույնիսկ այս կազմակերպություններում չկան բավարար քանակով տեխնիկական միջոցներ և որակյալ մասնագետներ: Այս ընկերությունների ոչ քանակի և ոչ էլ փորձվածության մեջ էական առաջընթաց չի նկատվում:

4.1 ՇՄԱԳ գործընթացի շահառուները՝ համաձայն ՇՄԱՓ մասին օրենքի

Շահառուների միջև օրենսդրական, տնտեսական և կազմակերպչական հարաբերությունները կարգավորվում են ՇՄԱՓ մասին ՀՀ օրենքով, որի առաջին հոդվածը սահմանում է ՇՄԱՓ գործընթացի շահառուներին: Դրանք են.

Լիազորված մարմին /Հոդված N1, կետ 3/ - պետական մարմին, որն իրականացնում է նախատեսվող գործունեության և հայեցակարգային ծրագրերի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությունը:

Ներկայացուցիչ /Հոդված N1, կետ 4/ - կազմակերպություն կամ անհատ, որը մշակում է հայեցակարգերը /ընդհանուր պլան, ծրագիր/ և դրանք ներկայացնում քննության:

Զեռնարկող /Հոդված N1, կետ 6/ - իրավաբանական անձ կամ ֆիզիկական անձ, ինչպես նաև իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություն, որ մտադիր է իրականացնել նախատեսվող գործունեություն:

Լիազորված անձինք /Հոդված N1, կետ 8/ - մասնագետներ, հիմնարկներ, ձեռնարկություններ, կազմակերպություններ և անհատ ձեռներեցներ, որոնք լիազորված մարմնից ստացել են մասնագիտական իրավասության հավաստագիր՝ մասնագիտական եզրակացություն մշակելու համար:

Ազդակիր համայնք /Հոդված N1, կետ 9/ - շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա մարզի /մարզերի/, համայնքի /համայնքների/ բնակչություն:

4.2 Շահառուների դերերը և պարտականությունները

Գործարարները կամ ընկերությունները և ձեռնարկությունները, հասարակական կազմակերպությունները, ինչպես նաև անհատ անձինք կարող են հանդես գալ որպես ցանկացած գործունեության ձեռնարկող: Որպես հայեցակարգային ծրագրերի ձեռնարկող

կարող են հանդես գալ տեղական և միջազգային ֆոնդերը, տեղական վարչական մարմինները և երկրի կառավարությունը:

Համաձայն ՇՄԱՓ մասին օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի՝ ՇՄԱՓ-ը պետության կողմից իրականացվող պարտադիր գործունեություն է: Համաձայն 1996թ. հոկտեմբերի 30-ի N345 Որոշման՝ Բնապահպանության Նախարարությունը ՇՄԱՓ իրականացնող պետական լիազորված մարմին է: «Բնապահպանական Փորձաքննություն» պետական ոչ-առևտրային կազմակերպությունը /ՊՈԱԿ/ գործում է նրա կառուցվածքի մեջ: Այն ստորադասվում է Բնապահպանության Նախարարությանը և կազմակերպում է ՇՄԱՓ գործընթացները և պատրաստում փորձաքննական եզրակացության նախագծեր:

«Բնապահպանական Փորձաքննություն» ՊՈԱԿ-ը նախատեսված գործունեության փաստաթղթերի փորձաքննության ժամանակ հավաքում է շահագրգռված պետական մարմինների /Քաղաքաշինության զարգացման, Առողջապահության, Գյուղատնտեսության, Տրանսպորտի, Տնտեսական զարգացման և առևտրի Նախարարություններ, Տեղական ինքնակառավարման մարմիններ/ և Բնապահպանության Նախարարության բաժինների կարծիքները և լիցենզավորված փորձագետներից ստանում է մասնագիտական եզրակացություններ՝ փորձաքննության որոշում կայացնելու համար: Ստացած փաստաթղթերի հիման վրա կազմվում է եզրակացության նախագիծը և քննարկման համար ներկայացվում է Բնապահպանության Նախարարության հանձնաժողովին: Այնուհետև այն ներկայացվում է նախարարին՝ հաստատման համար:

ՇՄԱՓ դրական որոշումից հետո իրականացվում է ձեռնարկողի ընթացիկ աշխատանքի մոնիտորինգը՝ Պետական բնապահպանական տեսության կողմից, որը նույապես մտնում է Բնապահպանության Նախարարության կազմի մեջ: Բնապահպանական տեսչությունը հսկում է փորձաքննության եզրակացության պահանջների կատարումը:

Ամենասկզբից ձեռնարկողը Բնապահպանության Նախարարության «Բնապահպանական Փորձաքննություն» ՊՈԱԿ-ին ներկայացնում է նախնական տեղեկություն: Հիմնվելով նախնական տեղեկության վրա /նախագծի նախնական պլանավորման փուլ/ «Բնապահպանական Փորձաքննություն» ՊՈԱԿ-ը որոշում է կայացնում ՇՄԱԳ կատարելու անհրաժեշտության մասին:

ՇՄԱԳ կատարելու մասին որոշում կայացնելուց հետո ձեռնարկողը, ինքնուրույն կամ մասնագիտացված կազմակերպությունների մասնակցությամբ, որոնք ներկայացվում են որպես Ներկայացուցիչներ, մշակում է ՇՄԱՓ կատարելու մասին անհրաժեշտ փաստաթղթերը: Հավաքված փաստաթղթերը քննության համար հանձնվում են «Բնապահպանական Փորձաքննություն» ՊՈԱԿ: Փաստաթղթերի կառուցվածքի մասին ավելի մանրամասն տեղեկություն է տրված 5.3 գլխում, իսկ ՇՄԱՓ կատարելու մասին հրահանգները տրված են 5.2 գլխում: Փորձաքննության մասին վերջնական որոշումը կազմվում է հանձնաժողովի կողմից, որը պատասխանատու է ՇՄԱՓ հաստատելու համար: Հանձնաժողովը ղեկավարում է Բնապահպանության Նախարարը, և նրա որոշումը հիմնվում է «Բնապահպանական Փորձաքննություն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված որոշման նախագծի վրա:

Ինչպես արդեն նշվել է, Բնապահպանության Նախարարի կողմից հաստատված փաստաթղթերի պահանջների կատարումը վերահսկվում է Բնապահպանության Նախարարության Պետական բնապահպանական տեսչության կողմից:

5 ՇՄԱԳ գործընթացը Հայաստանում. օրենսդրություն և պրակտիկա

5.1 Օրենսդրություն

Ինչպես նշվեց, Հայաստանում գոյություն չունի ՇՄԱԳ մասին օրենք, և հետևաբար ՇՄԱԳ գործընթացում հարաբերությունները կարգավորվում են հիմնականում ՇՄԱՓ մասին օրենքով և մասամբ՝ 3-րդ գլխում նշված օրենքի ուժ ունեցող այլ ակտերով:

5.1.1 ՇՄԱՓ մասին օրենքի նպատակները և սկզբունքները

Հիմնական սկզբունքները, որոնց վրա հիմնվում է ՇՄԱՖ մասին օրենքը, հետևյալն են.

- առողջության, բնականոն ապրելու և ստեղծագործելու համար բարենպաստ շրջակա միջավայր ունենալու մարդու իրավունքը,
- բնական պաշարների արդյունավետ, համալիր և բանական օգտագործումը,
- էկոլոգիական համակարգերի հավասարակշռության և բնության մեջ գոյություն ունեցող բույսերի և կենդանիների բոլոր տեսակների պահպանում

ՇՄԱՓ մասին օրենքը հիմնվում է (I) Գիտական հիմնավորվածության, (II) Օրինականության, և (III) Որոշումների ընդունման հրապարակայնության սկզբունքների վրա:

5.1.2 ՇՄԱՓ նպատակները

ՇՄԱՓ նպատակն է՝

- (I) Վերլուծել նախատեսվող գործունեության, հայեցակարգի և դրանց այլընտրանքների հնարավորությունները և նպատակահարմարությունը՝ հաշվի առնելով էկոլոգիական բոլոր սահմանափակումները;
- (II) Գնահատել նախատեսված գործունեության, հայեցակարգի և դրանց այլընտրանքների հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և վտանգավորության աստիճանը;
- (III) Ստուգել շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության, հայեցարգի և դրանց այլընտրանքների հնարավոր էկոլոգիական ազդեցության աստիճանը, հետևանքների վերլուծման ամբողջականությունը և ստույգությունը, այդ հետևանքների կանխարգելման, վերացման կամ նվազեցման համար նախատեսված միջոցառումների բավարարությունը ինչպես շահագործման և իրականացման գործընթացում, այնպես էլ արտակարգ իրավիճակների ժամանակ;
- (IV) Ապահովել բնական պաշարների արդյունավետ, բանական օգտագործումը;
- (V) Արգելել շրջակա միջավայրի վրա անդառնալի մասսակար ազդեցություն ունեցող ցանկացած նախատեսված գործունեություն;
- (VI) Ապահովել հասարակության ներգրավումը և մասնակցությունը ՇՄԱՓ բոլոր փուլերում:

5.2 ՇՄԱԳ փուլերը

Մինչև 2002թ. ավարտը փորձաքննությունը կատարվում էր ՇՄԱՓ մասին օրենքի և «ՇՄԱՓ եզրակացության տրման հանձնաժողովի գործունեության ժամանակավոր կարգը հաստատելու մասին» ՀՀ Բնապահպանության Նախարարի 1997թ. հոկտեմբերի 5-ի հրամանի պահանջների համաձայն: Բնապահպանության Նախարարության 2002թ, նոյեմբերի 13-ի N151

հրամանի ընդունումից ի վեր փորձաքննությունն իրականացվում է համաձայն նշված հրամանի:

ՇՄԱԳ գործընթացը բաղկացած է 2 հիմնական փուլերից: Առաջին փուլում ձեռնարկողը նախատեսված գործունեության մասին նախնական փաստաթղթեր է ներկայացնում պետական լիազորված մարմին՝ Բնապահպանության Նախարարությանը: Փաստաթղթերի գնումից հետո լիազորված մարմինը որոշում է կայացնում ՇՄԱՓ անցկացնելու անհրաժեշտության մասին: Եթե ՇՄԱՓ անցկացնելն անհրաժեշտ է, ձեռնարկողը ներկայացնում է պահանջվող փաստաթղթերը նույն մարմնին: Երկրորդ փուլում իրականացվում է փորձաքննություն: Ստորև ներկայացվում են ՇՄԱՓ բոլոր փուլերը ավելի մանրամասն.

- Ձեռնարկողը, որ նախատեսում է իրականացնել որևէ գործունեություն, ներկայացնում է անհրաժեշտ փաստաթղթերը /3 օրինակ/ ՀՀ Բնապահպանության Նախարարություն:
- Նախարարի համապատասխան նշումներով փաստաթղթերը 3 օրվա ընթացքում հասցեագրվում են «Բնապահպանական Փորձաքննություն» ՊՈԱԿ:
- Անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո 6 օրվա ընթացքում «Բնապահպանական Փորձաքննություն» ՊՈԱԿ-ը տեղյակ է պահում ազդակիր համայնքների ղեկավարներին և հասարակությանը պլանավորված գործունեության իրականացման ձեռնարկման մասին:
- Փորձաքննության ներկայացված փաստաթղթերը ստանալուց հետո «Բնապահպանական Փորձաքննություն» ՊՈԱԿ-ը 30 օրվա ընթացքում նախնական գնահատման հիման վրա որոշում է՝ իրականացնել ՇՄԱՓ, թե ոչ, և տեղյակ է պահում ձեռնարկողին:
- ՇՄԱՓ իրականացման անհրաժեշտության դեպքում ձեռնարկողը «Բնապահպանական Փորձաքննություն» ՊՈԱԿ-ին ներկայացնում է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը /3 օրինակ/:
- Փաստաթղթերը ստանալուց հետո «Բնապահպանական Փորձաքննություն» ՊՈԱԿ-ը 5 աշխատանքային օրվա ընթացքում դրանց պատճեններով ապահովում է մարզերի և համայնքների ղեկավարներին, համապատասխան պետական մարմիններին, ազդակիր համայնքներին և լիցենզավորված փորձագետներին:
- «Բնապահպանական Փորձաքննություն» ՊՈԱԿ ղեկավարը փորձագետ կամ փորձագետների խումբ է նշանակում փորձաքննության գործընթացը իրականացնելու համար:
- Նորմատիվ-օրենսդրական կարևոր փաստաթղթերի և ՇՄԱԳ հիման վրա 4 օրվա ընթացքում «Բնապահպանական Փորձաքննություն» ՊՈԱԿ-ը որոշում է (I) շրջակա միջավայրի և ազդակիր համայնքների վրա գործունեության ազդեցության աստիճանը; (II) փորձաքննության գործընթացի ծավալը, տևողությունը և արժեքը:
- «Բնապահպանական Փորձաքննություն» ՊՈԱԿ ղեկավարը ձեռնարկողի հետ համապատասխան պայմանագիր է ստորագրում փորձաքննության գործընթացի իրականացման մասին:
- «Բնապահպանական Փորձաքննություն» ՊՈԱԿ-ն անմիջապես փաստաթղթերով է ապահովում մարզերի և համայնքների ղեկավարներին, այնուհետև 30 օրվա ընթացքում ուսումնասիրում է փաստաթղթերը և ձեռնարկողի հետ կազմակերպում հասարակական լսումներ:
- Եթե ազդակիր համայնքները մեկից ավել են, «Բնապահպանական Փորձաքննություն» ՊՈԱԿ-ը որոշում է լսումների վայրը /իրականում հանդիպումները և լսումները կազմակերպում է ձեռնարկողը, իսկ «Բնապահպանական Փորձաքննություն» ՊՈԱԿ-ը որոշում է՝ որ համայնքները կարող են ենթարկվել հնարավոր ազդեցության/:
- Նշված պայմանների վերաբերյալ հասարակական կարծիքը ձեռնարկողի կողմից ներկայացվում է համայնքի և «Բնապահպանական Փորձաքննություն» ՊՈԱԿ ղեկավարներին:
- «Բնապահպանական Փորձաքննություն» ՊՈԱԿ-ը անհրաժեշտության դեպքում կարող է պաշտոնապես դիմել պետական մարմինների կամ նախարարության համապատասխան ստորաբաժանումների՝ մասնագիտական կարծիք ստանալու համար:

- Ազդակիր համայնքների ղեկավարները 30 օրվա ընթացքում «Բնապահպանական Փորձաքննություն» ՊՈԱԿ են ներկայացնում հասարակական և իրենց կարծիքները:
- Եթե կազմակերպությունը սահմանված ժամկետի ընթացքում որևէ կարծիք չի ստանում, ապա փաստաթղթերի վերաբերյալ կարծիքը համարվում է դրական:
- Եթե կան թերություններ, բացթողումներ, լիարժեք փորձաքննություն անցկացնելու համար նոր հիմքի կամ լրացուցիչ փաստաթղթերի կարիք, «Բնապահպանական Փորձաքննություն» ՊՈԱԿ-ը պաշտոնապես պահանջում է ձեռնարկողից որոշված ժամկետում ներկայացնել լրամշակված փաստաթղթերը: Այս դեպքում փորձաքննության գործընթացը համարվում է հետաձգված:
- Որոշված ժամկետում փաստաթղթերը չեն ներկայացնելու դեպքում «Բնապահպանական Փորձաքննություն» ՊՈԱԿ-ը այդ մասին հայտնում է ՀՀ Բնապահպանության Նախարարության Պետական բնապահպանական տեսչությանը:
- Մասնագիտական եզրակացությունը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում «Բնապահպանական Փորձաքննություն» ՊՈԱԿ-ը կազմակերպում է հասարակական լուծումներ:
- Հասարակական լուծումներից հետո 20 օրվա ընթացքում, հիմնվելով մասնագիտական եզրակացությունների և հասարակական քննարկումների վրա, ՊՈԱԿ-ը պատրաստում է փորձաքննության եզրակացության նախագիծը և այն ուղարկում նախարարության համապատասխան ստորաբաժանումներ, որոնք փորձաքննության եզրակացության նախագիծն են կցում իրենց գրավոր կարծիքը:
- Եթե սահմանված ժամկետի ընթացքում որևէ կարծիք չի ներկայացվում, ապա այն համարվում է դրական:
- Բնապահպանության Նախարարության տարբեր ստորաբաժանումների միջև անհամաձայնության դեպքում «Բնապահպանական Փորձաքննություն» ՊՈԱԿ-ը կազմակերպում է նախնական քննարկումներ, որտեղ հրավիրվում են մասնակցելու ոչ միայն այս ստորաբաժանումների ներկայացուցիչներ, այլև այլ մասնագետներ: Միայն համաձայնության հասնելուց հետո է որոշման նախագիծը հանձնվում փորձաքննության որոշման հաստատման համար պատասխանատու հանձնաժողով՝ քննության:
- «Բնապահպանական Փորձաքննություն» ՊՈԱԿ ղեկավարը եզրակացությունը ներկայացնում է նախարարին՝ հաստատման համար:
- Նախարարի կողմից հաստատվելուց հետո փորձաքննության եզրակացությունը տրվում է ձեռնարկողին:

5.3 Փորձաքննության համար անհրաժեշտ փաստաթղթերը /Reporting/

ՇՄԱԳ մասին օրենքի 5.1 հոդվածն ամրագրում է հետևյալը.

- Նախատեսված գործունեության՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրումը և գնահատումը,
- Այլընտրանքային լուծումներ, այդ թվում՝ գրոյական գործողության այլընտրանք /նախատեսվող գործունեության բացառում/, դրանց համեմատական վերլուծություն և առավել ընդունելի տարբերակի ընտրություն,
- Շրջակա միջավայրի վրա նախատեսված գործունեության հնարավոր ազդեցության վերացման կամ նվազեցման միջոցառումներ,
- Նախատեսված գործունեության բնապահպանական վնասակար ազդեցության պատճառով ընտրված գրոյական տարբերակի դեպքում տնտեսական և սոցիալական զարգացման և շրջակա միջավայրի վրա հետևանքների մանրակրկիտ գնահատում:

Համաձայն այս պայմանների՝ 6.2 հոդվածն ամրագրում է այն պահանջները, որ ներկայացվում են նախատեսված գործունեության վերաբերյալ դիմումի բովանդակությանը /նախնական փաստաթղթեր/: Նախնական փաստաթղթերը պետք է ներառեն հետևյալ ինֆորմացիան.

- Նախատեսվող գործունեության մասին հիմնական տվյալներ, մասնավորապես՝ անվանումը, տեղադրման վայրը, նպատակը, բնութագիրը, ծավալ, սկսելու և ավարտելու ժամկետները;
- Նախատեսվող գործունեության համար անհրաժեշտ հողատարածքի չափը, էներգիայի, ջրի և հումքի վերաբերյալ պահանջները;
- Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումների համառոտ նկարագիրը;
- Շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության ազդեցության հիմնական տվյալները, շրջակա միջավայրի առանձին բաղաձայնների վրա հնարավոր ազդեցության և վտանգավորության աստիճանը;
- Ազդակիր համայնքի որոշումը տվյալ վարչատարածքային միավորի զարգացման պլանին նախատեսվող գործունեության համապատասխանության մասին;
- Ազդակիր համայնքի որոշումը հողահատկացման մասին;
- Համապատասխան պետական մարմնի կարծիքը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ արտոնագիրը:

Համաձայն 7.2 հոդվածի՝ փաստաթղթերի ցուցակը և տեղեկությունների ծավալները պետք է որոշվեն կառավարության որոշմամբ:

5.4 Ընտրություն /Screening/

ՇՄԱՓ մասին օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է ՇՄԱՓ ենթակա նախատեսվող գործունեությունների ցանկը: Ինչպես արդեն նշվել է, այդ հոդվածի ցուցակում տրված բոլոր տեսակի գործունեությունների նախնական փաստաթղթերը պետք է զննության համար ներկայացվեն լիազորված մարմնին: Նախնական ուսումնասիրության փուլում փաստաթղթերը պետք է պարունակեն նախատեսվող գործունեության վերաբերյալ ընդհանուր տվյալներ, նրա արտադրողականության, տեղադրման վայրի և շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության մասին: Բնապահպանության Նախարարությունը քննարկում է ներկայացված փաստաթղթերը և որոշում է կայացնում ՇՄԱՓ անհրաժեշտության մասին:

Համաձայն 4.2 հոդվածի՝ Կառավարության 1999թ. մարտի 30-ին ընդունած N193 Որոշումը հաստատում է ՇՄԱՓ ենթակա սահմանային չափերի ցուցակը: Այնպիսի ցուցանիշների սահմանային չափերը, ինչպիսիք են արտադրողականությունը, ծավալը, զբաղեցրած տարածքը և այլն, տրված են ցուցակում: Ավելի բարձր ցուցանիշներ ունեցող նախատեսված գործունեությունը պետք է անցնի ՇՄԱՓ:

4.4 հոդվածը ևս հաստատում է, որ լիազորված պետական մարմինը կարող է որոշել անցկացնել ՇՄԱՓ նույնիսկ այն դեպքերում, երբ նախատեսված գործունեությունը չի գերազանցում հաստատված սահմանային չափերը հետևյալի հիման վրա.

- Այն վարչատարածքային միավորի նախաձեռնությունը, որտեղ պլանավորվում է անցկացնել գործունեությունը;
- Նախարարությունների և պետական իշխանության այլ մարմինների նախաձեռնությունը;
- Հասարակական կազմակերպությունների և առանձին խմբերի նախաձեռնությունը;
- Լիազորված մարմնի սեփական նախաձեռնությունը:

ՇՄԱՓ մասին օրենքի 15.1 հոդվածն ամրագրում է պարտադիր ՇՄԱՓ ենթակա հայեցակարգերի ցուցակը:

5.5 Որոշումների ընդունում

ՇՄԱՓ մասին որոշումների կայացման հիմքն է.

- Նախատեսվող գործունեության նախագծի ուսումնասիրության համար «Բնապահպանական Փորձաքննություն» ՊՈԱԿ-ի կողմից հրավիրված լիցենզավորված փորձագետների մասնագիտական որոշումը /Յուլի 9/;
- Բնապահպանության Նախարարության և այլ պետական մարմինների որոշումները և առաջարկությունները /Յուլի 8/;
- Տեղական ինքնակառավարման մարմինների եզրակացությունները և առաջարկությունները/Յուլի 8 և 10/;
- Հասարակական լսումների նյութերը /Յուլի 8/.

Հիմնվելով փորձաքննության նյութերի վրա՝ «Բնապահպանական Փորձաքննություն» ՊՈԱԿ-ը մշակում է ՇՄԱԳ մասին որոշման նախագիծը, որը քննվում է փորձագետներին լիցենզավորող հանձնաժողովի կողմից և հաստատվում Բնապահպանության Նախարարի կողմից:

ՇՄԱԳ մասին որոշումն անվավեր է դառնում, եթե թույլտվություն տալուց հետո մեկ տարվա ընթացքում նախատեսված գործունեությունը չի սկսվում:

5.6 Սոնիտորինգ, հսկողություն և վերահսկողություն

Օրենքի 9-րդ հոդվածի 7-է կետում ասվում է, որ փորձաքննության ընթացքում դիտարկվում են շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության վնասակար ազդեցության բացառման կամ նվազեցման, ինչպես նաև նախատեսված գործունեության կիրառման և շահագործման միջոցառումների և անհրաժեշտ պայմանների վերաբերյալ առաջարկությունները, ինչը կարելի է հասկանալ նաև որպես մոնիտորինգի իրականացման անուղղակի պահանջ:

Բացի այդ, Օրենքի 16-րդ հոդվածի 2-է կետում ուղղակիորեն ամրագրված է, որ մոնիտորինգը պետք է հսկվի լիազորված մարմնի՝ Բնապահպանության Նախարարության Պետական բնապահպանական տեսչության կողմից: Նախատեսվող գործունեության հսկողությունը և վերահսկողությունը կարող են իրականացվել միայն աշխատանքները սկսելուց հետո:

Համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի՝ նախատեսվող գործունեության իրականացումը թույլատրվում է միայն դրական փորձաքննական եզրակացությունից հետո: Բացասական եզրակացության դեպքում գործունեության իրականացումը չի թույլատրվում: Չնայած այն բանին, որ ՇՄԱԳ մասին օրենքում ուղղակիորեն ասված չէ, որ դրական եզրակացությունը կարող է ներառել ինչ-որ պայմաններ կամ պահանջներ, սակայն այնտեղ ասված է, որ «եզրակացության պայմանների խախտման դեպքում լիազորված մարմինը՝ Պետական Բնապահպանական տեսչությունը, պարտավոր է մասնակիորեն կամ ամբողջովին փակել, կասեցնել կամ արգելել նախատեսված գործունեության իրականացումը, մինչև փորձաքննության եզրակացության պայմանների ապահովումը», ինչպես նաև լիազորված մարմինն իրավասում է հսկողություն իրականացնել փորձաքննության եզրակացության պայմանների կատարման նկատմամբ:

Համաձայն Բնապահպանության Նախարարության կանոնադրության՝ «Բնապահպանական Փորձաքննություն» ՊՈԱԿ-ը հսկելու և վերահսկելու լիազորությունն չունի: Դա Բնապահպանության Նախարարության Պետական բնապահպանական տեսչության պատասխանատվությունն է, որը պետք է ստանա փորձաքննության եզրակացության մի օրինակը: Այս փաստաթղթի հիման վրա Պետական բնապահպանական տեսչությունն իրականացնում է բնապահպանական հսկողության պլանավորված և կանոնավոր գործունեություն՝ ներառյալ պայմանների և եզրակացության մեջ որոշված պահանջների կատարման հսկողությունը և անհրաժեշտության դեպքում կիրառում է համապատասխան պատժամիջոցներ:

5.7 ՇՄԱԳ-ից ազատում

Պետական և Ծառայողական Գաղտնիքի մասին Օրենքը /1996թ./ ամրագրում է ՇՄԱԳ համար փակ բնագավառները, ինչպիսիք են. ռազմական պաշտպանության, ռազմական արդյունաբերության և դրան կից բնագավառները, ազգային անվտանգությունը, ռազմավարական պլանավորումը: Նշված օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետը որոշակիացնում է այն դեպքերը, որոնք չեն համարվի Պետական և Ծառայողական Գաղտնիք: Հոդվածի այդ կետը կիրառելի է բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառների համար:

5.8 Խախտման համար պատասխանատվություն

Իրավական ակտերով սահմանված ՇՄԱԳ-ի գործընթացի խախտման համար պատասխանատվությունը սահմանված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով և ՀՀ Քրեական Օրենսգրքով:

Քաղաքաշինության բնագավառում խախտումների պատասխանատվության մասին օրենքն ընդունվել է 1999թ. ապրիլի 28-ին: Օրենքի 12-րդ հոդվածն ամրագրում է, որ եթե հաստատված նախագծերի, ստանդարտների, գործընթացների և տեխնիկական հսկողության պայմանների խախտումները մարդկանց և շրջակա միջավայրի համար վտանգ չեն ներկայացնում և կարող են վերացվել առանց գործընթացի ընդհատման, ապա խախտման համար վարչական պատիժը կազմում է նվազագույն աշխատավարձի հինգապատիկը:

Եթե վերը նշված խախտումները վտանգ են ներկայացնում մարդկանց և շրջակա միջավայրի համար և չեն կարող վերացվել առանց շինարարական գործընթացի ընդհատման, ապա վարչական պատիժը կկազմի նվազագույն աշխատավարձի երեք հարյուրապատիկը, և կազմակերպությունը կզրկվի շինարարության թույլտվությունից:

ՀՀ օրենսդրության մեջ ՇՄԱՓ բնագավառում խախտումների համար տույժեր նշված չեն:

5.9 Անդրսահմանային ենթատեքստ

Օրենքի 14-րդ՝ «Շրջակա միջավայրի վրա միջսահմանային ազդեցություն ունեցող նախատեսվող գործունեության փորձաքննությունը» հոդվածով սահմանված է շրջակա միջավայրի վրա ՀՀ սահմանից դուրս ազդեցություն ունեցող նախատեսվող գործունեության վերաբերյալ լիազորված մարմնի կողմից փորձաքննական եզրակացություն կազմելիս ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերի պահանջներով առաջնորդվելու, ինչպես նաև փորձաքննական եզրակացությունը ՀՀ կառավարության կողմից հաստատելու դրույթը:

Ինչ վերաբերում է օրենքով ընդունված սահմանային չափերին, որոնք ընդօրինակված են անդրսահմանային ենթատեքստում ՇՄԱԳ-ի կոնվենցիայից, ապա այդ չափերի գաղափարը կարելի է պահպանել անդրսահմանային ազդեցություն ունեցող օբյեկտների՝ հարևան պետությունների հետ ՇՄԱԳ-ի իրականացման դեպքում, և դրանք պետք է ներկայացված լինեն որևէ իրավական ակտով: Այսպիսով, Օրենքով սահմանված գործունեության հզորության սահմանային չափերը պետք է ունենան ոչ թե պարտադիր, այլ խորհրդատվական բնույթ:

5.10 Հասարակության մասնակցությունը

Համաձայն ՇՄԱՓ մասին օրենքի՝ հասարակության մասնակցությունը պետք է ապահովել ՇՄԱՓ գործընթացի տարբեր փուլերում: Նախնական փուլում, ձեռնարկողից մտադրության մասին դիմում /նախնական փաստաթղթեր/ ստանալուց հետո 7 օրվա ընթացքում լիազորված

մարմինը /Բնապահպանության նախարարություն/ հայտնում է այդ մասին տեղական ինքնակառավարման մարմինն և համայնքի բնակչությանը /Յոթված 6.3/: Համայնքի տեղական ինքնակառավարման մարմինը և ձեռնարկողը 15 օրվա ընթացքում կազմակերպում են հասարակական լսումներ /Յոթված 6.4/:

Երկրորդ հասարակական լսումը պետք է կազմակերպվի ՇՄԱՓ իրականացման փուլում /ՇՄԱՓ անհրաժեշտության մասին որոշում կայացնելուց հետո/, երբ լիազորված մարմինը ստացած փաստաթղթերից մի օրինակ ուղարկում է այն ազդակիր համայնքի ղեկավարին: Համայնքի տեղական ինքնակառավարման մարմինը, ձեռնարկողի և լիազորված մարմնի հետ համատեղ, 30 օրվա ընթացքում կազմակերպում են հասարակական լսումներ:

Երրորդ լսումը պետք է կազմակերպվի այն բանից հետո, երբ լիցենզավորված փորձագետները ՇՄԱՓ մասին մասնագիտական եզրակացություն են ներկայացնում: Լիազորված մարմինը պետք է 30 օրվա ընթացքում հասարակական լսում կազմակերպի այլ պետական կառույցների, համայնքային ղեկավարների և անհատ փորձագետների մասնակցությամբ /հոդվածներ 10.1-10.4/:

6 Հայաստանի ՇՄԱԳ համակարգի արդյունավետության վերլուծությունը

6.1 Արտաքին գործոնները

ՇՄԱԳ համակարգի արդյունավետությունը կախված է բազմաթիվ գործոններից, առաջին հերթին՝ հասարակական պահանջից և իշխանությունների՝ ՇՄԱԳ կատարելագործված համակարգ ներդնելու պատրաստակամությունից: Այն փաստը, որ նման համակարգը ծագել և իր հիմնական զարգացումը ստացել է կայացած ժողովրդավարությամբ երկրներում, ապացուցում է, որ ՇՄԱԳ համակարգն արդյունավետ կարող է գործել միայն հասարակության իրական ժողովրդավարացման պայմաններում:

6.1.1. Հասարակության ժողովրդավարացումը

Ժողովրդավարությունը Հայաստանում դանդաղ է արմատավորվում, և հենց դա է ՇՄԱԳ համակարգի ցածր արդյունավետության հիմնական պատճառը: Հայաստանի ղեկավարությունը բազմիցս հայտարարել է Եվրոպական արժեքներին համապատասխանելու և Եվրոպական կառույցներին ինտեգրվելու իրենց ջանքերի մասին, սակայն բազմաթիվ միջոցառումներ, որոնք ուղղված են իշխանությունների գործունեության թափանցիկության բարձրացմանը, հասարակությանը հաշվետու լինելուն և հատկապես մշտապես թմբկահարվող կաշառակերության դեմ պայքարին, տեսանելի չեն բնակչության մեծամասնության համար:

Իրական բարեփոխումների հիմնական ցուցանիշը բնակչության դերի մեծացումն է պետական կառավարման համակարգի /երկրի նախագահ, Ազգային ժողով, տեղական ինքնակառավարման մարմիններ/ ձևավորման մեջ՝ ընտրությունների միջոցով: Սակայն իրար հաջորդող ընտրություններն անց են կացվում բազմաթիվ խախտումներով, վարչական լծակների օգտագործումով, քրեական տարրերի մասնակցությամբ, ընտրողների ձայների «գնումով» և այլն: Եվ չնայած բոլոր պահանջներին և իշխանությունների հավաստումներին, որ խախտումների հեղինակները կպատժվեն, առ այսօր չի եղել որևէ նախադեպ, երբ պատժվեն խախտումների իրական պատվիրատուները. միայն որոշ կամակատարներ են ենթարկվում պատասխանատվության: Ընտրական օրենսդրությունը բազմիցս բարեփոխվել է, փոխվել են ընտրական հանձնաժողովների ձևավորման սկզբունքները, մեծանում են դիտորդների քանակները, սակայն իրական առաջընթաց չկա:

Եական նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որի մասին նշում էին բազմաթիվ դիտորդներ, որ ընտրողներն իրենք էին առաջարկում իրենց ձայները չնչին գումարի դիմաց:

6.1.2. Պետական կառավարման համակարգի արդյունավետությունը

Ազգաբնակչության կենսամակարդակը բնութագրող բազմաթիվ ցուցանիշերով Հայաստանը ետ է մնում ԱՊՀ երկրների մեծամասնությանից /ԱՊՀ վիճակագրական կոմիտե, Տարեկան հաշվետվություն, Մոսկվա, 2002/: Հայաստանի տնտեսությանը բնորոշ են կլանային համակարգը, հիմնական տնտեսական և ֆինանսական կարողությունների կուտակումը խիստ սահմանափակ թվով մարդկանց ձեռքերում, իրական մրցակցության բացակայությունը: Տեղի է ունենում խոշոր բիզնեսի և չինովնիկական ապարատի սերտաճում: Սովետային տնտեսության չափերի և ֆինանսական վերնախավի անվերահսկելիության մասին գրում են նույնիսկ իշխանամետ լրատվամիջոցները:

Չնայած անընդհատ ընթացող բարեփոխումներին՝ պետական կառավարման համակարգը գործում է ցածր արդյունավետությամբ, իրավապահ մարմինները վերահսկվում են առանձին բարձրաստիճան պաշտոնյաների կողմից, առանձնապես շատ դժգոհություններ է առաջացնում դատական համակարգը: Չնայած եվրոպական կառույցների ճնշման հետևանքով վերջին տարիներին կատարվել են դատական համակարգի որոշակի բարեփոխումներ, իրական անկախություն այստեղ դեռ չկա, և շատ դեպքերում պետական մարմիններին դիմակայող անձը կամ կողմը տանուլ է տալիս: Իսկ այն սակավաթիվ դեպքերում, երբ այնուամենայնիվ հաջողվում է հասնել դատարանի արդարացի վճիռի, պետական մարմինները կարող են անպատիժ կերպով անտեսել դատարանի վճիռը: Ի հաստատումն վերը բերվածի, համաձայն բազմաթիվ հարցումների առավել կոռուպացված է համարվում հենց դատական համակարգը:

Շատ վերլուծաբաններ նշում են պետական կառավարման ապարատի ուռճացվածությունը և անարդյունավետությունը: Մեծաքանակ նախարարությունները և վարչությունները, մեծաթիվ հաստիքացուցակները, պարտականությունների անհստակությունը և կրկնությունները ոչ միայն պարարտ հող են ստեղծում կաշառակերության համար, այլև խոչընդոտում են ամբողջ պետական ապարատի արդյունավետ աշխատանքին և ծառայում են հիմնականում չինովնիկների պահանջների բավարարմանը:

6.1.3. Կոռուպցիան

Երկրի նախագահի, կառավարության անդամների, պատգամավորների ելույթների հիմնական թեման կաշառակերության դեմ պայքարն է: Տարբեր տեսակի խորհրդակցությունների և հավաքների ժամանակ քննարկվում են պետական ապարատի կոռուպացվածության նվազեցման տնտեսական, վարչական, բարոյական նախադրյալների ստեղծմանն ուղղված միջոցները: Կառավարությունը կաշառակերության դեմ միջոցներ մշակելու համար տարբեր միջազգային ատյաններից ստանում է դրամաշնորհներ: Նախագահը նշանակել է կաշառակերության դեմ պայքարի հարցերով խորհրդական, իսկ 2004 թ. նախագահի հրամանագրով ստեղծվել է հատուկ հանձնաժողով նույնպես կաշառակերության դեմ պայքարելու նպատակով:

Ամենայն հավանականությամբ երկրի ղեկավարությունը իսկապես ձգտում է հնարավորին չափով նվազեցնել կաշառակերության աստիճանը: Իր բազմաթիվ ելույթներում նախագահի խորհրդականը թվարկում է այդ պայքարի հիմնական ուղղությունները. համապատասխան իրավական դաշտի և տնտեսական պայմանների ստեղծում, իշխանությունների գործունեության թափանցիկություն, հասարակության կողմից վերահսկում լրատվամիջոցների օգնությամբ, անկախ դատական համակարգի կայացում:

Հարցման շատ մասնակիցներ որպես կաշառակերության հիմնական պատճառներ նշում են հետևյալ գործոնները. գործնականում բոլոր մակարդակի պետական ծառայողների անպատժելիությունը, բյուջետային համակարգի ցածր աշխատավարձերը, չափազանց մեծ սոցիալական բեռնացումը, անարդար և անարդյունավետ դատական համակարգը, բնակչության մեծամասնության հանդուրժողականությունը: Վերջապես, բազմաթիվ մասնակիցներ որպես կաշառակերության հիմնական պատճառ նշում են այն հանգամանքը, որ նուրբիսկ ցանկության դեպքում անարդար և ոչ թափանցիկ ընտրություններով ձևավորված իշխանությունը չի կարող արդյունավետ կերպով պայքարել կաշառակերության դեմ:

6.1.4. Տնտեսական իրավիճակը

ՇՄԱԳ արդյունավետության վրա ազդեցություն ունեցող հիմնական պատճառներից է նաև տնտեսական ակտիվության աստիճանը, և թեկուզ վերջին տարիներին կառավարությունը անընդհատ հայտարարում է տնտեսական աճի աննախադեպ տեմպերի մասին, հասարակության ընկալման մեջ գոյություն ունեն այլ պատկերացումներ: Տնտեսական աճի և առողջացման արտաքին դրսևորումները հիմնականում կապված են տարբեր հիմնադրամների գործունեության հետ, որոնք ֆինանսավորվում են արտասահմանյան դոնորների և հիմնականում սփյուռքի կողմից:

Գործազրկությունը և աշխատանքի չափազանց ցածր վարձատրությունը ստիպում են մարդկանց աշխատանք գտնելու նպատակով մեկնել այլ երկրներ: Ամենահամեստ հաշվարկներով վերջին 10 – 15 տարվա ընթացքում Հայաստանը լքել են առնվազն մեկ միլիոն մարդ՝ բնակչության մոտ մեկ երրորդ մասը /ՄԱԶԾ, Հայաստան, Սարդկային զարգացման հաշվետվություն, 1996թ, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տարեկան հաշվետվություններ/:

Հայաստան մտնող ֆինանսական հոսքերի մեջ զգալի մաս են կազմում աշխատանքի մեկնած մարդկանց փոխանցումները իրենց ընտանիքներին և հարազատներին: Լրատվամիջոցներում բերվող տեղեկություններից տարեկան միայն բանկային համակարգով Հայաստան մուտք է գործում ավելի քան 200 մլն. ամերիկյան դոլար:

Խորհրդային տարիներին Հայաստանը համեմատաբար զարգացած արդյունաբերական հանրապետություն էր: Անկախացումից հետո իրավիճակը կտրուկ փոխվեց: Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետ կապված տնտեսական շրջափակումը, նախկին ԽՍՀՄ և արևելյան Եվրոպայի շուկաների կորուստը, արդյունաբերական ձեռնարկությունների մեծամասնության արտադրանքի անմրցունակությունը բերեցին տնտեսական փլուզման:

90-ականների սկզբում Հայաստանում տեղի ունեցավ քաղաքական համակարգի փոփոխություն: Կատարվեց անցում դեպի կառավարման նախագահական համակարգ, իրականացվեց պետական ունեցվածքի սեփականաշնորհում և կառավարման համակարգի ազատականացում: Արդյունքում արդյունաբերական ներուժի մեծ մասը փոշիացավ, սեփականատեր դարձան մարդիկ, որոնք չէին ցանկանում և ունակ էլ չէին իրականացնելու տնտեսական գործունեություն, իսկ չափազանցված ազատականացումը հանգեցրեց տնտեսական գործընթացների կարգավորման և տնտեսական աճի խթանման հարցերում պետության դերի խիստ նվազեցմանը:

Ի վերջո գիտատար տեխնոլոգիական արտադրությունները կորցրեցին պահանջարկը, իսկ տնտեսության զարգացումը տեղի էր ունենում պարզունակ գյուղատնտեսական և սննդարդյունաբերական ճյուղերի հաշվին, ինչն իր հերթին գիտության հետընթացի և մասնագետների կորստի պատճառ հանդիսացավ:

Նման փոփոխությունների արդյունքում որոշակիորեն բարելավվեց շրջակա միջավայրի որակը: Արդյունաբերական արտադրանքի կտրուկ կրճատումը, գյուղատնտեսությունում

պարարտանյութերի և թունաքիմիկատների օգտագործման նվազումը, էներգիայի արտադրության ծավալների կրճատումը էականորեն նվազեցրեցին մթնոլորտի, ջրային պաշարների և հողի աղտոտվածությունը: Սակայն հետագա էներգետիկ ճգնաժամի արդյունքում սկսվեց բնական պաշարների անխնա օգտագործում և հատկապես անտառների ոչնչացում և Սևանի մակարդակի անկում:

Ներկայումս երկրի իշխանությունները փորձում են անցնել տնտեսական զարգացման կարգավորվող շուկայական մոդելին: Մշակվում են տնտեսության առանձին ճյուղերի զարգացման ծրագրեր, գիտատար ճյուղերի խթանման իրավական և վարչական մեխանիզմներ և այլն: Ցավոք սրտի, չնայած բոլոր ջանքերին, շարունակվում է աշխատունակ բնակչության արտահոսքը:

ՇՄԱՓ համար ներկայացված նախագծերի վերլուծությունը ցույց տվեց, որ դրանց մեծամասնությունը սոցիալական ուղղվածության, քաղաքային ենթակառուցվածքի և սպասարկման ոլորտի կառույցներ են, որոնք չեն կարող էականորեն ազդել շրջակա միջավայրի վրա, և փորձաքննությունը ունի ձևական բնույթ:

6.1.5. Հասարակության մասնակցությունը

Անհրաժեշտ է նշել, որ հասարակությունը դեռ լիովին պատրաստ չէ իր շահերի և իրավունքների համար պայքարին: Հասարակության լայն խավերի անհաղորդակցությունը ծանր տնտեսական կացության և դրական փոփոխությունների հնարավորությանը մարդկանց հավատի կորստի արդյունք է: Բնակչության և հասարակական կազմակերպությունների ակտիվությունը սահմանափակվում է հարցերի նեղ շրջանակով: Հիմնականում դրանք կապված են երևանի կենտրոնական մասի կառուցապատման, կանաչ տարածքներում /այգիներ, սիզամարգեր/ առևտրային օբյեկտների և մասնավոր առանձնատների կառուցման հետ:

Հիշատակման է արժանի 2001 – 2002 թվականների Երևանի բնակչության կողմից սիրված Հաղթանակի զբոսայգում կառուցվող հյուրանոցային համալիրի կառուցման հետ կապված իրավիճակը: Գործնականում բոլոր բնապահպանական հասարակական կազմակերպությունները, բնակչության և լրատվամիջոցների բազմաթիվ ներկայացուցիչներ միավորվեցին՝ փորձելով կանխել այդ շինարարությունը: Դիմումներ էին ուղարկվել երկրի և Երևան քաղաքի ղեկավարությանը, Գլխավոր դատախազությանը: Իր հեռուստատեսությամբ դատախազության ներկայացուցիչը նշել էր, որ այս դեպքում խախտվել են ՀՀ մի քանի օրենքներ, այդ թվում նաև «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» օրենքը: Սակայն չնայած դրան՝ մեկ օր անց երկրի նախագահը հեռուստատեսությամբ միաժամբորեն պաշտպանեց հյուրանոցի շինարարությունը՝ դրանով իսկ զգալի հարված հասցնելով բնակչության հավատին դեպի իշխանությունների ցանկությունը՝ հաշվի նստել հասարակական կարծիքի հետ և պահպանել օրինականությունը:

Առանձնապես ցավոտ է ընկալվում զբոսայգիներում, կանաչապատ տարածքներում, անտառային գոտիներում հողահատկացման հարցը, և գործնականում հարցումների բոլոր մասնակիցները /նույնիսկ շատ անանուն պետական ծառայողներ/ ընդգծեցին, որ այս իրավիճակը ցույց է տալիս կաշառակերության դեմ իրական պայքար ծավալելու իշխանությունների անկարողությունը:

Մեծ դժվարությամբ, բայց բազմաթիվ հասարակական կազմակերպությունների ակտիվությունը բերում է իր որոշակի արդյունքները, մասնավորապես՝ Երևանի օդակաձև զբոսայգու և Դավնայի այգիների կառուցապատման հարցում: Եվ թեկուզ խախտումները շարունակվում են, բայց արդեն մասսայական բնույթ չունեն: 2004 թ. ապրիլի 4-ին տեղի ունեցավ հասարակական քննարկում, որը տարբերվում էր նախորդներից նրանով, որ նախածեռնվել էր հասարակության կողմից /կանաչ գոտիների պաշտպանող ՀԿ-ների

Կուալիտիվ/։ Այս քննարկումը, որը չկարողացան անտեսել Երևանի քաղաքապետարանի և կառավարության ներկայացուցիչները, լայն հասարակական արձագանք ունեցավ։

Միևնույն ժամանակ, ՇՄԱՓ օրենքի պահանջների հիման վրա ձեռնարկողի և տեղական իշխանությունների կողմից իրականացվող հասարակական լուսման ժամանակ բնակչության և ՀԿ-ների ակտիվությունը շատ ցածր է։

Հասարակական լուսման իրականացման արակտիկայի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանք սկիզբ են առել 2000թ. և վերաբերվել են Երևանում կառուցվող սպասարկման ոլորտի օբյեկտների հասցեին արված բնակչության և ՀԿ-ների բողոքներին։ Այս լուսմանը կայանում էին բողոքների առարկա շինությունների տարածքում /բնակելի շենքերի, բենզալցակայանների մոտակայքում/։ Հետագայում լուսման վայրերը ընդարձակվել են՝ դուրս գալով Երևանի սահմաններից։ Լուսմանը կայանում էին համայնքների կողմից հատկացված վայրերում /դահլիճներ, դպրոցներ և այլն/։ Այս լուսմանը կազմակերպվում էին կամայական կերպով, հաճախ տեղում որոշվող կարգով, թերություններով և անհամաչափ ձևով։ Թեկուզ օրենքով սահմանված է կազմակերպել երեք լուսման յուրաքանչյուր նախաձեռնվող գործունեության համար, իրականում կազմակերպվում է լավագույն դեպքում միայն մեկը /սովորաբար նախատեսվող գործունեության նախագծային փաստաթղթերի քննարկման համար/։

Վերլուծությունը ցույց տվեց, որ իրական լուսման կազմակերպվում են հայտերի միայն 5 տոկոսի համար /և ինչպես նշվեց՝ միայն մեկական անգամ/։ Պատճառները հետևյալն են.

- երեքական լուսման կազմակերպման պահանջը անկախ գործունեության ծավալներից և շրջակա միջավայրի վրա ազդեցության չափից,
- հասարակական լուսման անցկացման կարգի բացակայությունը,
- լիազորված մարմնի կողմից հասարակության ներգրավման, տեղեկացվածության և մասնակցության թերագնահատումը։

Հասարակական լուսման վերլուծության արդյունքները հաստատեցին որ.

- հասարակական լուսման ժամանակ գերակայություն ունեն ավելի շուտ սոցիալական, քան բնապահպանական հարցերը,
- բնակչության գիտելիքների և տեղեկացվածության աստիճանը շատ ցածր է, հատկապես գյուղական շրջաններում։

Բնակչությունը որպես կանոն տեղեկացված չէ իր իրավունքների և բնապահպանական որոշումների կայացմանը իր մասնակցության կարևորության մասին։

6.2 Արտաքին գործոններ

6.2.1. ՇՄԱՓ ընթացակարգը

ՇՄԱՓ օրենքում փորձաքննության անցկացման կարգը հստակորեն տրված չէ, այդ պատճառով «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ը գործում է համաձայն Բնապահպանության նախարարի կողմից հաստատված կարգի, որը փաստորեն փոխարինում է օրենքին։ Օրենսդրական բազան պետք է կարգավորի բոլոր մասնակիցների գործողությունները, սկսած ԲՆ և տեղական իշխանություններից մինչև ՀԿ-ները և առանձին փորձագետները։

Իրականում բազմաթիվ վերակառուցման և վերազինման նախագծեր չեն ներկայացվում փորձաքննության, քանի որ ձեռնարկողները և նախնական թույլտվություններ /օրինակ՝

հողահատկացում/ տվող կազմակերպությունների աշխատակիցները ծանոթ չեն օրենքի պահանջներին:

Անհրաժեշտ է նշել, որ ներկայացված փաստաթղթերի ստուգման ընթացքը սովորաբար շատ երկար է տևում, քանի որ հաճախ բացակայում են ստուգողների կողմից պահանջվող փաստաթղթեր կամ տեղեկություն: Ավելին, այդ պահանջների անհրաժեշտությունը ոչ միշտ է ակնհայտ կամ հիմնավորված, քանի որ դա չի կարգավորվում համապատասխան նորմատիվային ակտերով:

Շատ դեպքերում փորձաքննության իրականացումը հետաձգվում է մինչև ձեռնարկողի և «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ի պայմանագիր կնքելը:

ՇՄԱՓ գործընթացը կարգավորող իրավական նորմատիվային փաստաթղթերի բացակայությունը հաճախ հակադրության առիթ է դառնում ձեռնարկողի և փորձաքննությունը իրականացնող մարմնի միջև: Հիմնական վիճահարույց հարցերը հետևյալն են.

- նախագծային փաստաթղթերի փորձաքննության անհրաժեշտության պահանջը,
- մանրամասնությունների ծավալը և աստիճանը,
- պահանջվող համաձայնությունների հիմնավորումը,
- փորձաքննության կողմից պահանջվող շրջակա միջավայրի աղտոտումը նվազեցնող լրացուցիչ միջոցառումների մշակման անհրաժեշտությունը,
- ետնախագծային մոնիտորինգի պահանջը,
- փորձաքննության իրականացման համար պահանջվող վճարի հիմնավորումը:

Ի լրումն Հայաստանում ՇՄԱԳ գործընթացի նշված թերություններին՝ նախագծային փաթեթի երեք օրինակով ներկայացնելու պահանջը և ԲՆ-ից դիտողությունները ստանալու հանգամանքը բոլոր դեպքերում ավելի է բարդացնում իրավիճակը: Մի կողմից այս պահանջը առաջացնում է լրացուցիչ ֆինանսական ծախսեր, մյուս կողմից երկարացնում է փորձաքննության ժամկետը:

6.2.2 Ընտրություն /Screening/

Նախատեսված գործունեության՝ փորձաքննության ենթակայությունը որոշելու գոյություն ունեցող սկզբունքները և չափանիշները, հիմնված գործունեությունների տեսակների ցուցակի և նվազագույն պարամետրերի /արտադրողականության/ վրա, հարցման մասնակիցների կողմից գնահատվել են որպես անորոշ: Գործարարների ներկայացուցիչները կարծում են, որ ՇՄԱԳ անցկացնելու համար անհրաժեշտ է բարձրացնել հզորության շեմը: Այնուամենայնիվ, հարցման մասնակիցների ճնշող մեծամասնությունը գտնում է, որ և՛ փորձաքննության ենթակա գործունեությունների ցուցակը, և՛ սահմանային չափերի ցանկը զգալիորեն բարդացնում են փորձաքննության գործընթացը: Նախ՝ անհնար է /այսօր և ապագայում/ գուշակել գործունեությունների բոլոր տեսակները: Եթե ապագայում ինչ-որ մեկը որոշի իրականացնել գործունեություն, որը ներառված չէ ցուցակում, ապա այն փորձաքննության ենթակա չի լինի, քանի որ չկա ցուցակում, և հետևաբար՝ շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա բացասական ազդեցության վտանգ կգոյանա: Եվ երկրորդ՝ անհնար է սահմանել որոշակի սանդղակ, որը կծառայեր որպես չափանիշ՝ որոշելու համար արդյոք տվյալ գործունեությունը շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն ունի, թե ոչ:

Բացասական ազդեցության հնարավորությունը և դրա սահմանները պետք է որոշվեն յուրաքանչյուր առանձին դեպքի համար՝ հիմնվելով նախատեսված գործունեությունների սանդղակի և ազդեցության ենթակա էկոհամակարգերի կայունության վրա: Կայուն էկոհամակարգում իրականացված որոշակի գործունեությունը կարող է չնչին բացասական ազդեցություն ունենալ, մինչդեռ անկայուն և զգայուն էկոհամակարգում իրականացվելու դեպքում նույն գործունեությունը կարող է անդառնալի հետևանքներ ունենալ:

Այս առումով, փորձաքննությունն անցկացվում է անարդյունավետ կերպով, և ՇՄԱՓ մասին Օրենքով ամրագրված թույլատրելի սահմանների հասկացությունը թույլ չի տալիս լիարժեք փորձաքննություն անցկացնել և բացահայտել շրջակա միջավայրի վրա ամբողջ բացասական ազդեցությունը: Կան դրա բազմաթիվ օրինակներ: Այս տեսակետից ՇՄԱՓ մասին Օրենքում պետք է ներառել գործունեության՝ փորձաքննության ենթակա լինելը որոշող սկզբունքները: Փորձը ցույց է տալիս, որ գործունեության բոլոր տեսակներն էլ պետք է ենթակա լինեն փորձաքննության: Գնահատման խորությունը և մանրամասների մակարդակը կամ որոշակի էկոհամակարգում իրականացվող գործունեության՝ ՇՄԱԳ գործընթացը կորոշվի լիազորված մարմնի կողմից՝ գնահատման նախնական փուլում:

6.2.3 Գնահատման նախնական փուլ /Scoping/

ՇՄԱՓ իրականացնողը նախնական գնահատում չի կատարում, քանի որ օրենսդրությամբ դա չի պահանջվում: Գործնականում նախնական գնահատում մասամբ կատարվում է փորձաքննության սկզբում՝ փորձագետների օգնությամբ:

Հարցվածների մեծամասնությունը գտնում է, որ նախնական գնահատման գործընթացը, կարգը և պատասխանատվությունները պետք է հստակորեն սահմանվեն օրենսդրության մեջ:

6.2.4 Հաշվետվությունները և քննում

Ինչպես արդեն նշվել է, հատուկ օրենսդրական ակտի բացակայության պատճառով ՇՄԱԳ գործընթացը կատարվում է ՇՄԱՓ մասին օրենքի հիման վրա, որը չի պարունակում հատուկ հոդվածներ, պահանջներ և մեթոդակարգ՝ ներառյալ ՇՄԱԳ նպատակները, գործունեությունները, սկզբունքները, առարկան, շրջանակները և դրա հաշվետվության բովանդակությունը:

Վերը նշվածի հիման վրա կարելի է եզրակացնել, որ նախագծերի հեղինակների կողմից ներկայացված նախագծերի և հայեցակարգերի մեծամասնության ՇՄԱԳ որակը չափազանց ցածր է: Հնարավորության դեպքում այս թերությունը կարելի է վերացնել փորձաքննության ընթացքում լրամշակումների միջոցով:

ՇՄԱԳ գործընթացի կարգավորման համար նորմատիվ-օրենսդրական կամ մեթոդաբանական փաստաթղթերի բացակայության պատճառով /բացառությամբ ՇՄԱՓ մասին օրենքի մի քանի հստակ պահանջների և Հայաստանի տարբեր օրենսդրական ակտերում պարունակվող որոշ պահանջների, որոնք երբեմն հակասում են իրար և ունեն թերություններ/ և այն փաստի պատճառով, որ նախագծի հեղինակների մեծամասնությունը տեղյակ չէ ՇՄԱՓ մասին օրենքի և հենց իր՝ ՇՄԱԳ գործընթացի գոյության մասին, նրանք, նախկին ԽՍՀՄ շինարարական նորմերի, մեթոդների, ստանդարտների և այլ ցուցումների վրա հիմնվելով, մշակում են նախագծերի շրջակա միջավայրի պահպանության բաժինը: Գործունեության իրականացնողների մեծամասնությունը ընդհանրապես չեն նախատեսում բնապահպանական միջոցառումներ կամ էլ դրանք իրականացնում են տարերային կերպով:

Հանգամանքներից կախված՝ արակտիկայում կարող են ծագել նաև այլ վիճելի հարցեր: ՇՄԱՓ մասին օրենքը /Հոդված 7, կետ 2/ հղում է անում Կառավարության Որոշմանը, որը պետք է ծառայեր որպես իրականացման մեխանիզմ և որոշեր փաստաթղթերի կազմը և բովանդակությունը: Սակայն Կառավարությունը դեռևս նման կարգ չի հաստատել:

Համաձայն ՇՄԱՓ մասին օրենքի՝ ՊՈԱԿ փորձաքննական եզրակացության վերջնական նպատակն է՝ ապահովել կայուն շրջակա միջավայր: Բազմաթիվ տարիների փորձը ցույց է տալիս, որ փորձաքննության ներկայացրած փաստաթղթերում առկա են մեծ թվով թերություններ և բացթողումներ: Շրջակա միջավայրը պահպանելու կամ դրան հասցված վնասը նվազագույնի հասցնելու համար այդ թերությունները պետք է շտկվեն:

Պրակտիկայում ՇՄԱՓ ներկայացրած փաստաթղթերը կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

- Միայն շինարարական և տեխնոլոգիական նախագծեր պարունակող փաստաթղթեր;
- Շինարարական և տեխնոլոգիական նախագծեր և դրանցում շրջակա միջավայրի պահպանության մասին բացատրագիր պարունակող փաստաթղթեր;
- ՇՄԱԳ հիմնական պահանջները պարունակող փաստաթղթեր:

ՇՄԱՓ մասին օրենքը չի նախատեսում մի կարևոր դրույթ, այն է՝ հետագա լրամշակման անհրաժեշտությունը: Ձևական մոտեցման դեպքում հետագա լրամշակման կարիք ունեցող փաստաթղթերը բացասական եզրակացության հետ միասին հետ պետք է ուղարկվեն նախագծի հեղինակին: Այնուամենայնիվ, ավելորդ ծախսերից խուսափելու համար և երկրի տնտեսության տարբեր բնագավառների զարգացման շտապ պահանջը հաշվի առնելով՝ հեղինակներին խնդրվում է առանց լրացուցիչ վճարումներ կատարելու լրամշակել ներկայացված փաստաթղթերը և վերադարձնել փորձաքննության: Դա արդյունավետ միջոց է: Բազմաթիվ տարիների փորձը ցույց է տալիս, որ ներկայացված 730 փաստաթղթերից 350-ը հետ են վերադարձվել՝ հետագա լրամշակման համար, որից հետո ստացվել է դրական եզրակացություն: Բացասական եզրակացություն է ստացվել միայն 7 դեպքերում:

Փորձը ցույց է տալիս, որ փոքր ծավալի նախագծերի լրամշակումը հիմնականում կապված է կանաչապատ տարածքների հարցերի, ինչպես նաև տարբեր թույլտվություններ ստանալու հետ /հիմնականում սանիտարահամաճարակային, հրշեջ ծառայությունների, ճանապարհային ոստիկանության, գազի օգտագործման, ջրի օգտագործման և հոսքաջրերի արտահոսքի թույլտվություններ/, հոսքաջրերի հեռացման, մեքենաների լվացման կետերում նավթազտիչների տեղադրման և տարբեր նշանակության կառույցներում աղբահորերի կառուցման հետ: Նախագծի հեղինակները, որպես կանոն, կատարում են այս փոփոխությունները առանց որևէ պորբլեմների:

Ավելի մեծ շինությունները պետք է նաև կատարեն փորձաքննության պահանջած փոփոխությունները, ինչպիսիք են. փոփոխություններ խողովակաշարում՝ անտառներին և պատմական և մշակութային հուշարձաններին հասցվող վնասը բացառելու կամ կրճատելու համար, փոփոխություններ ջրատարների համակարգում՝ ձկների տեղաշարժն ապահովելու համար, փոփոխություններ հանքամշակման տեխնոլոգիաներում՝ պաշարների ավելի արդյունավետ օգտագործման համար, ինչպես նաև հանքային շահագործման հետևանքով վնասված հողատարածքների վերականգնում, մթնոլորտային արտանետումների հաշվարկների կատարում կամ ուղղում, շրջակա միջավայրի պահպանման լրացուցիչ միջոցառումների մշակում:

ՇՄԱՓ մասին օրենքը սահմանում է փորձաքննություն կատարելու ժամանակացույցը, թեկուզ և հաշվի չեն առնված այն դեպքերը, երբ անհրաժեշտ է հետագա լրամշակում: Այդ դեպքերում ՊՈԱԿ-ը հայտնում է ձեռնարկողին փաստաթղթերի հետագա լրամշակման անհրաժեշտության մասին և հետաձգում ՇՄԱՓ: Սակայն Օրենքով սահմանված չէ ոչ դա, ոչ էլ ՇՄԱՓ ժամկետի երկարացումը: Եթե փորձաքննության գործընթացը չի հետաձգվում, նախագծի հեղինակը կարող է հետագա մշակումը երկարացնել մինչև փորձաքննության համար սահմանված վերջնաժամկետը, որից հետո կիրառործվեն Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի պայմանները, համաձայն որոնց եզրակացությունը կհամարվի դրական: Նախագծի փաստաթղթերի հետագա լրամշակման հարցը Օրենքում ակնհայտորեն պատշաճ կերպով լուծված չէ:

Համաձայն Օրենքի 9-րդ հոդվածի՝ փորձաքննական եզրակացությունները տրվում են լիցենզավորված փորձագետների կողմից մշակված եզրակացությունների հիման վրա, որոնք լիազորված մարմնի կողմից ստացել են համապատասխան լիցենզիա: Փորձաքննական եզրակացությունը պետք է ներկայացվի 70 օրվա ընթացքում: Անհրաժեշտության դեպքում վերջնաժամկետը կարող է երկարաձգվել մինչև 180 օր: ՇՄԱՓ փորձաքննության լիցենզիաներ տալու կարգը /ՀՀ Կառավարության 1996թ. դեկտեմբերի 20-ի N386 հրաման/ ամրագրում է, որ

լիցենզիաներ կարող են հանձնվել մասնագետներին, հաստատություններին, ձեռնարկություններին, կազմակերպություններին և անհատ ձեռներեցներին: Լիցենզիա ձեռք բերելու համար վերը նշված անձինք լիազորված մարմնին հանձնում են դիմում՝ բարձրագույն կրթության վկայականի պատճենի, վերջին 5 տարիների զբաղվածության մասին աշխատանքային զրքույկից քաղվածքի և հրատարակած գիտական աշխատությունների ցուցակի հետ: Կազմակերպությունները դիմում են հանձնում կազմակերպության հիմնադրման փաստաթղթերի, լիցենզիա պահանջող գործունեությունների ցուցակի և բոլոր վերը նշված փաստաթղթերի հետ միասին /յուրաքանչյուր անձի համար/: Հանձնաժողովը լիցենզիա տալու մասին որոշում է կայացնում՝ հիմնվելով դիմորդների որակավորման վրա: Լիցենզիան տրվում է 3 տարի ժամկետով:

Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն լիազորված մարմինը վերջնական փորձաքննական եզրակացություն տալիս է մասնագիտական եզրակացության և հասարակական քննարկումների հիման վրա: Այսպիսով, փորձաքննության որակը կանխորոշվում է լիցենզավորված փորձագետի որակավորման մակարդակով, նրա օբյեկտիվությամբ, լիարժեք վերլուծություն կատարելու կարողությամբ և այլ անձնական բնութագրերով: Հետևաբար ակնհայտ է դառնում, որ լիցենզիաներ հանձնող հանձնաժողովը, լիցենզավորված փորձագետները և հասարակական կարծիքը նշանակալից դեր են խաղում փորձաքննության որակի հարցում:

Հանձնաժողովը չի մերժել լիցենզիա ստանալու և ոչ մի դիմում: Լիցենզիաներ տալու նկատմամբ հանձնաժողովի ձևական վերաբերմունքից բացի, պատճառներից մեկն էլ դիմորդների ընտրության անբավարար չափանիշները և պահանջներն են և այդպիսի չափանիշների որոշման բարդությունը:

1997թ. հունիսից մինչ օրս տրվել է ՇՄԱՓ 920 լիցենզիա, որից 18-ը տրվել են երկրորդ անգամ, այսինքն՝ լիցենզիա տրվել է 74 մասնագետի: Քանի որ վկայականները ուժի մեջ են 3 տարի, այսօր կան վկայական ունեցող 36 մասնագետներ՝ 8 կենսաբան, 7 լեռնային ինժեներ, 6 կենսաքիմիկոս, 3 ջրամատակարարման մասնագետ, 3 ճարտարապետ, 2 ջեռուցման և էներգետիկայի մասնագետ և մեկական կենսաֆիզիկոս, աշխարհագրագետ, գյուղատնտես, տնտեսագետ և անտառի մասնագետ:

Անհնար է ունենալ գիտության, տեխնիկայի և տեխնոլոգիաների բոլոր բնագավառներում միաժամանակ գիտելիքներ ունեցող լիցենզավորված մասնագետներ: Եթե փորձաքննության գործընթացը պահանջում է որակավորված մասնագետներ, նրանք կներառվեն գործընթացին: Փաստաթղթերը պատրաստելուց հետո կանցկացվի հանձնաժողովի նիստ՝ լիցենզիա տալու վերաբերյալ որոշում կայացնելու համար: Փորձաքննություն անցկացնելու մասին պայմանագիրը կկազմվի միայն լիցենզիա ստանալուց հետո: Այս գործընթացը սովորաբար երկար ժամանակ է խլում:

Քանի որ Բնապահպանության Նախարարությունը այս բնագավառի լիազորված մարմինն է և պատասխանատու է փորձաքննական եզրակացության բարձր որակի համար, այդ եզրակացությունները պետք է նշակվեն Նախարարության կողմից բարձր մակարդակի որակավորում ունեցող մասնագետների մասնակցությամբ, ինչպես նաև հատուկ կարևորության դեպքերում միջազգային փորձագետների մասնակցությամբ, եթե անհրաժեշտ է: Լիազորված մարմինը նաև հաշվի կառնի շահառու նախարարությունների և գործակալությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, համայնքների ղեկավարների, համայնքների բնակչության, ոչ կառավարական կազմակերպությունների և անհատների կարծիքները, ինչպես ամրագրված է Օրենքի բազմաթիվ հոդվածներով /Յոթվածներ 6.1, 6.2, 6.4, 6.5, 8.1, 8.5, 10.1, 10.2, 11.1, 15.4/:

Պետք է նշել, որ փորձաքննությունը կանցկացվի որակավորված, անկողմնակալ և անաչառ մասնագետներով, որոնք ունեն համապատասխան գիտական, արդյունաբերական և վարչական աշխատանքային փորձ: Ի լրումն այս ամենի, փորձաքննության մեջ կարիք կա

համակարգային և կառուցվածքային բարեփոխումների: Եվ վերջապես, փորձը ցույց է տալիս, որ Օրենքով ամրագրված լիցենզավորված փորձագետների պարտադիր մասնակցության պահանջը հաճախ անարդյունավետ է և պատճառ է դառնում փորձաքննության ժամանակաշրջանի անհարկի երկարաձգման: Նախատեսված գործունեության կամ հայեցակարգի իրականացման որոշումը կայացվում է փորձաքննական եզրակացության հիման վրա: Օրենքի 12-րդ հոդվածն արգելում է նախատեսված գործունեության իրականացումը առանց փորձաքննական դրական եզրակացության, և համաձայն 15-րդ հոդվածի 6-րդ կետի՝ հայեցակարգերը չեն հաստատվի առանց լիազորված մարմնի կողմից տրված փորձաքննական դրական եզրակացության: Այնուամենայնիվ, փորձը ցույց է տալիս, որ երկրում իրականացվում են բազմաթիվ նախատեսված գործունեություններ առանց փորձաքննական եզրակացության: Բազմաթիվ դեպքերում փորձաքննության են ներկայացվում արդեն կառուցված կամ նույնիսկ գործող կառույցների նախագծային փաստաթղթերը՝ պետական բնապահպանական տեսչության անարդյունավետ գործունեության պատճառով:

6.2.5 Այլընտրանքների քննարկում

Որպես կանոն, փոքր շինությունների /բենզավազան և բնական գազի լցման կայաններ, առանձնատներ, խանութներ, հանգստի գոտիներ, սպասարկման օբյեկտներ և այլ փոքր կառույցներ/ նախագծային փաստաթղթերը այլընտրանքների նկարագրություն չեն պարունակում: Ջրային տնտեսության /ռոռզում, ջրի պաշարներ և հոսքաջրեր/ և համայնքային ծառայությունների հետ կապված այլընտրանքներ ներկայացվում են միայն մեծ ծավալի գործունեության դեպքում: Երբեմն որոշակի մեծ ծավալի արտադրությունների համար ներկայացվում են տեխնոլոգիական լուծումների և սարքավորման այլընտրանքներ:

Ջրոյական տարբերակի մասին քննարկումներ արձանագրվել են միայն մի քանի նախագծերի համար:

Պետք է նաև նշել, որ տարբերակի ընտրությունը հիմնականում կատարվում է տեխնիկատնտեսական հիմնավորումների հիման վրա, որտեղ այլ հարցերի թվում են ներկայացվում են նաև բնապահպանական հարցերը:

Փորձաքննության ներկայացված նախատեսված գործունեությունների այլընտրանքների դեպքերը հետևյալն են.

- Հանքերի մշակման տեխնոլոգիական փոփոխություններ;
- Ջրատարերի անցկացման տեղերի ընտրություն;
- Արտադրությունների հոսքաջրերի մաքրման միջոցի ընտրություն;
- Հայկական Ատոմակայանում միջուկային վառելիքի /պինդ կամ հեղուկ/ պահեստավորման ձևերի ընտրություն;
- Հիդրոէլեկտրակայանների ամբարտակներ կամ ջրանցքներ ;
- Հակաֆիլտրացիոն մեթոդների ընտրություն /կավի կամ պոլիէթիլենի ծածկոց/;

Վտանգի գնահատման պլանավորումը բացակայում է, դրա համար չկան ո՛չ օրենսդրական պահանջներ, ո՛չ մեթոդակարգ:

6.2.6 Մոնիտորինգ և հսկողություն

Փորձաքննության ներկայացված գործունեությունների փաստաթղթերից միայն մի քանիսն են նախատեսում մոնիտորինգ շինարարական աշխատանքների ավարտից հետո և գործունեության ընթացքում /ոսկու արդյունահանում, հանքարդյունահանում, ջրային համակարգի սարքավորումներ/: Նախագծի հեղինակները դժվարությամբ են ընդունում մոնիտորինգի կազմակերպման՝ փորձաքննության պահանջը՝ մի կողմից ՇՄԱՓ մասին

Օրենքում այսպիսի պահանջի բացակայության, և մյուս կողմից՝ նախագծի հեղինակների ծախսերի աճի պատճառով: Մոնիտորինգի, ինչպես նաև վնասակար ազդեցություն ունեցող կառույցների հետնախագծային վերլուծության անհրաժեշտությունը պետք է սահմանվի օրենքով, հատկապես քանի որ համապատասխան պահանջներ գոյություն ունեն շատ միջազգային կոնվենցիաներում:

Պետք է նշել, որ համարյա բոլոր եզրակացություններում ՊՈԱԿ-ն առաջ է քաշում որոշակի պահանջներ, որոնց կատարումը կնպաստի շրջակա միջավայրի ապագա բարելավմանը կամ օրենքի պահանջների կատարմանը:

ՇՄԱՓ դրական որոշում ստանալուց հետո բոլոր փաստաթղթերը, ներառյալ փորձագետների և ՇՄԱՓ-ին մասնակցող պետական հաստատությունների հանձնարարականները, պետք է տրամադրվեն Պետական Բնապահպանական Տեսչությանը:

Եթե կան կառուցման կամ շահագործման ժամանակ կատարելիք հանձնարարականներ, այս հանձնարարականները իրականացնող կազմակերպությունները պարտավոր Պետական Բնապահպանական Տեսչություն ներկայացնել դրանց կատարման մասին զեկույց:

ՇՄԱՓ ենթակա փաստաթղթերի կամ ՇՄԱՓ տված հանձնարարականների մեջ նշված պահանջների խախտման դեպքում Պետական Բնապահպանական Տեսչությունը զգուշացնում է կամ կիրառում վարչական միջոցներ՝ Վարչական իրավախախտումների մասին Օրենքի համաձայն:

Ձեռնարկությունների պլանային ստուգումների ժամանակ բացահայտվում են խախտումների տարբեր տեսակներ: Համաձայն ՇՄԱԳ փաստաթղթերի՝ շրջակա միջավայրի աղտոտման հսկողությունը պետք է կատարվի իրենց՝ ձեռնարկությունների կողմից: Պետական Բնապահպանական Տեսչությունը ստուգում է այս հսկողության օբյեկտիվությունը: Այնուամենայնիվ, Տեսչության տեխնիկական հսկողության միջոցների պակասը նշված վերահսկողությունը դարձնում է անարդյունավետ: Ավելին՝ հաճախ ձեռնարկությունների կառուցումը և դրանց գործարկումը կատարվում են առանց ՇՄԱՓ կամ ՇՄԱՓ պահանջների խախտումներով՝ անձնակազմի փոքրության և միջոցների պակասի պատճառով: Պետական Բնապահպանական Տեսչությունը հատուկ ուշադրություն է դարձնում մեծ ձեռնարկություններին կամ շինություններին, և գործնականում չի իրականացնում արդյունավետ վերահսկողություն միջին և փոքր ձեռնարկությունների վրա:

Պետք է նշել, որ հայեցակարգային ծրագրերը իրական հսկողությունից դուրս են: Մի շարք խախտումներ տեղի ունեցան Սևանի ազգային պարկի զարգացման ծրագրի իրագործման ժամանակ, այնուամենայնիվ, սովորաբար այս խախտումները պաշտոնապես չեն ճանաչվում, և դրանց մասին տեղեկություն կարելի է ստանալ միայն զանգվածային լրատվամիջոցներից և հասարակական կազմակերպություններից:

6.2.7 Լիցենզավորում և հարկադրանք

Լիցենզիաներ

Հայաստանում ցանկացած նախատեսված գործունեության լիցենզավորումը կարգավորվում է համաձայն Լիցենզավորման մասին Օրենքի /30.06.2001/: Օրենքը սահմանում է լիցենզավորում պահանջող գործունեությունների տեսակների ցուցակը, լիցենզիաները և լիցենզավորող մարմինների ցանկը: «Բնապահպանական Փորձաքննություն» ՊՈԱԿ կողմից ՇՄԱՓ գործընթացում ներառված փորձագետների լիցենզավորումը կատարվում է ՇՄԱՓ մասին Օրենքի համաձայն /«ՇՄԱՓ մասնագիտական իրավասության հավաստագիր տալու կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 1996թ. դեկտեմբերի 20-ի N386 հրաման/:

Չնայած նախագծային փաստաթղթերի մշակումը նույնպես լիցենզավորման ենթակա է, այնուամենայնիվ այս ցուցակում չկան բնապահպանական բնագավառի գործունեություններ: Այսպիսով, ՇՄԱԳ մշակումը, մթնոլորտային արտանետումների, ջրօգտագործման և հոսքաջրերի նորմավորման փաստաթղթերի մշակումը լիցենզավորման ենթակա չեն կամ էլ կարող են ներառված լինել այլ գործունեությունների նախագծերի մեջ: Այս հանգամանքը փոքրացնում է բնապահպանական նախագծի և խորհրդատվական գործունեության ամբողջ բնագավառի կարևորությունը:

Հանքային ապարների առևտրային արդյունահանումը նույնպես ենթակա է լիցենզավորման:

Թույլտվություններ

«Մթնոլորտային Օդի պահպանության մասին» Օրենքի համաձայն՝ ձեռնարկությունները պետք է ստանան վնասակար նյութերը մթնոլորտ արտանետելու թույլտվություն : Այս նպատակի համար մշակվել են Սահմանային Թույլատրելի Արտանետումների /ՍԹԱ/ ստանդարտները, որոնց հիման վրա Բնապահպանության Նախարարությունը արտանետումների թույլտվություն է տալիս:

Համաձայն Ջրային Օրենսգրքի՝ ձեռնարկությունները պետք է ունենան ջրօգտագործման և արտահոսքի նորմեր /ԹՍԱ/, որոնց հիման վրա Բնապահպանության Նախարարությունը տալիս է համապատասխան թույլտվություն:

Համաձայն Ընդերքի Պահանջության մասին Օրենքի՝ հանքարդյունահանման բնագավառում գործող ձեռնարկությունները պետք է պայմանագիր կնքեն Բնապահպանության Նախարարության հետ, որի հիման վրա կստանան հանքարդյունահանման գործունեության թույլտվություն: Ավելին, տարբեր կարգավորող փաստաթղթերի հիման վրա գործունեություն ծավալելու համար ձեռնարկությունները թույլտվություն են ստանում սանիտարական և հրշեջ ծառայություններից, տեղական ինքնակառավարման մարմիններից, պետավտոտեսչության մասնաճյուղերից և այլն:

ՇՄԱԳ գործընթացի ժամանակ «Բնապահպանական ործաքննություն» ՊՈԱԿ-ը որոշում է պահանջվող թույլտվությունների և համաձայնությունների անհրաժեշտությունը:

Հարկադրանք

ՀՀ Ազգային ժողովի 25.08.2002թ. 1149-Н որոշման համաձայն՝ Բնապահպանության Նախարարության Պետական Բնապահպանական Տեսչությունը վերահսկում է բնապահպանության, բնական ռեսուրսների օգտագործման և վերարտադրման հետ կապված ՀՀ օրենսդրության պահանջների կատարումը և դրանց կատարման հարկադրանքի միջոցներ է ձեռք առնում: Նշված օրենսդրության պահանջների խախտումներ բացահայտելու դեպքում Տեսչությունը վարչական օրենսգրքով սահմանված միջոցներ է ձեռք առնում:

Բացի այդ, տվյալ տարածքի տեղական ինքնակառավարման գործադիր մարմինները պետք է հսկողություն սահմանեն տնտեսական գործունեության նկատմամբ և առանց թույլտվության շինարարական կամ այլ կարգի գործունեություն հայտնաբերելու դեպքում դիմեն լիազորված մարմիններին կամ Դատախազություն:

Դատախազության մարմինները իրականացնում են օրենսդրությանը համապատասխանության ընդհանուր հսկողություն: Հիմնական խախտումը առանց փորձաքննության գործունեությունների ծավալումն է: Բազմաթիվ դեպքերում խախտումները բացահայտվում են գործունեությունների ստուգումների ժամանակ: Հաճախ խախտումները բացահայտվում են Բնապահպանության Նախարարության հատուկ ստորաբաժանումների կողմից ջրօգտագործման, ջրահեռացման կամ մթնոլորտային արտանետումների թույլտվություններ տալիս, երբ հայտնաբերվում է, որ ձեռնարկությունը գործում է առանց ՇՄԱԳ:

2004թ. Երևանի Քաղաքապետարանը, Դատախազության մարմինների հետ համատեղ, անցկացրեց Երևանի տարածքում շինությունների օրինականության ստուգում: Արդյունքում բացահայտվեցին ապօրինի շինարարության ավելի քան հարյուր դեպքեր: Դրանց մեծ մասը բենզա և գազալցակայաններ էին: Դատախազության պահանջով այդ հաստատությունները կենթարկվեին վարչական տույժերի: Ղեկավարությունից պահանջվել է ՇՄԱՓ գործընթացի համար հանձնել անհրաժեշտ փաստաթղթեր:

Պետական Բնապահպանական Տեսչությունը օգտագործում է նույն պրակտիկան: 1995թ. մինչ այժմ առանց ՇՄԱՓ գործող ձեռնարկությունների հայտնաբերման դեպքում ձեռնարկության ղեկավարության նկատմամբ կիրառվում են կարգապահական միջոցներ: Ղեկավարությունից պահանջվում է փաստաթղթեր հանձնել ՇՄԱՓ համար:

Այնուամենայնիվ, այսպիսի պրակտիկան կասկածներ է առաջացնում հարցվածներից շատերի մեջ, ովքեր համարում են, որ եթե ձեռնարկությունը արդեն գործում է 7-8 տարի, անհրաժեշտ է կարգապահական միջոցներ կիրառել և այնուհետև վարվել այնպես, ինչպես գործող ձեռնարկությունների հետ, այսինքն՝ անցկացնել բնապահպանական օրենսդրության հետ համապատասխանության և հատուկ թույլտվությունների համալիր ստուգում:

Այս պնդման ընդդիմախոսները համարում են, որ դա կօրինականացնի ՇՄԱՓ-ից խուսափելու պրակտիկան: Այդ դեպքում կիրառվող տույժերը պետք է խստացվեն:

6.3 Հիմնական շահառուները

Ինչպես նշվել է 4-րդ գլխում, ՇՄԱԳ գործընթացի հիմնական շահառուները պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններն են, որոնք կարող են լինել ինչպես ՇՄԱՓ իրականացնողներ, այնպես էլ գործունեությունների ձեռնարկողներ, գործարարները, մասնագիտացված կազմակերպությունները, անկախ փորձագետները, միջազգային կազմակերպությունները և անհատ անձինք:

6.3.1 Որոշում կայացնողներ

Բնապահպանության Նախարարությունը և դրա մասնագիտացված ստորաբաժանումը՝ «Բնապահպանական Փորձաքննություն» ՊՈԱԿ-ը, կարևոր դեր են խաղում ՇՄԱՓ գործընթացում: Նրանք ունեն որոշումներ կայացնելու լիազորություն: Այս գործընթացին մասնակցում են նաև այլ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, որոնց դերը տարբեր թույլտվություններ և լիցենզիաներ տալն է: Դրանք են.

- Առողջապահության Նախարարություն /թույլտվություն, հսկողություն/
- Քաղաքաշինության Նախարարություն /թույլտվություն, որոշակի տեսակի գործունեությունների լիցենզիաներ/
- Առևտրի և Տնտեսական Ջարգացման Նախարարություն /որոշակի տեսակի գործունեությունների լիցենզիաներ/
- Գյուղատնտեսության Նախարարություն /որոշակի տեսակի գործունեությունների լիցենզիաներ/
- Ջրային Տնտեսության Պետական Կոմիտե /թույլտվություններ, ջրի սպառման և հոսքաջրերի կարգավորում/
- Էներգետիկայի Նախարարություն /որոշակի տեսակի գործունեությունների լիցենզիաներ/
- Սեյսմիկ Պաշտպանության Ազգային Ծառայություն /թույլտվություն/
- Տեղական ինքնակառավարման մարմիններ /թույլտվություն, հողահատկացում/

Բնապահպանության Նախարարությունը /ԲՆ/ Պետական բազմագործառնությամբ մարմին է, որը կարգավորում և ղեկավարում է շրջակա միջավայրի պահպանությունը և բնական ռեսուրսների օգտագործումը: 1991թ. դրա հիմնադրումից սկսած՝ Նախարարությունը վերակազմավորման անընդհատ գործընթացի մեջ է: Դա հիմնականում կապված է Նախարարության և Կառավարության տարբեր ստորաբաժանումների գործառնությունների կրկնության հետ: Ե՛լ գործադիր, և՛ հսկող գործառնություններ ունենալու պատճառով Նախարարությունը հաճախ քննադատությունների առարկա է դառնում:

2002թ. օգոստոսի 8-ին 1237-Ն Որոշման հիման վրա ՀՀ Կառավարությունը հաստատեց Բնապահպանության Նախարարության Կանոնակարգը և Կառուցվածքը, համաձայն որի՝ Նախարարությունում գործում են ջրային ռեսուրսների ղեկավարման, կենսաբանական ռեսուրսների ղեկավարման, երկրաբանական, հանքային ռեսուրսների, օդերևութաբանության և բնապահպանական մոնիտորինգի ստորաբաժանումները, «Բնապահպանական Փորձաքննություն» ՊՈԱԿ-ը, ինչպես նաև Պետական Բնապահպանական Տեսչությունը և Ատոմային էներգիայի Օգտագործման Միջուկային և Ռադիոակտիվ Անվտանգության Տեսչությունը:

Սևանի Ազգային Պարկը և այլ հատուկ պահպանվող տարածքները ևս մտնում են Բնապահպանության Նախարարության կառուցվածքի մեջ: 2004թ. Կառավարության որոշմամբ համաձայն «Հայաստան» պետական կազմակերպությունը, որն իրականացնում է Հայաստանի անտառների հսկողությունը /Նախկինում ներառված Բնապահպանության Նախարարության կազմի մեջ/, ստորադասվեց Գյուղատնտեսության Նախարարությանը: Բնապահպանության Նախարարությունը պահպանում է անտառների հսկողության իր գործառնությունը:

ԲՆ-ը ՇՄԱՓ կատարելու համար պատասխանատու պետական լիազորված մարմինն է: Այն ՇՄԱՓ հիման վրա կայացնում է վերջնական որոշումները:

«Բնապահպանական Փորձաքննություն» ՊՈԱԿ-ը ստորադասվում է ԲՆ-ին: Այն բյուջետային կազմակերպություն չէ, այլ ֆինանսավորվում է ՇՄԱՓ կատարելու համար ձեռնարկողների վճարումներով: ՊՈԱԿ-ն ունի աշխատակիցների սահմանափակ քանակություն, որոնց հիմնական գործառնությունն են. քննել ձեռնարկողի կողմից հանձնված նախնական և հիմնական փաստաթղթերը, ընտրել փորձագետներ; ԲՆ տարբեր ստորաբաժանումների ատուզմանն ուղարկել փաստաթղթերի փաթեթը; այլ պետական հաստատություններ և մասնագիտացված կազմակերպություններ հարցում ուղարկել; հավաքել և ընդհանրացնել փորձագետների եզրակացությունները, նշումները և առաջարկությունները; կազմակերպել քննարկումներ և հասարակական լսումներ; պատրաստել որոշումների նախագծեր և այլն: Ներկայումս «Բնապահպանական Փորձաքննություն» ՊՈԱԿ-ի անձնակազմը բաղկացած է անսակական \$80-90 միջին աշխատավարձով 13 աշխատողներից:

Բնապահպանական Տեսչություն, որը ունի կենտրոնական և տարածաշրջանային տեսչություններ, գործում է ԲՆ կառուցվածքի մեջ: Տեսչությունը բաղկացած է 11 տարածաշրջանային բաժանումներից, որոնցից 10-ը տեղակայված են մարզերում, իսկ մի առանձին տեսչությունը գործում է Երևանում:

Պետական Բնապահպանական Տեսչության աշխատակազմը հսկում է շրջակա միջավայրի աղտոտումը, բնական ռեսուրսների օգտագործումը, տարբեր կազմակերպությունների և ձեռնարկությունների կողմից իրականացվող գործունեությունների համապատասխանությունը գոյություն ունեցող բնապահպանական օրենսդրությանը: Նրանք նաև վերահսկում են ձեռնարկությունների և բնակավայրերի մաքրման սարքավորումների աշխատանքը: Տեսչությունը պատասխանատվության է կրում նաև ՇՄԱՓ մասին Օրենքի բոլոր պահանջների կատարման համար: Տեսչությունն իրականացնում է ձեռնարկությունների սիստեմատիկ ստուգում՝ նախօրոք մշակված աշխատանքային պլանի համաձայն: Արտակարգ իրավիճակի մասին ազդանշանի դեպքում այն նաև իրականացնում է արտահերթ ստուգումներ՝ վերադաս մարմինների պահանջով: Տեսչությունն ունի հատուկ հրահանգ, համաձայն որի հսկվում է

ՇՄԱՓ պահանջների կատարումը: Տարբեր ստուգումներ իրականացնելու ժամանակ տեսչությունը հաճախակի հայտնաբերում է առանց ՇՄԱՓ եզրակացության աշխատող նոր կառույցներ: Այսպիսի դեպքերում Տեսչությունը պատժամիջոցներ է կիրառում /կասեցման մասին որոշում, վարչական տուգանքներ/ ընդհուպ մինչև գործը դատարան հանձնելը:

Ինչպես բացահայտվել է հարցումների ընթացքում, Տեսչությունը ունի բավարար թվով աշխատակիցներ, կարող է օգտագործել ԲՆ-ում գործող լաբորատորիաները, սակայն տեխնիկական միջոցները անբավարար են և հնացած: Տեսուչների որակավորումը և օբյեկտիվությունը հաճախ քննադատության առարկա է դառնում, ինչը հիմնականում բացատրվում է Տեսչության աշխատակիցների ցածր աշխատավարձով:

Համայնքները ՇՄԱՓ գործընթացի հիմնական շահառուներից են: Համայնքների գործադիր մարմինները ներառվում են ՇՄԱԳ համակարգ տարածաշրջանի զարգացման հաստատված ծրագրերի հետ նախատեսված գործունեության համապատասխանության քննարկելիս և հողահատկացումներ կատարելիս: Նրանք նաև ներկայացնում են տեղի բնակչության շահերը: Համայնքը մասնակցում է ՇՄԱՓ գործընթացի բոլոր փուլերին /փաստաթղթերի նախնական քննարկում, լսումներ, փորձագետների հետ քննարկումներ, որոշման նախագծի քննարկում/:

Մարզպետարաններում և համարյա բոլոր տեղական գործադիր մարմիններում կան հատուկ բաժիններ կամ աշխատակիցներ, որ պատասխանատու են բնապահպանության համար, ներառյալ ՇՄԱՓ մասին հարցերը: Երևանի Քաղաքապետարանում կա Բնապահպանության Վարչություն, որը Բնապահպանության Նախարարությունից հետո ամենախրազել մարմինն է: Վարչությունը զբաղվում է ընթացիկ բնապահպանական հարցերով, ինչպես նաև բնապահպանական պլանավորմամբ և քաղաքապետարանի այլ միավորների կողողինացմամբ, ինչպիսիք են Կոմունալ Ծառայությունը, Կանաչապատումը, Թափոնների և Աղբի Հավաքումը և Օգտագործումը: Նմանատիպ միավորներ գոյություն ունեն նաև Գյումրիում, Վանաձորում և Հրազդանում: Այնուամենայնիվ, աշխատակիցների քանակը և որակավորումը համեմատաբար ցածր է, իսկ ինչ վերաբերում է այլ քաղաքներին և մարզերին, այդպիսի կառույցներում փաստորեն մասնագետներ չկան:

Բոլոր այս մարմինների ընդհանուր պրոբլեմը մասնագետների և միջին ու բարձր օղակի ղեկավարների իրազեկության ցածր աստիճանն է: Ցածր աշխատավարձերը կարող են համարվել կարևոր գործոն, որը չի խթանում աշխատակիցների նվիրվածությունը և կոռուպցիայի պատճառներից մեկն է: Քաղաքացիական Ծառայության մասին օրենքի ընդունումից /04.12.2001/ և հատուկ խորհրդի ստեղծումից հետո այս հարցում նկատվում է որոշակի բարելավում: Մասնավորապես, միջին օղակի ղեկավարների և մասնագետների մեջ առանց հատուկ կրթության կամ ընդհանրապես առանց կրթության աշխատակիցների քանակը նվազել է:

Այնուամենայնիվ, ըստ պատասխանատուների՝ չափազանց էական է այնպիսի կարևոր հարցերի լուծումը, ինչպիսիք են մասնագետների և ղեկավարների վերապատրաստումը, մշտական գործող վերապատրաստման կենտրոնների ստեղծումը, աշխատավարձերի համապատասխանեցումը սպառողական զամբյուղին, հասարակական հսկողության մեխանիզմների ստեղծումը և այլն: Հարցվածները նշեցին նաև անհրաժեշտ օրենսդրական և նորմատիվային ակտերի մշակման, դրանց ներդաշնակության և ՇՄԱՓ հիմնական շահառուների տեխնիկական և ֆինանսական ապահովման անհրաժեշտությունը:

6.3.2 ՇՄԱՓ մասնակիցները

ՇՄԱԳ գործընթացի մասնակիցների երկրորդ կատեգորիան կարելի է բաժանել ստորև ներկայացվող երեք խմբի.

- **Նախատեսվող գործունեության կամ հայեցակարգերի ձեռնարկողները:** Հայեցակարգերի ձեռնարկողներն են երկրի կառավարությունը, տարբեր պետական կառավարման մարմինները, մարզային կառավարման մարմինները, միջազգային կազմակերպությունները և հիմնադրամները: Տնտեսական գործունեության ձեռնարկող կարող են հանդիսանալ տեղական և արտասահմանյան ներդրողները: Սովորաբար արտասահմանյան ներդրողները ավելի ուշադիր են վերաբերվում տվյալ երկրի օրենսդրությանը և կատարում են օրենքների պահանջները՝ ներառյալ ՇՄԱԳ համակարգը կարգավորող օրենսդրությունը: Համաշխարհային բանկի ներկայացուցչությունը Հայաստանում նույնպես մասնակցում է տարբեր ներդրումային ծրագրերի իրականացմանը և վարկավորման որոշումը կայացնում է միայն ՇՄԱԳ դրական եզրակացության դեպքում:
- **Ընկերություններ, որոնք մշակում են գործունեության նախագծային փաստաթղթերը և ՇՄԱԳ-ը:** Հիմնականում դրանք դեռ ԽՍՀՄ ժամանակներից հայտնի նախագծային և գիտահետազոտական ինստիտուտներն են, այդ թվում՝ ակադեմիական ինստիտուտներ՝ հիդրոէկոլոգիայի ինստիտուտը, Էկոնոոսֆերային հետազոտությունների կենտրոնը և նախագծային ինստիտուտներ՝ «Հայարդնախագիծ», «Հայնախագիծ», «Հայգյուղնախագիծ» և այլն: Գիտահետազոտական ինստիտուտներն իրականացնում են տարբեր գիտական աշխատանքներ և դրա հետ մեկտեղ մասնակցում են որոշ ծրագրերի և հայեցակարգերի ՇՄԱԳ մշակման աշխատանքներին՝ ըստ իրենց գիտական ուղղվածության: Այդ ինստիտուտները համալրված են որակյալ մասնագետներով, սակայն սարքավորումը և տեխնիկական միջոցները հիմնականում հնացած են: Աշխատանքի վարձատրությունը բարձր չէ: Թվարկված նախագծային ընկերությունները նույնպես հիմնականում զբաղված են մասնագիտական գործունեությամբ՝ նախագծային աշխատանքներով: ՇՄԱԳ հետ կապված աշխատանքներն ավելի շուտ վերաբերվում են ընդհանուր նախագծային փաստաթղթերի շրջակա միջավայրի պահպանության բաժնին: Աշխատանքի վարձատրությունը նույնպես բարձր չէ: Բացի հիշյալ կազմակերպություններից, այս ասպարեզում գործում են նաև մի քանի նոր մասնավոր ընկերություններ, որոնք ունեն ավելի նեղ մասնագիտացում՝ բնապահպանական փաստաթղթերի մշակում, այդ թվում՝ մթնոլորտային արտանետումների, ջրօգտագործման, ջրահեռացման, ընդերքի օգտագործման նախագծային փաստաթղթեր և այլն: Սակայն կատարվող աշխատանքների ծավալը սահմանափակ է, և համապատասխանաբար՝ դրանք փոքր ընկերություններ են: Աշխատանքի վարձատրությունը այստեղ համեմատաբար բարձր է, սակայն պատվերները շատ չեն, և մասնագետների պահանջը սահմանափակ է:
- **ՇՄԱԳ գործընթացում մասնակցում են նաև առանձին մասնագետներ և գիտնականներ:** Շատ դեպքերում, երբ նախատեսվող գործունեությունը փոքր ծավալների է, ձեռնարկողը կամ այն ընկերությունը, որը պայմանագրային հիմունքներով մշակում է շինարարական և տեխնոլոգիական նախագծերը, հրավիրում է առանձին մասնագետների ՇՄԱԳ կազմելու համար, հիմնականում որպես ընդհանուր նախագծի բնապահպանական մաս: Հաճախ մասնագետներին հրավիրում են նախագծերի բացատրական մասը կազմելու համար, որտեղ հիմնավորվում է շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության բացակայությունը: Ինչպես նշում են ՇՄԱԳ մշակող ընկերությունների ներկայացուցիչները, երբեմն ձեռնարկողները հրավիրում են ԲՍ լիցենզավորված փորձագետներին, թեկուզև դա արգելվում է կանոնադրությամբ: Նման դեպքերում ՇՄԱԳ մշակողը նախագծում պարզապես չի նշվում, քանի որ ըստ օրենքի՝ դա լիցենզավորվող գործունեություն չէ /տես 6.2.7. ենթաբաժինը/:

6.3.3 Քաղաքացիական հասարակությունը՝ բնակչությունը և ՀԿ-ները

Քաղաքացիական հասարակության հիմնական հատկանիշը այդ հասարակության կազմակերպվածությունն է: Պետք է նշել, որ հասարակական կազմակերպությունները դերը և նշանակությունը երկրի կյանքում դեռ մեծ չեն: Պատճառների շարքում կարելի է հիշատակել համապատասխան ավանդույթների բացակայությունը, բնակչության մեծամասնության

ծայրաստիճան ցածր կենսամակարդակը, երկրի պատմության խորհրդային ժամանակաշրջանի ազդեցությունը, ՅԿ-ների անբավարար նյութական կարողությունները և այլն: Հիմնական ֆինանսավորումը ՅԿ-ները ստանում են դրամաշնորհի ձևով՝ տարբեր միջազգային կազմակերպություններից և հիմնադրամներից: Այս իրավիճակը նախ դրդում է շատերին հիմնել ՅԿ-ներ բացառապես դրամաշնորհ ստանալու ակնկալիքով, և հետո՝ բացասաբար է անդրադարձնում ՅԿ-ների ինստիտուտի հեղինակության վրա:

Հայաստանի կառավարության կողմից ցուցաբերվող ֆինանսական աջակցությունը խիստ սահմանափակ է և ընտրողական: Իշխանությունները ֆինանսավորում են միայն որոշ իրենց կողմից ընտրված ՅԿ-ներին: Հասարակության իներտության համար կա ևս մի պատճառ. Հայաստանում ժողովրդավարական բարեփոխումները սկսել են բնապահպանական հասարակական շարժումով: Նախորդ դարի 80-ական թվականների կեսերին, ԽՍՀՄ-ում հրապարակայնության քաղաքականության հռչակումից հետո, Հայաստանում սկսեց հասարակական շարժում, որի նպատակն էր առավել վտանգավոր գործարանների և հայկական ատոմակայանի փակումը: Հետագայում, որպես սոցիալական իրավիճակի կտրուկ վատթարացման, էներգետիկ ճգնաժամի, գործազրկության հիմնական պատճառ հասարակության գիտակցության մեջ ամրագրվեց հենց բնապահպանական շարժումը, ինչը իր հերթին առաջացրեց բացասական վերաբերմունք դեպի բնապահպանական ՅԿ-ները:

Այնուամենայնիվ վերջին 2 – 3 տարիներին նկատվում է որոշակի ակտիվություն ՇՄԱԳ գործընթացին ՅԿ-ների մասնակցության հարցում:

ՅԿ-ները տեղեկացնում են հասարակությանը ՇՄԱԳ խնդիրների մասին, ծանոթացնում են բնապահպանական օրենսդրության և միջազգային կոնվենցիաների հետ, աջակցում են շահառուների երկխոսությանը, մասնակցում են օրենսդրության բարեփոխումներին: Հասարակական միավորումները կարող են էական դեր խաղալ լսումների կազմակերպման և իրականացման հարցում, համայնքների ներկայացուցիչների հետ մեկտեղ ներկայացնել բնակչության շահերը:

6.4 Վճարման կարգը

Ներկայումս ՇՄԱԳ համակարգը գործում է նախատեսվող գործունեության ձեռնարկողի հաշվին: ՇՄԱԳ ֆինանսական ապահովումը բաղկացած է երկու մասից:

- Նախատեսվող գործունեության ձեռնարկողը իր հաշվին կազմակերպում է ՇՄԱԳ մշակումը: Նախատեսվող գործունեության ծավալներից և բարդությունից կախված՝ հրավիրվում է կամ որևէ նախագծային ընկերություն, կամ առանձին մասնագետ: Առանձնապես բարդ դեպքերում կամ հայեցակարգերի մշակման ժամանակ ՇՄԱԳ գործընթացում մասնակցում են մի քանի կազմակերպություններ /նախագծային, գիտահետազոտական և այլն/: Համապատասխանաբար վարձատրությունը նույնպես կախված է աշխատանքների բարդությունից և ծավալից: Սակայն ընդհանուր առմամբ ՇՄԱԳ համակարգի վրա արվող ծախսերը չեն համապատասխանում պահանջվող աշխատանքների ծավալներին, մանավանդ փոքր ձեռնարկումների դեպքերում, իսկ այդպիսի հայտերը մեծամասնություն են կազմում: Ըստ հարցման մասնակիցների՝ այս կարգի աշխատանքների միջին վարձատրությունը կազմում է 100 – 300 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: Ըստ այդմ կատարված աշխատանքների որակն էլ ցածր է: Հարցման մասնակիցների մի մասը գտնում է, որ պետությունը պետք է մասնակցի ՇՄԱԳ համակարգի ֆինանսավորմանը, մասնավորապես՝ առաջարկվում է կազմել հատուկ մասնագիտական խմբեր, որոնք կմշակեն տարածքային սխեմաներ, կհաշվարկեն չափաբաժիններ և այլն, ինչպես դա արվում է ԵՄ որոշ երկրներում:
- ՇՄԱՓ-ը նույնպես կատարվում է ձեռնարկողի հաշվին: «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ը պայմանագիր է կնքում նախատեսվող գործունեության ձեռնարկողի հետ փորձաքննությունը իրականացնելու համար, որի հիման վրա ձեռնարկողը վճարում է անհրաժեշտ գումարը: «Բնապահպանական

փորձաքննություն» ՊՈԱԿ-ը փորձաքննության վճարների չափերը հաշվարկում է համաձայն ԲՆ կողմից հաստատած կարգի, ընդ որում վճարը կատարվում է մինչև փորձաքննության իրականացումը: Հարցման մասնակիցների մեծ մասը, ինչպես նաև ՊՈԱԿ որոշ աշխատակիցներ գտնում են, որ վճարման կարգը անհրաժեշտ է փոխել: Որպես լուծման մի տարբերակ առաջարկվում է «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ը դարձնել բյուջետային հիմնարկ, իսկ ձեռնարկողին թողնել միայն պետական տուրքի վճարումը:

6.5 ՇՄԱՓ ներկայացրած նախագծերի քանակը և վերլուծությունը

Աղյուսակ 6.1. Իրականացված փորձաքննությունների դինամիկան

Տարին	Ընդամենը	այդ թվում							
		1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003
Իրականացված փորձաքննությունների քանակը	863	28	27	90	169	119	151	143	136

Տեղեկությունների աղբյուրը՝ ԲՆ

Փորձաքննության համար ներկայացված հայտերից բացասական եզրակացություն են ստացել յոթը: Ներկայացված նախագծային 48 փաթեթից մոտավորապես 48%-ը լրացվել են կամ վերադարձվել են լրամշակման:

Աղյուսակ 6.2. 2003 թ. իրականացված փորձաքննությունների արդյունքների վերլուծությունը

Նախագծերի դասակարգումը ըստ գործունեության տեսակի	Տոկոսային հարաբերությունը
Ընդամենը ներկայացվել էր	136 (100%)
Հանքեր և հանքավայրեր	28 %
Ջրային տնտեսություն	20,6 %
Բենզա- և գազալցակայաններ	10,3 %
Շենքերի և շինարարություն	9,5 %
Ջեռուցման համակարգեր	7,3 %
Հայեցակարգեր	6,6 %
Արդյունաբերական ձեռնարկություններ	6,6 %
Ճանապարհային շինարարություն	4,4 %
Էներգետիկա	2,2 %
Գյուղատնտեսություն	2,2 %
Այլ տեսակներ	2,3 %

Անհրաժեշտ է նշել, որ ներկայացված հայտերից միայն մեկ դեպքում էր նախատեսված արտադրության վերակառուցում:

6.6 Վերլուծության ամփոփում

Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ ՇՄԱՓ համակարգի հիմնական տարրերը Հայաստանում ներդրված են, և համակարգը գործում է: Նույնը չի կարելի ասել ՇՄԱԳ համակարգի մասին:

Անփոփելիվ հաշվետվության 6-րդ բաժնի տարբեր ենթաբաժիններում նկարագրած ՇՄԱԳ համակարգի անարդյունավետության պատճառները՝ անհրաժեշտ է առանձնացնել.

- օրենսդրության անկատարությունը,
- պետական կառավարման համակարգի ցածր արդյունավետությունը,
- տնտեսական զարգացման ընդհանուր վիճակը, հատկապես կապիտալ ներդրումների անբավարար չափերը,
- հասարակական զարգացման բարդությունները, այդ թվում՝ կաշառակերությունը, սոցիալական անտարբերությունը, հասարակական ինստիտուտների ցածր կազմակերպվածությունը,
- որակյալ մասնագետների և այս ասպարեզում համբավ ունեցող մասնագիտական ընկերությունների պակասը:

ՇՄԱԳ համակարգը կարգավորող հիմնական ՇՄԱՓ մասին օրենքն ունի մի շարք էական թերություններ, որոնք բացասաբար են ազդում համակարգի արդյունավետության վրա: Դրանց թվին են պատկանում. փորձաքննությանը ենթակա գործունեության տեսակների ցուցակի անկատարությունը, տնտեսական գործունեության ՇՄԱԳ համար անհրաժեշտ ստանդարտների և նորմատիվային ակտերի պակասը, հասարակական լսումների իրականացման կարգի և կազմակերպման պայմանների բացակայությունը, բնապահպանական փորձաքննությունը կարգավորող իրավական ակտերի պակասը, ՇՄԱՓ պահանջների ապահովման պատժամիջոցների և մեխանիզմների անկատարությունը, ինչպես նաև օրենքի ներքին հակասությունները և անհամապատասխանությունը միջազգային կոնվենցիաների որոշ պահանջներին:

Անհրաժեշտ է նշել, որ ՇՄԱՓ իրականացման պատասխանատու «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ը պետք է համալրված լինի որակյալ, անկողմնակալ և օբյեկտիվ մասնագետներով, որոնք ունեն բավարար գիտական, արդյունաբերական և վարչական փորձ: Բացի այդ, անհրաժեշտ է փորձաքննության ասպարեզում իրականացնել ինստիտուցիոնալ և կառուցվածքային բարեփոխումներ: Փորձը նաև ցույց է տալիս, որ բոլոր դեպքերում լիզենզավորված փորձագետների ներգրավումը բարդացնում և երկարացնում է փորձաքննության ընթացքը:

ՇՄԱԳ համակարգի մասնակիցների հարցման արդյունքում կազմված օրենսդրության և դրա կիրառման պրակտիկայի վերլուծությունը, թերությունների նկարագրությունը և առաջարկությունները բերված են 6.2. Աղյուսակում:

Աղյուսակ 6.3. Երկրի ՇՄԱԳ օրենսդրության և ընթացակարգերի` ՇՄԱԳ պրակտիկայի հետ համեմատական վերլուծությունը

N	Խնդիրը	Ազգային օրենսդրությունը /ՇՄԱԳ համակարգ/	ՇՄԱԳ պրակտիկան	Թերությունները	Բարելավման առաջարկություններ
1.	Նախագծերի ընտրություն	ՇՄԱՓ մասին օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է բնապահպանական փորձաքննության ենթակա նախատեսված գործունեությունների ցուցակը		ՇՄԱՓ ենթակա գործունեությունների սահմանային չափերի անարդյունավետություն	Փոխել սահմանային չափերի համակարգը` համաձայն կիրառման պրակտիկայի: Բարելավել Բնապահպանության Նախարարության և Տեղական ինքնակառավարման գործադիր մարմինների համագործակցությունը:
2.	Նախնական գնահատում	Բացակայում է		Բացթողումներ օրենսդրության մեջ	Օրենսդրությամբ հստակորեն սահմանել նախնական գնահատման գործընթացը:
3.	Հասարակության մասնակցությունը ՇՄԱԳ գործընթացին	ՇՄԱՓ մասին օրենքի 6-րդ, 8-րդ և 10-րդ հոդվածներ	ՇՄԱՓ գործընթացում հասարակության ցածր ակտիվություն		Բարձրացնել Բնապահպանության Նախարարության օրենսդրական պա-տասխանատվությունը հասարակական լսումներ կազմակերպման հարցում:
4.	Որոշումների կայացում և բնապահպանական պլանավորում	ՇՄԱՓ մասին օրենքի 11-րդ հոդված	ՇՄԱՓ հանձնված փաստաթղթերի ցածր մակարդակ: Հանձնվող փաստաթղթերի մշակման պահանջների հետ կապված հաճախակի ուշացումներ	Փաստաթղթերի կազմը և բովանդակությունը որոշված չեն	Օրենսդրորեն հստակեցնել ՇՄԱԳ համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը: Փոխել ՇՄԱԳ ֆինանսավորման և ՇՄԱՓ վճարումների համակարգը:
5.	Հետորոշումային մոնիտորինգ	Կարգավորվում է ՇՄԱՓ մասին օրենքի 11-րդ հոդվածով և Բնապահպանության Նախարարության Կանոնադրությամբ	Նախատեսված գործունեության իրականացման բոլոր փուլերում հսկողության ցածր մակարդակ	ՇՄԱՓ մասին օրենքի պահանջների կատարման անարդյունավետություն	Լրացնել օրենքի դրույթները: Պետական Բնապահպանական Տեսչությունը սարքավորել ժամանակակից տեխնիկայով, խթանել որակավորված աշխատակիցների քանակի աճը:
6.	Պատասխանատվություն ՇՄԱԳ օրենսդրության խախտումների համար	Քրեական Օրենսգիրք: Վարչախախտումների մասին օրենք	Կիրառված վարչական միջոցների ցածր արդյունավետություն	Օրենքի ազդեցիկ հարկադրանքի բացակայություն: ցածր տույժեր	Ուժեղացնել օրենքի հարկադրանքը: ավելացնել ՇՄԱԳ օրենսդրության խախտման տույժեր:
7.	ՇՄԱԳ-ը անդրսահմանային ենթատեքստում	ՇՄԱՓ մասին օրենքի 14-րդ հոդված	ՇՄԱՓ մասին օրենքի 14-րդ հոդվածն ունի միայն պատմողական բնույթ	Երկկողմանի համաձայնագրերի բացակայություն	ՇՄԱԳ-ը անդրսահմանային համատեքստում կարգավորելու համար պայմանագրեր կնքել հարևան պետությունների հետ:

7 Շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատում /ՇՄԱՌԳ/

ՇՄԱՓ մասին օրենքի 15-րդ հոդվածը կարգավորում է նաև հայեցակարգերի փորձաքննությունը: Համաձայն Օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետի և 15-րդ հոդվածի 1-ին կետի՝ *հայեցակարգ* տերմինը ենթադրում է հայեցակարգային փաստաթղթեր, ծրագրեր, համալիր սխեմաներ և զարգացման ծրագրեր, տարածքային պլանավորման փաստաթղթեր և ռեսուրսների համալիր օգտագործման սխեմաներ, որոնք, համաձայն սահմանման, կարող են տեսակավորվել որպես ռազմավարական փաստաթղթեր:

Համաձայն Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի՝ հայեցակարգերը ռազմավարական զարգացման փաստաթղթեր են տնտեսության բոլոր ճյուղերի համար /ներառյալ բնապահպանական ճյուղը/, որոնք, համաձայն «Անդրսահմանային Ենթատեքստում ՇՄԱԳ մասին» Կոնվենցիայի և ՇՄԱՌԳ մասին դրա Արձանագրության, ենթակա են բնապահպանական գնահատման և փորձաքննության:

Տարբերվելով նախատեսված գործունեությունների փորձաքննության գործընթացից՝ հայեցակարգերը, նախքան փորձաքննության հանձնվելը, պետք է հրապարակվեն հեղինակի կողմից: Ոչ ավելի վաղ քան հրապարակումից 30 օր առաջ պետք է կազմակերպվեն հասարակական լուսմներ՝ հասարակական կարծիքը հաշվի առնելու համար: Լիազորված մարմինը, ունենալով հասարակական լուսմների արձանագրությունները, հայեցակարգի ներկայացումից հետո 90 օրվա ընթացքում կազմակերպում է փորձաքննություն և կայացնում համապատասխան որոշում:

ՇՄԱՓ մասին օրենքով սահմանված գործառույթների և նախատեսված գործունեությունների և հայեցակարգերի փորձաքննության համեմատական վերլուծությունը բացահայտել է մի շարք իրար հակասող դրույթներ և բացթողումներ, որոնք պետք է վերանայվեն կամ լրամշակվեն: (i) Ռազմավարական նշանակություն ունեցող և մեկ կամ ավելի համայնքների կամ տարածքների, ինչպես նաև ամբողջ երկրի վրա բնապահպանական ազդեցության հնարավորություն ունեցող գործունեությունների հայեցակարգային փաստաթղթերին փորձագետները բնականաբար հատկացնում են ավելի շատ ժամանակ և ուշադրություն: Բայց Օրենքը սահմանում է հակառակը. հայեցակարգերի փորձաքննությունը պետք է տևի 90 օր, մինչդեռ նախատեսված գործունեությունը կարող է գնահատվել 120-180 օրում: (ii) Նախատեսված գործունեության փորձաքննության ընթացքում հասարակական լուսմներ պետք է անցկացվեն բոլոր երեք փուլերում, մինչդեռ հայեցակարգերի դեպքում պահանջում է միայն մեկ լսում, չնայած այն փաստին, որ քննարկումների ժամանակ հայեցակարգերը ավելի շատ փոփոխություններ են կրում՝ քննարկումների բազմաշերտության պատճառով /ձեռնարկող կազմակերպության մշակումից մինչև Կառավարության, Ազգային Ժողովի և Նախագահի հաստատումը/: (iii) Օրենսդրությունը սահմանում է, որ նախատեսված գործունեության փորձաքննության գործընթացին լիազորված մարմիններից բացի կարող են մասնակցել նաև այլ անձինք կամ կազմակերպություններ: Հայեցակարգերի փորձաքննության գործընթացի դեպքում դա նախատեսված չէ: Արդյունքում հիմնական փաստաթղթերի փորձաքննությունն անց է կացվում առանց արտասահմանյան անաչառ, հմուտ և ավելի փորձված մասնագետների: Այդպիսի փորձագետները մասնակցում են պակաս կարևոր փաստաթղթերի փորձաքննությանը: Այս անտրամաբանական մոտեցումը պետք է ուղղվի:

Օրենքի թերություններից է, որ այն հստակ նշում է նախատեսված գործունեության փաստաթղթերի փորձաքննության բոլոր մասնակիցներին /սկսած հասարակությունից, համայնքից, տեղական ինքնակառավարման մարմիններից մինչև Կառավարություն/, մինչդեռ հայեցակարգային փաստաթղթերի փորձաքննության մասնակիցների հարցը, որն ունի զգալի ռազմավարական կարևորություն, հստակեցված չէ:

Հայաստանը չունի ՇՄԱԳ-ի մեթոդաբանություն: Փորձաքննության ընթացքում օգտագործվում են ՇՄԱԳ մոտեցումներ: ՇՄԱԳ իրականացման միակ դեպքը ջրի մասին օրենքի ՇՄԱԳ-ն է, որը կատարվել է «Ջինջ» ՍՊԸ կողմից ԱՄՆ Միջազգային Ջարգացման Ծրագրի հովանավորությամբ: «Ջինջ» ՍՊԸ խորհրդատվական ընկերություն է: ԱՄՆ Միջազգային Ջարգացման Ծրագրի ֆինանսավորմամբ այն նշակեց Ջրային Օրենսգրքի Հայեցակարգը, որն այնուհետև քննարկվեց տարբեր ֆորումներում, և դրա մի որոշակի մասն օգտագործվեց Ջրային Օրենսգրքի նշակման ժամանակ:

8 Երկրի ՇՄԱԳ համակարգը և Եվրամիության ստանդարտների հետ ներդաշնակելու հնարավորությունները

ՇՄԱԳ համակարգը կարգավորող ՀՀ օրենսդրությունը հիմնվում է նախկին ԽՍՀՄ ստանդարտների, հասկացությունների և ենթաօրենսդրական ակտերի վրա: Ներկայումս Հայաստանը գտնվում է համակարգի զարգացման հաջորդ փուլում, եր իրականացվում է գոյություն ունեցող օրենքների շտկումը և Եվրամիության ստանդարտների և պահանջների հիման վրա նոր օրենսդրության ստեղծումը: ՇՄԱԳ համակարգը կարգավորող հիմնական Եվրոպական օրենսդրական ակտերն են. 1985 թ. հունիսի 27-ի ԵԽ Հրահանգ, 1997 թ. ԵԽ 97/11/ EC Հրահանգ, 1996 թ. սեպտեմբերի 24-ի ԵԽ 96/61/EC Հրահանգ, 2003 թ. մայիսի 26-ի Եվրոպական խորհրդարանի և ԵԽ 2003/35/EC Հրահանգ և Եվրամիության այլ Հրահանգներ, որոնք սահմանում են հասարակական և մասնավոր գործունեության՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման սկզբունքները, ինչպես նաև որոշումների կայացման գործընթացում հասարակության մասնակցությունը:

Ստորև բերված աղյուսակը պարունակում է Հայաստանի ներկայիս օրենսդրության և ԵՄ համապատասխան ղեկավար փաստաթղթերի պահանջների համեմատական վերլուծությունը:

Աղյուսակ 8.1.Երկրի ՇՄԱԳ օրենսդրության և ընթացակարգերի՝ Եվրամիության պահանջների հետ համեմատական վերլուծությունը

#	Խնդիրը	Ազգային օրենսդրությունը /ՇՄԱԳ համակարգ/	Եվրամիության պահանջներ և ընթացակարգեր	Մեկնաբանություններ
1.	Քննարկվող օրենսդրական փաստաթղթերը	ՇՄԱՓ մասին Օրենք, /1995/ «Բնապահպանական փորձաքննության ենթակա նախատեսված գործունեությունների սահմանային չափերը» Կառավարության Հրաման /1999/	1985 թ. հունիսի 27-ի եւս 85/337/EEC Հրահանգ որոշակի հասարակական և մասնավոր նախագծերի ՇՄԱԳ-ի մասին: 1985 թ. հունիսի կի 85/337/EEC Հրահանգը լրացնող 1997թ. մարտի 3-ի եւս 97/11/EC Հրահանգ որոշասարակական և մասնավոր նախագծերի ՇՄԱԳ-ի մասին: 1996թ. սեպտեմբերի 24-ի եւս 96/61/EC Հրահան աղտոտման կանխման և հսկողության միասնական համակարգի մասին: Եվրոպական Խորհրդարանի և եւս 2003 թ. մայիսի 26-ի 2003/35/EC Հրահանգը հասարակական մասնակցության և արդարության մատչելիության վերաբերյալ եւս 85/337/EEC և 96/61/EC Հրահանգները լրացնող և բնապահպանության հետ կապված որոշակի պլանների և ծրագրերի նախագծման հետ կապված հասարակական մասնակցություն ապահովելու մասին:	
2.	ՇՄԱԳ կիրառելիությունը	ՇՄԱԳ նպատակն է՝ հայտնաբերել, կանխարգելել կամ նվազեցնել նախատեսված գործունեության վնասակար ազդեցությունը մարդու առողջության, շրջակա միջավայրի, տնտեսական և հասարակական զարգացման վրա /ՇՄԱՓ մասին օրենքի 2.1 հոդված/	Եվրամիության 97/11/EC Հրահանգի կողմից լրացված 85/337/EEC Հրահանգը վերաբերում է այն հասարակական և մասնավոր նախագծերի բնապահպանական ազդեցությունների գնահատմանը, որոնք կարող են շրջակա միջավայրի վրա զգալի ազդեցություն ունենալ /Հոդված 1/: Այդ գործունեությունները սահմանված են Հրահանգի 1-ին և 2-րդ հավելվածներում՝ համաձայն Հրահանգի 4-րդ հոդվածի:	
3.	ՇՄԱԳ/նախագծերի ընտրության ենթակա գործունեությունների տեսակը	ՇՄԱՓ մասին Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է բնապահպանական փորձաքննության ենթակա նախատեսված գործունեությունների ցուցակը	Գործունեության տեսակների ցանկը տրված է Հրահանգի 1-ին Հավելվածում, սակայն 4 /2/ Հոդվածը նաև ունի ընդլայնման հնարավորություն, համաձայն որի՝ 2-րդ Հավելվածում թվարկված գործունեությունները նույնպես կարող են ՇՄԱԳ ենթակա լինել	
4.	Նախնական գնահատում	Բացակայում է Օրենսգրքում		ՇՄԱՓ մասին նոր օրենքի նախագիծը քննարկվում է
5.	Գնահատման առարկան, Բնապահպանական ուսումնասիրություններ	ՇՄԱՓ մասին Օրենքի 5-րդ հոդվածը սահմանում է ՇՄԱՓ շրջանակները	5-րդ Հոդված + Հրահանգի 4-րդ Հավելված	
6.	Ազդեցության կառավարում և նվազեցում	Բնապահպանական վտանգի կրճատման միջոցառումները կարգավորվում են Ջրային, Հողային, Անտառային օրենսգրքերով և Սթրուկտուրային Օդի պահպանության մասին Օրենքով	5-րդ Հոդված + Հրահանգի 4-րդ Հավելված	ՇՄԱՓ մասին նոր օրենքի նախագիծը քննարկվում է
7.	Հասարակության մասնակցություն	ՇՄԱՓ մասին օրենքի 6-րդ, 8-րդ և 10-րդ հոդվածները	Հրահանգ 2003/35/EC	
8.	Հետորոշումային մոնիտորինգ	Կարգավորվում է ՇՄԱՓ մասին օրենքի 11-րդ հոդվածով և Բնապահպանության Նախարարության Կանոնադրությամբ	Հրահանգի 8-րդ հոդված	

Օրենքների և ենթաօրենսդրական ակտերի հետ միասին, ամբողջ գործընթացում կարևոր դեր են խաղում նաև այլ օրենսդրական պահանջներ, այսինքն՝ ստանդարտներ, տեխնիկական նորմեր, մեթոդաբանություններ, տարբեր ուղղորդող փաստաթղթեր, այլ կերպ ասած՝ այն նորմատիվ-մեթոդաբանական և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերը, որոնք ապահովում են միջազգային և ազգային օրենսդրությունների կիրառումը:

Նորմատիվ-մեթոդաբանական և նորմատիվ-տեխնիկական հիմք ունենալու և կիրառելու պահանջը ամրագրվում է և՛ միջազգային, և՛ ազգային օրենսդրություններում: Այնուամենայնիվ, ՇՄԱԳ գործընթացը կարգավորող նորմատիվ-մեթոդաբանական և նորմատիվ-տեխնիկական կիրառման օրենսդրական կարգավորումը չափազանց հստակ և բավարար չէ: ՇՄԱԳ գործընթացի նորմատիվ-մեթոդաբանական և նորմատիվ-տեխնիկական հիմքը համարյա ամբողջովին բացակայում է: Ներկայումս Հայաստանում կիրառվում են նախկին ԽՍՀՄ-ում ընդունված նորմատիվ-մեթոդաբանական և նորմատիվ-տեխնիկական ակտերը:

Այնուամենայնիվ, ստանդարտների և ենթաօրենսդրական ակտերի օրենսդրական հիմնավորման գործողությունները ընթացքի մեջ են: «ՀԱԿ-ի հիմնադրման Մարոկկոյի համաձայնագրի և ՀԱԿ-ին անդամակցության արձանագրության» ընդունումից հետո զգալի աշխատանք է կատարվել գոյություն ունեցող օրենսդրությունը նշված փաստաթղթերին պահանջներին համապատասխանեցման ուղղությամբ, որպեսզի երկիրը կարողանա կատարել ստանձնած պարտավորությունները:

Այս շրջանակներում ներկայումս Հայաստանում կիրառվում են հետևյալ փաստաթղթերը.

- Ստանդարտացման մասին ՀՀ Օրենք
- ՀՀ-ում չափումների միասնականության ապահովման մասին Օրենք
- Նորմատիվ պահանջների արտադրանքի և ծառայությունների համապատասխանության հավաստման մասին ՀՀ Օրենք

Համաձայն **Ստանդարտացման մասին ՀՀ Օրենքի**՝ իրավական և ֆիզիկական անձինք առանց բացառության ունեն ստանդարտներ մշակելու իրավունք: Որոշ բնագավառների ստանդարտներ մշակվում են նաև Ստանդարտացման տեխնիկական մարմինների կողմից: Հայաստանի ազգային ստանդարտները հաստատվում են ՀՀ Կառավարության կողմից լիազորված և ISO միջազգային կազմակերպության կողմից ճանաչված ազգային ստանդարտացման մարմնի կողմից:

Միջազգային /ISO/, տարածաշրջանային /Եվրամիություն/ և ԱՊՀ երկրների /GOST/ ստանդարտների կիրառումը ապահովվում է ազգային ստանդարտացման մարմինը շահառուների հետ համաձայնեցնելուց հետո:

ԱՊՀ երկրների ստանդարտների կիրառումը ապահովվում է Մոսկվայում 1992 թ. մարտի 13-ին ընդունված « Ստանդարտացման, չափումնաբանության և սերտիֆիկացման մասին» համաձայնության հիման վրա:

Օրենքով ամրագրված ստանդարտացման նպատակներից մեկը շրջակա միջավայրի, կյանքի, առողջության և սեփականության պաշտպանության համար արտադրանքների, աշխատանքների և ծառայությունների անվտանգությունը ապահովելն է: Համապատասխան պահանջները պետք է ամրագրվեն տեխնիկական ակտերով:

ՀՀ-ում չափումների միասնականության ապահովման մասին Օրենքի համաձայն՝ Հայաստանում չափումների միասնականացման նպատակներից մեկը մարդու կյանքի,

առողջության և շրջակա միջավայրի պահպանումն է և զբաղվածության անվտանգության ապահովումը: Այս բնագավառում պետությունը իրականացնում է հսկողություն և վերահսկողություն՝ միասնական չափումների օգտագործումն ապահովելու համար և չափման կարգավորումների և նորմերի խախտումները բացահայտելու և կանխարգելելու համար:

Նորմատիվ պահանջների արտադրանքի և ծառայությունների համապատասխանության հավաստման մասին ՀՀ Օրենքի հիմքը կազմող պահանջների նպատակներն են՝ քաղաքացիների կյանքը և առողջությունը և շրջակա միջավայրի, բուսական և կենդանական աշխարհի պահպանությունը ապահովելը:

Համապատասխանեցման ենթակա արտադրանքների և ծառայությունների համապատասխանությունը հաստատելու մեթոդները ամրագրված են հայտարարագրման և վկայագրման գործընթացներում:

Բնապահպանական կառավարման համար ISO 14000 միջազգային ստանդարտների մշակումը և կիրառումը, ինչպես նաև բնապահպանական համակարգերի վկայագրման գործընթացները ներկայումս Հայաստանում ընթացքի մեջ են: Նաև կատարվում են բնապահպանական բնագավառում տեխնիկական ակտերի մշակման և կիրառման աշխատանքներ: Առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունում հիմնվել է ՀԱԿ-ի և ԵՄ-ի հետ համագործակցության բաժին:

Եվրոպական և միջազգային ստանդարտների համաձայն ազգային տեխնիկական ակտերի և ստանդարտների մշակումը և կիրառումը ապահովելու համար պետք է իրականացվեն համապատասխան ծրագրեր, որոնք կուսումնասիրեն և կվերլուծեն բնապահպանության և ՇՄԱԳ գործընթացի հետ կապված ազգային և միջազգային նորմատիվ-մեթոդաբանական և նորմատիվ-տեխնիկական ակտերը: Պետք է սահմանել նաև դրանց զարգացման անհրաժեշտությունը, այս գործունեությունները ղեկավարելու գրաֆիկները, դրանց կատարման ֆինանսավորման ծավալը և աղբյուրները, ինչպես նաև առանձին միջազգային օրենսդրական ակտերի անհապաղ կիրառման հնարավորությունը:

Եվրոպական և միջազգային ստանդարտների հետ համատեղելի ազգային տեխնիկական ակտերի և ստանդարտների մշակումը և կիրառումը կարիք ունի երկարաժամկետ փուլային մոտեցման, ինչպես նաև զգալի ֆինանսական միջոցների ներդրման:

9 Եզրակացություններ և առաջարկություններ

ՇՄԱԳ համակարգի և դրա հետ կապված օրենսդրական ակտերի վերլուծության վրա հիմնվելով՝ կարելի է եզրակացնել, որ համակարգը չունի բավարար նորմատիվ-օրենսդրական հիմք: Ներկայիս օրենսդրությունը ՇՄԱԳ կատարման համար չի ապահովում պատշաճ օրենսդրական և տնտեսական հիմքեր և արդյունավետ մեխանիզմներ և այդպիսով չի նպաստում շրջակա միջավայրի բարելավմանը և երկրի հասարակական-տնտեսական կայուն զարգացմանը: Այն նաև չի ապահովում օրենսդրական և տնտեսական հիմքեր ՇՄԱԳ համար:

ՇՄԱԳ հետ կապված օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ այն ունի բազմաթիվ թերություններ, որոնք վերանայման կարիք ունեն: ՇՄԱԳ գործընթացի կարգավորման համար հիմնական պահանջները, մեխանիզմները և մեթոդիկական բացակայում են: Նախ և առաջ անհրաժեշտ է բարելավել համապատասխան օրենսդրությունը՝ ՇՄԱԳ գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու համար:

Հիմնական առաջարկություններն են.

- Որոշակիացնել օրենքով կարգավորվող բնագավառները, ինչը տարբերակում կմտցնի բնապահպանական փորձաքննության ՇՄԱԳ և ՇՄԱՌԳ հայեցակարգերի միջև, և այսպիսով ՇՄԱԳ և ՇՄԱՌԳ ևս կդառնան Օրենքով կարգավորվող բնագավառներ;
- Սահմանել բնապահպանական փորձաքննության ՇՄԱԳ և ՇՄԱՌԳ իրականացման բնագավառում կարգավորման ենթակա իրավահարաբերությունների սուբյեկտները, դրանց իրավունքները և պարտականությունները;
- Սահմանել բնապահպանական փորձաքննության, ՇՄԱԳ և ՇՄԱՌԳ նպատակները, սկզբունքները և խնդիրները;
- Ամրագրել բնապահպանական փորձաքննության դերը՝ որպես ՇՄԱԳ և ՇՄԱՌԳ ճշգրտությունը ստուգելու պետական պարտադիր գործառույթ;
- Դասակարգել ՇՄԱԳ և ՇՄԱՌԳ գործընթացները տարբեր ընթացակարգերով և ժամկետներով՝ համաձայն շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցության չափերի՝ բացառելով նախատեսված գործունեությունների նկատմամբ սահմանային չափերի կիրառումը;
- Սահմանել բնապահպանական փորձաքննության, ՇՄԱԳ և ՇՄԱՌԳ կատարման կանոնակարգը, մեթոդաբանությունը, մեխանիզմները և սահմանափակումները, ՇՄԱԳ և ՇՄԱՌԳ գործընթացների պահանջները՝ հասարակության իրազեկության վերաբերյալ և հասարակության և ազդակիր համայնքների կարծիքները հաշվի առնելու պայմանը, ՇՄԱԳ իրականացման և որոշումների կայացման ընթացքում հետադարձ կապը, ֆինանսական անկախության պահանջները, հսկողության և վերահսկողության պահանջները, ինչպես նաև օրինախախտումների համար պատասխանատվության ձևերը;
- Հստակ սահմանել (i) փուլերը; (ii) ժամկետները; (iii) հիմնավորված մեթոդների, շինարարական նորմերի, ցուցիչների և կառավարման պլանների գործածելիության պահանջները; (iv) հատուկ կարգավիճակի տարածքներում ՇՄԱԳ իրականացման առանձնահատկությունները; (v) ՇՄԱԳ իրականացման առանձնահատկությունները անդրսահմանային ազդեցության դեպքում; (vi) ՇՄԱԳ իրականացման համար լրանջակման փուլ և այլընտրանքային տարբերակներ; (vii) ՇՄԱԳ-երը զեկույցի ձևով ներկայացնելու պահանջ:

Ի լրումն այս ամենի՝ պահանջվում է.

- Հիմնադրել ՇՄԱԳ ազգային կենտրոն, որը կապահովի մասնագետների վերապատրաստումը, կստեղծի տվյալների բազաներ, կապահովի խորհրդատվություն և այլընտրանքային, ներառյալ հասարակական, փորձաքննություն, կօզմի ՇՄԱԳ մեջ մասնագիտացած ոչ կառավարական կազմակերպությունների ստեղծմանը և կկատարի այլ գործառույթներ:
- Ապակենտրոնացնել բնագավառի ղեկավարումը՝ մեծացնելով շրջանային ղեկավարության և տեղական ինքնակառավարման մարմինների դերը:
- ՇՄԱԳ մասնակիցների համար նշակել արտոնագրման համակարգ:

Նաև առաջարկվում է ՇՄԱԳ և փորձաքննության կատարման համար ապահովել պետական ֆինանսավորում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Եվրոպական տնտեսական հանձնաժողով: Հայաստանի վերաբերյալ Բնապահպանական զեկույց. /քննարկվել և ընդունվել է Բնապահպանական քաղաքականության Հանձնաժողովի 7-րդ նիստում/ www.unece.org/env/documents/2003/eia/wg.1/mp.eia.wg.1
2. ՀՀ բնապահպանության նախարարություն: Ազգային զեկույց: 2002թ.
3. Նախարարության հաշվետվություն, Օրհուսից մինչև Կին: 2003թ.
4. «Հանուն մարդկային կայուն զարգացման» ասոցիացիա: Հայաստանում կայուն զարգացման հայեցակարգ: Երևան, 2002, ՄԱԲԾ ազգային հանձնաժողով:

Ազգային օրենսդրություն

5. «Բնության պահպանության մասին օրենսդրության հիմունքները» (9.08.1991, Երևան)
6. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենք (20.11.1995, Երևան)
7. «ՇՄԱՓ իրականացնող լիազորված պետական մարմնի մասին» ՀՀ կառավարության 1996 թ. հոկտեմբերի 30-ի N345 որոշում
8. «ՇՄԱՓ մասնագիտական իրավասության հավաստագիր տալու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 1996 թ. դեկտեմբերի 20-ի N386 որոշում
9. «ՇՄԱՓ ենթակա նախատեսվող գործունեությունների սահմանային չափերի մասին» ՀՀ կառավարության 1999 մարտի 30-ի N193 որոշում
10. «ՇՄԱՓ իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ բնապահպանության նախարարի 2002 թ. նոյեմբերի 13-ի N151 հրաման
11. «Մի շարք բնապահպանական կոնվենցիաներից բխող ՀՀ պարտականությունների կատարման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 1998 թ. փետրվարի 25-ի N115 որոշում
12. «ՇՄԱՓ եզրակացությունը վերանայելու կամ չեղյալ հայտարարելու պայմանները, ժամկետները և արարողակարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2003 թ. մայիսի 8-ի N.701-Ն որոշում
13. «ՇՄԱՓ մասնագիտական իրավասության հավաստագրի տրման հանձնաժողովի կազմի և դրա գործունեության կարգի հաստատման մասին» ՀՀ բնապահպանության նախարարի 1997 թ. մարտի 6-ի N.28 հրաման
14. «ՇՄԱՓ մասնագիտական իրավասության հավաստագրի տրման հանձնաժողովի վրա, նաև ՇՄԱՓ եզրակացության հաստատման գործառույթի տրման մասին» ՀՀ բնապահպանության նախարարի 1997 թ. հուլիսի 22-ի N.79 հրաման
15. «ՇՄԱՓ մասնագիտական իրավասության հավաստագրի տրման հանձնաժողովի նոր կազմ հաստատելու մասին» ՀՀ բնապահպանության նախարարի 1997 թ. հոկտեմբերի 22-ի N.137 հրաման
16. «ՇՄԱՓ եզրակացության տրման հանձնաժողովի գործունեության ժամանակավոր կարգը հաստատելու մասին» ՀՀ բնապահպանության նախարարի 1997 թ. հոկտեմբերի 28-ի հրաման
17. «Անդրսահմանային կոնտեքստում ՇՄԱԳ մասին» կոնվենցիայից բխող ՀՀ պարտականությունների կատարման նպատակով կոորդինացիոն հանձնաժողով ստեղծելու մասին» ՀՀ բնապահպանության նախարարի 1999 թ. հոկտեմբերի 12-ի N.131 հրաման
18. «Բնապահպանական փորձաքննություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը և սեփականության իրավունքով հանձնվող գույքի կազմը հաստատելու մասին» ՀՀ բնապահպանության նախարարի 2002 թ. դեկտեմբերի 30-ի N.196 հրաման

Այլ գրականություն

19. Սոցիալ-Էկոլոգիական ասոցիացիա: «Տվյալների բազա լիարժեք բնապահպանական փորձաքննության համար»: (2002, Երևան).
20. Շրջակա միջավայրի իրավական պահպանության կենտրոն: «Հայաստանի Հանրապետության էկոլոգիական իրավունք»: Նորմատիվ իրավական ակտերի ժողովածու: (2000, Երևան).
21. Շրջակա միջավայրի իրավական պահպանության կենտրոն: «Բնապահպանական որոշումների կայացմանը հասարակության մասնակցության ձեռնարկ»: (1999, Երևան)
22. Աիդա Իսկոյան: «Հասարակության մասնակցությունը Հարավային Կովկասի երկրներում բնապահպանական հարցերի առնչությամբ որոշումների կայացմանը» (2001, Թբիլիսի, ՌԷԿ-Կովկաս).
23. Աիդա Իսկոյան: «Հայաստանի Հանրապետության էկոլոգիական օրենսդրությունը»: (1994, Երևան)
24. Դեպի ժողովրդավարություն: Ձեռնարկ Արևելյան Եվրոպայի երկրների համար: «Հայաստանում, Բելոռուսիայում, Սլովակիայում, Ռուսաստանում և Ուկրաինայում բնապահպանական հարցերի առնչությամբ որոշումների կայացմանը հասարակության մասնակցության օրենսդրությունը և պրակտիկան»:
25. Բ.Ղազարյան. «Շրջակա միջավայրի ազդեցության գնահատում: Հայաստանի օրենսդրության և ՇՄԱԳ ներդրման վերլուծությունը»: (2002, Կոբուլետի)
26. Բ.Ղազարյան և ուրիշներ. «Շրջակա միջավայրի ազդեցության գնահատումը Հայաստանի ջրային օրենսգրքում»: ԱՄՆ ՄՁ, զեկույց, «Ջինջ», Երևան, 2002
27. Բ.Ղազարյան: «ՇՄԱԳ օրենսդրական բազան»: Միջազգային խորհրդաժողով: ՄԱԲԾ/Միջազգային ծրագրերի կենտրոն (ԱՊՀ). Մոսկվա, 2002
28. ՇՄԱԳ ձեռնարկ ԱՊՀ մասնակից երկրների համար: ՄԱԲԾ/ԱՊՀ. Մոսկվա, 2003
29. Բ.Ղազարյան, Ն.Ալավերդյան: «ՇՄԱԳ ՀՀ-ում»: Տարածաշրջանային խորհրդաժողով: Պրահա, 2003
30. Բ.Ղազարյան: «Շրջակա միջավայրի գնահատումը ծրագրերում և նախագծերում, այդ թվում անդրասահմանային ենթատեքստում»: ՄԱԲԾ/ԱՊՀ. Մոսկվա, 2003
31. «Շրջակա միջավայրի գնահատումը նախագծերում և բնապահպանական ասպարեզի քաղաքական զարգացումները». Գործնական ձեռնարկ: Փարիզ, 1997
32. «Շրջակա միջավայրի գնահատման սկզբունքը» խորհրդաժողովի նյութերը: Երևան, 1999.
33. «ԱՊՀ երկրների օրենսդրությունը - բնապահպանական գնահատման համապատասխանեցումը»: միջազգային խորհրդաժողովի նյութերը: ՄԱԲԾ/ԱՊՀ. Մոսկվա, 2001
34. Ջոն Ա. Դիքսոն, Լուիզա Ֆալոն Սկուրա, Ռիչարդ Ա. Կարպենտեր, Փոլ Բ. Շերման: «Շրջակա միջավայրի վրա ազդեցության տնտեսական վերլուծությունը»: Մոսկվա, 2000
35. Ջեյմս Ռոբերտս: «Ինչ է սա», 1993, ԱՄՆ
36. Վինոդ Թոմաս և ուրիշներ: «Աճի որակը»: «Ամբողջ աշխարհը», Մոսկվա, 2001
37. Հայաստան: Բնապահպանական միջոցառումների ազգային ծրագիր: Հիմնական զեկույց: Համաշխարհային բանկ, Վաշինգտոն, 1999
38. Օ.Մ.Չերպ, Մ.Վ.Խոտուլով, ուրիշներ: «Շրջակա միջավայրի գնահատում և փորձաքննություն», Մոսկվա, 2001
39. ՀՀ ՇՄԱԳ զեկույց: Օրենսդրությունը և դրա կատարելագործումը: «ՇՄԱԳ օրենսդրության զարգացումը»: Ծրագիր: Թրանսսփարենսի-Ինտերնեշնլ, Հայաստան, 2003
40. Ս.Ա.Խորոջայա: «Բնապահպանական վտանգի գնահատման եղանակները»: Մոսկվա, 1998
41. Նախագծման բնապահպանական նորմերը և կանոնները: Ձեռնարկ: Մոսկվա, Ստրոյիզդատ, 1990
42. Վ.Վ.Գլուխով, Տ.Վ.Լիստչկինա, Տ.Պ.Նեկրասովա: «Շրջակա միջավայրի տնտեսական հիմքը»: Սանկտ-Պետերբուրգ, 1997

43. Ն.Գ.Սմոլյանինով, Վ.Ի.Տագասով: «Կենսագործունեության անվտանգությունը»: Մոսկվա, 1997
44. Օդային ավազանի պահպանության միջոցառումների փորձաքննության նորմատիվային և մեթոդաբանական փաստաթղթերի ժողովածու: Հիդրոմետեոիզդատ, 1986
45. Շինարարական նորմեր և կանոններ: Քաղաքաշինություն: 1989
46. Բ.Սադլեր. «ՇՄԱԳ եզրափակիչ զեկույցի արդյունավետության միջազգային ուսումնասիրություն – շրջակա միջավայրի գնահատումը փոփոխվող աշխարհում», 1996
47. Զ.Վուդ, Ա.Բարկեր, Ս.Ջոնս, Ջ.Հյուզս, «ՇՄԱԳ գործընթացի իրականացման գնահատում»: ՇՄԱԳ կենտրոն, Մանչեստեր, 1996 <http://europa.eu.int/comm/environment/eia/eia-studies-and-reports/eiaperform.pdf>
48. ՄԱԲԾ ՇՄԱԳ ռեսուրսների ուսուցման ձեռնարկ: ՄԱԲԾ, 2002: <http://www.ea.gov.au/assessments/eianet/unepmanual/manual/index.html>
49. ՄԱԲԾ ՇՄԱԳ. Խնդիրներ, միտումներ և պրակտիկա: Սկոտ Վիլսոն ռեսուրս խորհրդատվություն, Ռոն Բիսեթ, ՄԱԲԾ, Բնապահպանություն և տնտեսագիտություն: Հունիս, 1996 <http://www.ea.gov.au/assessments/eianet/unepmanual/bisset/index.html>
50. ԵԸ: ՇՄԱԳ և ընտրության ուղեցույց: Բնապահպանական Հանձնաժողով: ERM ՍՊԸ., հունիս, 2001 <http://europa.eu.int/comm/environment/eia/eia-guidelines/g-screening-full-text.pdf>
51. ԵԸ: ՇՄԱԳ և ռադիոակտիվ թափոնների երկրաբանական կուտակիչներ: ERM ՍՊԸ., հունիս, 2001 http://europa.eu.int/comm/energy/nuclear/pdf/eia_report_vol1.pdf